



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Q. Onizuki 4207  
Aug 1886, 1905

891.99  
U. 94

200-1

891.99  
0-94

6 NOV 2011

ԳԱՅՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ

# ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱՁՈՎ

ԵՐԵՐԴԻ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղղած

ԹԻ ՓԼԻԶ  
ԱՐԱԴԱՏԻՊ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ  
ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 12

1905

31

N S U

726

## Ա Մ Ա Խ Ս Ի Ն Ն Ե Բ

ԿԱ.ՏԱ.ԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Առաջին անգամ ներկայացրել են Թատերասէրները՝ Թիֆ-  
լիզի Արքունական Թատրոնում, 1890 թուի Յունուարի  
29-ին, յօդուտ Հայոց Դրամատիկական Ընկերութեան:

891.99  
U-94

# ԱՄՈՒՍԻՆԵՐ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱՁՈՎ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուղած

1905 38254  
38254

ԹԻՖԼԻԶ  
ԱՐԱԴԱՏԻԴ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ  
ՊՈՒՃԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ, 12

1905

# ԴԱՅԱՐԱԿԱՆ

ԱՌԵՎԱՐԱՐՈՒ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՐ

ԱՐԱՐԱՐ ԱՐԱՐ

ԱՐԱՐԱՐ ԱՐԱՐ

ԱՐԱՐԱՐ ԱՐԱՐ

901650  
Дозволено цензурою. Тифлисъ, 26 Апрѣля 1905 г.

Տիկին Սոֆիև Սուխովուկեանին

Անզուգական իմ Սօֆի.

«Եմոսիմներ» կատակերգութեան  
բնագիրը եւ առյօնեցի Քեզ՝ մեր ամուսնու-  
թեան քահանիակամիայ տարեդարձին։

Այժմ, հասարակաց սեպհականութիւն  
դարձնելով այս երկը, եւ լծոյ եմ՝ տաշին  
ինձ վերատիճ Քո անարատ անունով զար-  
դարել սրան։

Թո՞ղ Քո մարուր կենցաղը պաշտպանէ  
գրուածքին իմաստն ու նպառակը եւ  
լծոյ Քո բարեկրթութեան ձառագայթը  
դասագարդէ այն պատկերները, որ եւ  
ակարագրել եմ սրա մեջ։

Քո Դաշրիկը։

## ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

ԿՈՑՈՒՅԹՈՒԹԻՒՆ ԶՈՐԱ ԸՐԵԲՈՒՅԹՈՎ

Թիֆլիզի թատրոն, 1890 թ. Յունուարի 29-ին:

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԱՐԴԱՇԻ ՍԱՄՍՈՆԵԱՆ, Աշանաւոր  
պաշտօնեայ . . . . . Պ. Պ. ՔԱՂԱԿԱՐԵԱՆ

ՄԱՐԴԱՐԻՑ, Կրա կինը . . . . . Օր. Ե. ՆԱԶԱՐԵԿԵԱՆ  
ԱԲԵԼ ՄԱՍՏԱԿԵԱՆ, Սամսոնեանի

ստորագրեալ . . . . . Պ. Ա. ՄԱՆԴԻՆԵԱՆ  
ԷԼԻԶ, Կրա կինը . . . . . Օր. Ջ. ԽԻԹԱՐԵԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐՎԱՌԵԱՆ, այրի կին. Տ. Մ. ԽՈՍՐՈՎԵԱՆ  
ՀԵՂԻՆԵԼ - ԱՆԹԱՌԱՄ, որը աղջիկ,

վարժուհի . . . . . Տ. Հ. ԱԹՈՎԴԻԿԵԱՆ  
ԱՐՏԱԶԵԿ ԱՐԱՄԵԱՆ, սպայ . . . . . Պ. Վ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԼԵԽՈՆ ԾԻՐԱԿԵԱՆ, գիւղաւուսես . . Պ. Ն. ՏԻԳՐԱՆԵԱՆ \*

ՍԵՍԻԼ, աղախին. . . . . . Օր. Մ. Մ.-ԱՍԻԿԵԱՆ  
ԱՆԱՀԻՑ, մի ուրիշ աղախին . . . . . Օր. Մ. ՀԵՂՈՒԹԵԱՆ

ՄՊԱՍԱՒՈՐ . . . . . . Պ. Գ. ՄԻՐԱՋԵԱՆ

Առաջին արարուածը կատարվում է «Ժողովարանի» այգում;

Երկրորդն ու երրորդը Սամսոնեանի տանը, իսկ չորրորդը

Մարգարտի եւ Հեղինելի կացարանում:

Անցը պատահում է Թիմիկում:

\* ) Այստեղ բաց են թողնվում երկու խումբ օրիորդների

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՅ ՀԱՍՏԱԿԵ

Արկադի<sup>v</sup> 42 տարեկան:

Մարգարիտ<sup>v</sup> 25 տ.

Արել<sup>v</sup> 50 տ.

Էլիո<sup>v</sup> 27 տ.

Վարդուհի<sup>v</sup> 30 տ.

Հեղինէ<sup>v</sup> 22 տ.

Արտաշէս<sup>v</sup> 30 տ.

Լեռն<sup>v</sup> 28 տ.

Գայիանէ<sup>v</sup>

Լուսիկ<sup>v</sup> 20—22 տ.

Աստղիկ<sup>v</sup>

Անուշ<sup>v</sup> 18—20 տ.

Հոփիսօ

Մէսիլ<sup>v</sup> 20 տ.

Անահիտ<sup>v</sup> 30 տ.

Վաղաստոր<sup>v</sup> 45 տ.

Ամենքն էլ եւրոպական հագուստներով:

և նրանց գերակատարների անունները, որոնք հետհետ-ներն են.

ԳԱՅԻԱՆԻ<sup>v</sup> մի խումբ . . . . . 0լ. մ. ԳՈՒԼԻՖԱՆԵՐՆ

ԼՈՒՍԻԿ<sup>v</sup> մի խումբ . . . . . 0լ. ս. ՀԵՋՈՒՅԵՐՆ

ԱՍՏՂԻԿ<sup>v</sup> օրիորդներ . . . . . 0լ. ե. ՍՈՒՐՅՈՒՆԵՐՆ

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

ԱՌԱՌՈՒՀԱԺ ԱԹԱԶԻՆ

Բեմը ներկայացնում է «Թիֆլիզի ժողովարանի» այդին ընտանեկան երեկոյթի ժամանակ: Աջ ու ձախ, ծառերի տակ, նստալաններ, խորքումը ոտոնդ, ուր ժամանակ առժամանակ պարում են:

ՏԵՍԻԼ Ա. Ա. Զ Ի Ն

ԷԼԻԶ, ԱՐԿԱԴԻ, զալիս են ձախ<sup>\*)</sup> կողմից:

ԷԼԻԶ

Ինչպէս տեսնում եմ, դու նշ միայն կնոջդ ես խարում, այլ ինձ էլ ես խարում, պարս:

ԱՆՈՒՃ մի ուրիշ խումբ . . . . 0լ. ս. ԲՈՒԳԻԱՆԵՐՆ

ՆՈՒՆՈՒՃ մի ուրիշ խումբ . . . . 0լ. ս. Մ.-ԱՍԻԼԵՐՆ

ՀՈՒՓՍՈՅ օրիորդներ . . . . . 0լ. ն. ԳԱԼՈՒՄԵՐՆ

ՏԵԽ առաջին արարուածի Զ-րդ տեսիլի սկզբում և զրբիս վերջում զետեղած ծանօթութիւնները:

<sup>\*)</sup> Աջ, ձախ պէտք է ընդունել միշտ հանդիսականների դիրքից նայելով:

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

## ԱՐԿԱԴԻ

Մեղք չէ հոգուդ, որ այդպէս ես խօսում:  
Էլիջ

Ուզիդ խօսելը որ մեղք է, ուրիշն քո արարմուն-  
քը արդար կը լինի, հա՞:

## ԱՐԿԱԴԻ

Կարելի է շատ էլ մեղաւոր եմ, բայց քո առաջ,  
էլիդ, երկինք վկայ, միշտ արդար եմ եղել:  
Էլիջ

Ինչպէս այսօր, գիտեմ, գիտեմ:  
ԱՐԿԱԴԻ

Այսօր էլ, վաղն էլ, միշտ և յաւիտեան:  
Էլիջ

Սնև, սնև, այսօր էլ, վաղն էլ, միշտ և յաւի-  
տեան սուտ ես իմ առաջ, սուտ, միշտ սուտ:  
ԱՐԿԱԴԻ

Հոգեալու:

## Էլիջ

Ճշմարիան ասա, այս զիշեր այդ խօսքը քանի  
անդամ ասացիր նրան... Դու կարծում ես չտեսայ...  
ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ, ի՞նչ...

## Էլիջ

Անիրան:

Կատում է ձախ կողմը:

ԱՐԿԱԴԻ, նատելով մօտը:

Էլիջ:

## Էլիջ

Թհ-թհի տուած որ զնում էլիք այս լսալէիս...

## ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ կայ որ...

## Էլիջ

Եթէ մարդավարի գնայիք, ի հարկէ ոչինչ. բայց  
այնպէս կպել էլիք մէկ մէկու, որ ձեր տեղը ես էի  
ամաշում այսքան բազմութեան մէջ... Միայն մէկ  
սլան էր պակաս, էլ ինչին էլիք պատասխ:

## ԱՐԿԱԴԻ

Է՞ն, զարմանալի կին ես, ճշմարիս:

## Էլիջ

Հըմ, անօրէն, թոն մէկ էլ տեսնեմ:

Հովհարով սպառնում է:

## ԱՐԿԱԴԻ

Լաւ, լաւ, դու ինձ այն ասա՝ լնդրիքը հօ միա-  
սին ենք ուսելու այստեղ:

## Էլիջ

Եթէ արժան կը համարես, պարոն:

## ԱՐԿԱԴԻ

Հերիք է, լինդում եմ:

## Էլիջ

Ինչի, կարելի է նրա հետ աւելի անուշ է թւումքել:

## ԱՐԿԱԴԻ

Եթէ չես վերջացնելու, զիշեր բարի:

Կամննում է զնալ:

## Էլիջ, բռնելով:

Լաւ, լաւ, այս մէկ անգամ ներում եմ. համեցէք  
լնդրինք միասին... Բայց կինդ ի՞նչ կ'առէ:

## ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ պիտի առէ:

## ԷԼԻԶ

Այս քանի ժամանակ է հետո թիթուած է, չպի-  
տեմ՝ ինչ եմ արել:

## ԱՐԿԱԴԻ

ԷՇ, զո՞ւ նրա կասպիլիկիրին ինչ ես ուշը դարձնում:

## ԷԼԻՑ

ԱՌ, Արկադի, այդ ինչ ես տառւմ: Ես նրան  
այնպէս եմ սիրում, ինչպէս իմ հարազատ քրոջու-  
նը խայ ժամանակ միասին ենք մհծացել, ես չեմ  
ուզում վշտացնել նրան:

## ԱՐԿԱԴԻ

Աստուած բարի վայելումն առյ:

## ԷԼԻՑ

Դու այդպէս տառ, բայց ես կարծում եմ, թէ  
ժամանակարա եմ նրա առաջ, երեսին ուղիղ նայել չեմ  
կարողանում... Եւ այս ամենը քեզ համար, քո սիրոյ  
համար, իսկ դու այլ ես ինձ չես սիրում:

## ԱՐԿԱԴԻ

Գարձեալ:

## ԷԼԻՑ

Մի նեղանար, Արկադի, խնդրում եմ, մի նեղա-  
նար. Ինչ անեմ, որ սիրոս վստահ չէ քեզ վրայ:  
Ասա, ասա, որ սիրում ես ինձ, Էլի այնպէս ես սի-  
րում, ինչպէս առաջ: Դու չպիտիս թէ ինչքան քաղցր  
է ինձ համար քո բերանից լսել այդ խօսքը:

## ԱՐԿԱԴԻ

Ի հարկէ սիրում եմ. քեզ որ չեմ սիրում, հասա-  
նումն եմ սիրում:

## ԷԼԻՑ

Եւ բացի ինձանից էլ ուրիշ ոչ ոքի:  
ԱՐԿԱԴԻ

Ո՛չ ոքի, ոչ ոքի, վկայ է Աստուած:

ԷԼԻՑ, նայում է այս ու այն կողմը:

ԱՌ, Արկադի, հոգիս, իմ աստուածը զու հո:  
ԱՐԿԱԴԻ

Դէ, արի ու մի սիրիր... Ի՞նչպէս կարելի է քեզ  
չսիրել:

## ԷԼԻՑ

Ճամ ես սիրում ի՞նձ, շամ:

## ԱՐԿԱԴԻ

Ճամ, օ, շամ, արևս վկայ, շամ:

## ԷԼԻՑ

Արեիդ մեռնի էլիզը:

## ԱՐԿԱԴԻ

Ուրեմն թնդ իմ արելը մեռնի, եթէ բացի քեզա-  
նից կարողանամ ուրիշին սիրել:

## ԷԼԻՑ

ԱՌ, ի՞նչպէս պինդ կը համրուրէի քեզ այժմ:

## ԱՐԿԱԴԻ

## Վերս, գալիս են:

## ԷԼԻՑ, յիտ նայելով:

ԱՌ, ամուսինս...

Գնում է գէպի Արէլը, որ զալիս է աջ կողմից, իսկ  
Արկադին ծածուկ դուրս է գնում ձախ կողմից:

ՏԵՍԻԼ Բ

ԷԼԻԶ, ԱԲԵԼ

ԷԼԻԶ

Այս մրաեղ ես, երանի դիտենամ. ծնկներս թուացան քեզ վնասուելով:

ԱԲԵԼ

Վա, ես էլ քեզ եմ վնասում: Ո՞ւմ հետ էիր այստեղ:

ԷԼԻԶ

Բարեկամ աղջկերք կային. միասին ման էինք գալիս:

ԱԲԵԼ

Ո՞վ դիտէ քանիսի տունը շինեցիք, քանիսինը քանդեցիք:

ԷԼԻԶ

ԷՇԻ, խօսում էինք, էլի:

ԱԲԵԼ

Դուք ու ձեր խօսելը, մի քանի աղջկերք որ հաւաքվում էք, էլ վերջ չի լինում ձեր ասա - կօսէին:

ԷԼԻԶ

Իսկ աղամարդիկդ հօ խօսել չգիտէք. խեղճեր, մեղքս գալիս էք:

ԱԲԵԼ

Մենք որ խօսում ենք, ելիդ, բան ենք խօսում, ապրուսի միջոց ենք որոնում. ձեղ համար ենք

մտածում... իսկ ձեր խօսելն ի՞նչ է. բոլորը գատարկարանութիւն, միշտ ճօշալ ու բամբասել:

ԷԼԻԶ

Դէ, լաւ է, համ, դնաք էլ մի շատ բարի պառուղ չէք. ձեղ էլ եմ ճանաշում... (թեւն առնելով:) Արի մէկ ինձ դէպի ուօտնդը տար, աեսնեմ այնտեղ ի՞նչ կայ:

ԱԲԵԼ

Այնքան բազմութիւնն կայ հաւաքուած այնտեղ, ելիդ, որ ասեղ զցելու տեղ չկայ. մի ինչ-որ վրացի իշխանուհի է եկել նոր, ասում են հիանալի լեզգին-կայ է պար գալիս:

ԷԼԻԶ

ԳԻԱՆՔ, ԳԻԱՆՔ:

ԱԲԵԼ

Առանց ինձ շես կարող գնալ, ի՞նչ է: ես ուզում իմ նորին վսեմութեանը տեսնեմ. ասացին այս կողմն է ման գալիս... 2իս տեսել:

ԷԼԻ>Z

Կարծեմ որ նա էք, աշքովս ընկաւ, մէկի հետ գնում էք շատ ապր-տաք խօսելով... Յետ էլ չնայեց նորին վսեմութիւնը, որ զլուխ տայի:

ԱԲԵԼ

Հէնց միշտ քեզ վրայ է մտածում... Մարդն աշխարհի զործ ունի. ո՞վ է իմանում զլխումն ի՞նչեր է պառյա գալիս:

ԷԼԻ>Z

2է, ի՞նչ ուզում ես ասա, ԱԲԵԼ, բայց նա էլ այն չէ:

## ԱԲՔՆ

Ախար, հոգիս, այն մարդը հօ չի կարող միշտ  
մեր յետից ման գալ... ելի փառք Աստուծոյ, որ  
ժամանակ է զանում երբեմն մեղ ևս մտաբերելու,  
հազար գործի տէր է, ասում եմ:

## ԷԼԻԶ

Աստուծ տայ, իր բանն աջողի... Ահա նա է, այս  
կողմն է զալիս:

## ՏԵՍԻԼ Գ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

## ԱԲՔՆ, ԹՈՂՆԵԼՈՎ ԷԼԻՂԻՆ:

Սպասիր, (Արկադիին:) Զերդ վսեմութիւն, մէկ ժամ  
է ձեղ եմ սրոնում:

## ԱՐԿԱԴԻ

Ա, բարե, պ. Արէլ: Ես էլ ձեղ էի սրոնում...  
Բարե ձեղ, յարգելի տիկին, այս ուր էք, չէք երե-  
ւում: Նոր եկաք:

## ԷԼԻԶ

Զեղ ասացէք, պարոն, մօտիցս անցնում էք ու  
փառ էլ չէք նայում:

## ԱՐԿԱԴԻ

Այդ երբ:

## ԷԼԻԶ

Այ, փոքր ինչ առաջ, մէկի հետ խօսակցելով զը-  
նում էիք:

## ԱՐԿԱԴԻ

Զեմ ահսել, ճշմարիտ, եթէ նչ' լինչպէս չէի բա-  
րեիլ ձեղ:

## ԷԼԻԶ

Բայց և այնպէս, էլ առաջուայ նման ուշադիր չէք  
դէպի մեղ: Առաջ շաբաթ չէլ անցնիլ, որ մէկ ան-  
գամ գոնէ չհանդիպէլիք, իսկ այժմ ամիսներ է անց-  
կենում, չնորհ չէք բերում մեր առն:

## ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ անհմ, տիկին, ներկայէք... Դուք զիտէք, որ  
ևս ձեղ շատ եմ յարգում, միայն սաստիկ զրադուած-  
եմ. մի նեղանաք, լնդրում եմ:

## ԷԼԻԶ

Գնեք զիտէք:

## ԱՐԿԱԴԻ

Հաւատացէք, տիկին, ինչ եղել եմ, էլի նայն եմ  
ձեղ համար:

## ԱԲՔՆ

Զերդ վսեմութիւն, դուք էլ որ կինարմատի խօս-  
քը բանի տեղ էք գնում, զարմանում եմ, ճշմարիտ...  
Միթէ կարելի է սրանց ասածին նշանակութիւն տալ:  
Էլիզ, Արէլին:

Ճամ չնորհակալ եմ, պարոնս:

## ԱՐԿԱԴԻ

Ինչի, պ. Արէլ, տիկնոջը ես շատ եմ յարգում և  
բնաւ չի ցանկանալ, որ դուք տեղն ինձանից նե-  
ղանար:

## ԱԲՔՆ

Զերդ վսեմութիւն, մենք հօ մի օրուայ բարե-

կամներ չենք. թէ զուք մեր պատիւն ունիք, մենք  
էլ պակաս չենք յարգում ձեզ, հաւատացէք, և ինչ  
որ սա ասում է, ձեզ յարգելուցն է ասում, լաւ ի-  
մանաք:

## ԷԼԻԶ

Ի՞նարկէ սրտանց յարգում եմ և հէնց զրա հա-  
մար եմ նեղանում, որ ուշ-ուշ ենք հանդիպում:

## ԱՐԿԱԴԻ

Չատ չնորհակալ եմ, տիկին. կը գտմ, կը գտմ, մի  
նեղանաք:

## ԷԼԻՑ

Կը տեսնենք... Առայժմ մնաք բարեաւ, զուցէ զուք  
այստեղ առանձին գործ ունիք, ես մի գնամ տեսնեմ  
այն կողմն ինչ կայ... Մնչուշտ այս երեկոյ դարձեալ  
պատիւ կունենամ ձեզ տեսնելու:

## ԱՐԿԱԴԻ

Մնաւարակոյս, տիկին, անտարակոյս:

Էվլոզ զնում է, քաղցրութեամբ յետ նայելով Ար-  
կադիին, յետոյ պատահելով մի խումբ կանանց,  
նրանց հետ մտնում է ուսոնզը:

## ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, առանց ԷԼԻՑԻ

## ԱՐԿԱԴԻ

Հրամայեցէք, Արէլ-աղա:

## ԱԲԷԼ

Հրամանքդ շատ... Աղան էլ զուք էք, ձերդ վսե-

մութիւն, պարոնն էլ, ես միայն ձեր խոնարհ ծա-  
ռան եմ, միշտ պատրաստ՝ ձեր հրամանները կատա-  
րելու... Դուք ինչ էք կամենում ասել:

## ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ արիք, տեսաք այն պարոններին. Ժամանակն  
անցնում է:

## ԱԲԷԼ

Այս, ձերդ վսեմութիւն, այս օրերս բոլոր գործը  
կը վերջացնեմ և ամբողջ գումարն անձամբ կը ներ-  
կայացնեմ ձեզ... Միայն հիմա մէկ ուրիշ բան ունիմ  
ասելու, բայց չնեղանաք, աղաջում եմ:

## ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ է պատահել:

## ԱԲԷԼ

Գիտէք ինչ է, ձերդ վսեմութիւն, ես ձեր լաւ  
բարեկամն եմ և ձեզ էլ իմ լաւ բարեկամն եմ հա-  
մարում... (Լուսթիւն:) Ներեցէք, աղաջում եմ... Այ,  
լեզուիս ծայրին պատյան է զալիս, բայց չեմ համար-  
ձակվում ասելու, սակայն (Յոյց տալով կոկորդը:) այս-  
տեղ է հասել:

## ԱՐԿԱԴԻ

Վախեցնում էք ինձ, սիրելի բարեկամն:

## ԱԲԷԼ

Ո՛չ, ոչ, ձերդ վսեմութիւն, դեռ ևս վախենալու  
բան չկայ և իմ ջանքն էլ հէնց այն է, որ վերջը  
վախենալու չդառնայ:

## ԱՐԿԱԴԻ

Բոլորովին շուարուեցի:

ԱԲԷԼ

Զեր արել, ոչ ոք չեր համարձակուիլ այս բանը  
ձեղ ասելու, բայց էլ ինչի՞ բարեկամ եմ, եթէ ծանր  
բողէին ամեն բան սւզզակի չասեմ:

ԱՐԿԱԴԻ

Դէ, ասացէք ու վերջացրէք, էլի՞:

ԱԲԷԼ

Ասացէք ու վերջացրէք... Լեզուն էլ պիտի դօրէ  
ախար, թէ ոչ... Արի ու առա... չիշտ բան է, կար-  
ծում էք, մարդ մարդու կնոջ վրայ բան ասէ:

ԱՐԿԱԴԻ

Ո՞ւմ կնոջ:

ԱԲԷԼ

Զեր կնոջ, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱԴԻ, զարմացած:

Իմ կնոջ... ես կարծեցի ձեր կնոջ մասին էք ասում:

ԱԲԷԼ

Ի՞նչպէս թէ իմ կնոջ... Ասուած մի արացէ,  
մէկ օր էլ տանը չի պահիլ... Զգնյշ կացէք, ձերդ  
վսեմութիւն. մի ինչ-որ նոր զինուորական է եկել,  
էլ պոկ չեն զալիս մէկ մէկուց. հա խօսում են ու  
խօսում...

ԱՐԿԱԴԻ

Այն, ես մի անձանօթ սպայ անսայ կնոջս հետ:

ԱԲԷԼ

Բայց միթէ կարելի է մի օտար մարդու հետ այդքան  
երկար զրոյց անել... Այս զիշեր ամենքն էլ նրանց  
վրայ դարձրին իրանց ուշադրութիւնը. իսկ զուք, ով  
դիտէ, ինչ կարեսը ինողիրների մասին էիք մատածում

այսակդ... Զգուշացէք, ձերդ վսեմութիւն. կինարմա-  
տալ եթէ մաքումը մի բան դնի, էլ ոչ ոք նրա հա-  
իսիցը չի կարող զալ. նա իր ուղածը կ'անէ, ան-  
պատճառ կ'անէ... Այս էք, եղբայր, իմ բարեկամու-  
թիւնը, և յոյս ունիմ, ոք ձերդ վսեմութիւնը չի նե-  
ղանալ ինձանից...

ԱՐԿԱԴԻ

Զամա, շնա չնորհակալ եմ, սիրելիս: (Զեռքն առ-  
նելով:) Յատուկ պարտաւորեցրիք:

Շտապով զնում է զէպի ոսոնդը:  
ԱԲԷԼ, առանձին:

Խեղճ մարդ... Զեր կնոջ, ասում է... նրա համար  
է ասած, ոք մարդ իր աչքի գերանը չի տեսնիլ, է...  
Գլուխը շարժելով՝ զնում խառնվում է մի խումբ  
մարդկանց հետ ու անյայտանում:

ՏԵՍԻԼ Ե

ՎԱՐԴՈՒԽԻ, ԱՐԿԱԴԻ

ՎԱՐԴՈՒԽԻ, զալով օախ կողմից, կանչում է Արկադին,  
մինչզեռ նա բարձրանում է ոսոնդի աստիճաններով:

Պարսն Արկադի, պարսն Արկադի... Սպասեցէք,

սպասեցէք:

ԱՐԿԱԴԻ

Այս, դժուք էք... Բարե ձեղ, անհման իմ տիկին:  
ՎԱՐԴՈՒԽԻ

Այդ ուր էք շտապում այդպէս:

## ԱՐԿԱԴԻ

Ուզում՝ էի կնոջս գտնել:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչ է պատահել... Ահա նայեցք, նա այնտեղ կանանց զբանի մէջ նստած խօսում է:

## ԱՐԿԱԴԻ

Այն, ճշմարիտ էք ասում:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչպէս թէ ճշմարիտ եմ ասում. ես երբ եմ սուտ խօսել:

## ԱՐԿԱԴԻ

— Ո՛չ, հրաշալի տիկին, ինձ այնպէս ասացին, որ երբ կիս շարունակ մի զինուորականի հետ է խօսում, և յանկարծ զարմացայ, երբ կանանց մէջ ահա նրան:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչ կայ այսաեղ զարմանալու... չէնց առենք թէ շարունակ մի զինուորականի հետ է խօսում, ձեզ ի՞նչ փոյթ. չը որ դուք շարունակ ասում էք թէ նրան չէք սիրում: (Քնքութեամբ հովհարով սպառնում է:)

## ԱՐԿԱԴԻ

Իհարկէ չեմ սիրում, սակայն այսաեղ պատի խնդիր է:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչիդ է պէտք նրա պատիւը, երբ իրան չէք սիրում:

## ԱՐԿԱԴԻ

Ես իմ պատին եմ ասում:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Հիանալի է, հիանալի... Ահա այդպէս էք աղամարդիկդ, ամենքդ էլ այդպէս էք... Ձեզ ամեն բան ներելի է. խօսել՝ նւմ հետ կամենաք, ժամանակ անցկացնել՝ ինչպէս կամենաք, բայց հէնց որ խեղճ կինն սկսի մէկի հետ խօսել, իսկոյն ձեր աշքերը վառվում է թէլլօյի նախանձով... Պատիւք, ասում է... Թողէք խնդրեմ, մինք ձեր ստրուկներն ենք, ի՞նչ է:

## ԱՐԿԱԴԻ

Օ՛հ, անհման իմ տիկին, ոչ թէ սարուկ, գուք երկնային հրեշտակ էք ինձ համար:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Դարձեալ... Ես ձեզ բանիցս անգամ արգելել եմ ինձ հետ այդ ձևով խօսել:

Ճեռուց լսվում է մեղմ երաժշտութիւն, որ շուտով զարդարում է:

## ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ անեմ, տիկին, որ չեմ զիմանում... Ես ձեզ սիրում եմ, գուք զիտէք, որ սասաթիկ սիրում եմ ձեզ:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Լուեցէք, խնդրեմ, ես ձեզ չեմ հաւատում և կարիք էլ շունիմ հաւատալու... Սիրել ուզում էք, սիրեցէք ձեր կնոջը, նա ըստ ամենայնի արժանի է ջերմ սիրոյ. բայց դուք նրան գնահատել չէք իմանում:

## ԱՐԿԱԴԻ

Միթէ մեղաւոր եմ, տիկին, որ սիրում եմ ձեզ:

## ՎԱՐԴՈՒՀԻ

Բաւական է. դուք ինձ ձանձրացնում էք վերջապէս:

## ԱՐԿԱԴԻ

Բարկացէք, տիկին, բարկացէք, բայց դարձեալ  
յոյս ունիմ, որ մի օր քաղցր աշքով կը նայէք վրաս:  
ՎԱՐԴՈՒՀԻՆ, հեղութեամբ:

Ի՞նչպէս չէ, հաստատ սլահեցէք այդ յոյով:

## ԱՐԿԱԴԻ

Յոյսը լաւ բան է, տիկին:  
ՎԱՐԴՈՒՀԻՆ, տեղից վեր կենալով:  
Դուք անուղղելի էք, պարս:

## ԱՐԿԱԴԻ, նոյնպէս:

Ես կ'ուղարկմ, տիկին, երբ դուք սկսէք մի փոքր  
սիրել ինձ:

## ՎԱՐԴՈՒՀԻՆ, քաղցրութեամբ:

Հաւատացէք, պարսն Արկադի, ևս ձեզ վերջին  
անգամն եմ ասում, որ իթէ չէք դադարիլ այդ լե-  
զուով խօսել ինձ հետ, յաւիտեան կը զրկուիք իմ բա-  
րեկամութիւնից:

## ԱՐԿԱԴԻ

Տէրը մի արասցէ, աւելի հեշտ է ինձ զլսեցս  
զրկուիլ, գոնէ այն ժամանակ կը խղճաք ինձ: (Վար-  
դուհին ծիծաղում է:) Ծիծաղեցէք, ծիծաղեցէք, տի-  
կին, իսկ ևս հաւատացած եմ, որ դուք այն ժամա-  
նակ զառնապէս լաց կը լինիք, թէ ինչո՞ւ ինձ այսքան  
տանջեցիք:

## ՎԱՐԴՈՒՀԻՆ, աւելի է ծիծաղում:

Սկսէ կը հագնեմ, այնպէս չէ:

## Շարունակում է ծիծաղել:

## ԱՐԿԱԴԻ

Իհարկէ կը հագնէք:

84  
3984  
~~38254~~

## ՎԱՐԴՈՒՀԻՆ

Լու, լու, վերջ դնենք այս կատակներին... (Թեւն  
առնելով:) Բարեհաճեցէք ինձ ոստօնդի կողմը տանել:  
Իդէպ, դուք կամենում էք ձեր կնոջը տեսնել:

## ԱՐԿԱԴԻ

Այս, տիկին, խելքից հանում էք մարդու և դար-  
ձեալ ինձ էք մեղապատմ:

ՎԱՐԴՈՒՀԻՆ, թողնելով Արկադիի թեւը:

Ուրեմն ցահսութիւն:

Ծիծաղելով հեռանում է:

## ԱՐԿԱԴԻ

Տիկին, տիկին... Աղաչում եմ, լսեցէք... (Առան-  
ձին:) Այս կինը խելքարութեան կը հասցնէ ինձ:

Որ բանի քալ շտապով հետեւում է Վարդուհուն,  
որ մօտենալով խորքում զօսնող մի խումբ  
երիտասարդների, նրանց հետ անհետանում է  
քեմի ձախ կողմից:


ՏԵՍԻԼ Զ. \*)

ՄԱՐԴԱՐԻՑ, պարանոցին մարգարտաշար մանեակ, Ա.Բ-  
ԿՈ.ԴԻ

ԱՐԿԱԴԻ, տեսնելով Մարգարտին ոստօնդից դուրս գալիս  
եւ կանգ առնելով, առանձին:

Այս, կինս...

\*) Գերասանուհիների պակասութեան պատճառով, մա-  
նաւանդ գաւառներում, և ներկայացման հեշտութեան հա-



**ՄԱՐԳԱՐԻՑ,** իշնելով ոստօնի աստիճաններից:  
Ա՛, դու այստեղ ես... ի՞նչպէս է որ մենակ ես  
մնացել:

**ԱՐԿԱԴԻ**

Ասա, ինգրեմ, ո՞լ է այն զինուորականը, որի հետ  
դու ամբողջ երեկոյ այնպէս երկար ու յափշտակուած  
խօսում էիր:

**ՄԱՐԳԱՐԻՑ**

Ես մեր յայտնի վիպասան Արտաշէս Արամեանն  
է, որ նոր վերադարձել է ճանապարհորդութիւնից:

**ԱՐԿԱԴԻ**

Ո՞րտեղից ես ճանաշում դու նրան:

**ՄԱՐԳԱՐԻՑ**

Մենք վաղեմի ծանօթներ ենք:

**ԱՐԿԱԴԻ**

Վաղեմի ծանօթներ էք:

**ՄԱՐԳԱՐԻՑ**

Այն, դեռ քեզ չէի էլ տեսել, երբ նրան ճանա-  
շում էի:

**ԱՐԿԱԴԻ**

Դա ինձ զարմանալի է թուում, սիրելիս:

**ՄԱՐԳԱՐԻՑ**

Ճանգստացիր, այստեղ զարմանալու բան չկայ...  
Պարսին Արամեանը մեզ զրացի էր, երեխայ ժամանակ  
միասին ենք մեծացել և ես դեռ տասնուհինդ տա-

մար, այստեղ բաց են թողնվում մի քանի տեսիլներ, որոնց  
բացակայութիւնը չի խանգարում կատակերգութեանս մտքի  
ամբողջութեանը: Այդ տեսիլները կցվում են գրքիս վերջին:

րեկան էի, երբ նա իր ուսման ընթացքն այստեղ  
աւարտելով՝ գնաց մտաւ համալսարան...

**ԱՐԿԱԴԻ**

Եւ չկալողանալով շարունակել համալսարանական  
ուսումը, հարկաւ վանդուեցաւ այնտեղից և մտաւ զի-  
նուորական ծառայութիւն:

**ՄԱՐԳԱՐԻՑ**

Սխալվում ես, պարոն... Եթէ դու փաքրիշատէ  
ընթերցատէր լինէիր ու մէկ անգամ գոնէ աչքի անց-  
նէիր նրա հեղինակութիւնները, այլպէս չէիր խօսիլ...  
Ինչեիցէ, տասը տարի կը լինի, որ մենք բաժանուել  
ենք և ահա այսօր տուածին անդամն ենք տեսնում  
միմեանց:

**ԱՐԿԱԴԻ**

Ճատ բարի, բայց այնպէս ծանր ու բարակ ի՞նչ  
էիր խօսում այսքան բազմութեան առաջ:

**ՄԱՐԳԱՐԻՑ**

Առանձնապէս ոչինչ. ես իմ անցկացրած օրերի  
մասին էի պատմում, նա էլ իրան: Նա եկել է այս-  
տեղ աշխարհագլական, թէ ազգագլական մի ժողովի  
յանձնալարութեամբ...

**ԱՐԿԱԴԻ**

Ճաւատում եմ, բայց այնքան երկար խօսելով նրա  
հետ, դու ամենիքի ուշադրութիւնն քեզ վրայ գարձրիր:

**ՄԱՐԳԱՐԻՑ**

Ո՞ւմ ի՞նչ գործն է, որ ես իմ բարեկամի հետ  
խօսում եմ:

**ԱՐԿԱԴԻ**

Բարեկամ:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Այն, բարեկամ, զարմանում էս թէ նախանձում,  
չգիտեմ:

## ԱՐԿԱԴԻ

Ո՞չ զարմանում եմ, ոչ նախանձում. ես նեղանում  
եմ միայն, որ հասարակութեանն իզուր առիթ ես  
տալիս վրադ խօսելու:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ո՞վ է ինձ վրայ խօսողը:

## ԱՐԿԱԴԻ

Երեխ խօսողներ կան, որ ասում եմ:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ո՞վ է, ո՞վ. ասա, ո՞վ է խօսում:

## ԱՐԿԱԴԻ

Ես քեզ ասում եմ, որ խօսում են. իսկ եթէ ինձ  
չես հաւատում, կարող ես բարեկամիս հարցնել, տես  
ինչ է ասում:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Այսինքն:

## ԱՐԿԱԴԻ

Պարոն Աբելին:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Խնդրեմ, խնդրեմ, նա թնդ իր գլուխն տէրու-  
թին անէ:

## ԱՐԿԱԴԻ, զոյնը նետած:

Դրանով ի՞նչ ես ուզում ասել:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ոչինչ...

Աչքի տակով նայում է ամուսնուն:

## ԱՐԿԱԴԻ, առանձին:

Միթէ կասկածում է:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Իսկ ի՞նչ կը վերաբերի քս խանդոսովեանդ, կամ  
աւելի ճիշդն ասած՝ նեղանալուզ, այդ, յիբափ, ինձ  
զարմացնում է... Որպէս թէ ես քեզ համար որիէ  
նշանակութիւն ունիմ և կամ սիրելի եմ քեզ:

## ԱՐԿԱԴԻ, ուրախ զէմք ստանալով:

Իհարկէ որ սիրելի ես:

## ՄԱՐԳԱՐԻՑ, հեղնօրէն:

Եւ շնառ ես սիրում ինձ:

## ԱՐԿԱԴԻ

Ճատ, այն, շնառ:

## ՄԱՐԳԱՐԻՑ, դառն ժպիտով:

Եւ բացի ինձանից էլ որիշ ոչ ոքի չես սիրում  
իհարկէ:

## ԱՐԿԱԴԻ

Ոչ ոքի, վկայ է երկինքը:

ՄԱՐԳԱՐԻՑ, լուռ շարժում է գլուխը եւ խորին դառնու-  
թեամբ:

Նայիր վերե, նայիր և տես, թէ քանի վկայ կայ  
այնաեղ... նայիր, նայիր, մի վախենար, աստղերը  
ձայն չունին. նրանց լեզուն ամեն մարդ միայն ինքն  
է հասկանում, և եթէ մի բան ասեն այժմ, մենակ  
քեզ կ'ասեն:

## ԱՐԿԱԴԻ

Ինչեր ես ասում, ես ոչինչ չեմ հասկանում: Եթէ  
բան զիտես, կամ մի մարդ սուտ լուրեր է հաղորդել  
քեզ իմ մասին, այն ասա:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Ոչ ոք ինձ բան չէ ասել և ոչ էլ ես ուրիշի խելքով կամ խօսքով եմ ման գալիս: Ինչ ոք զիտեմ, ինձ ու ինձ զիտեմ և հաստատ էլ համոզուած եմ, ոք զու իմ մասին այնքան ես մտածում, որքան Զինաստանի մասին:

**ԱՐԿԱԴԻ**

Ուրիշ:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Ուրիշ ոչինչ... (Առանձին եւ հեղնօրէն: ) Ես քեզ սիրում եմ, ասում է...

Գնում նատում է ճախ կողմի նատարանի վրայ:

ԱՐԿԱԴԻ, առանձին:

Աստուած այս կնոջը կատարեալ պատիժ է սակածել ինձ համար:

Գուրս է դնում աջ կողմից:

**ՏԵՍԻԼ Ե****ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ**

**ՄԱՐԳԱՐԻՏ,** տեսնելով Հեղինէին, որ շտապով զալիս է ոտոնդի կողմից, զարմացած վեր է թռչում:

Այս ումն եմ տեսնում:

**ՀԵՂԻՆԵ**

Մարզարիտս...

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Եմս Հեղինէ, դու ես...

**ՀԵՂԻՆԵ**

Հոգին...

Սիրով համբուրում են միմիանց:

ՄԱՐԳԱՐԻՏ, Հեղինէի ծնորք բոնած եւ առաջ զարվ:

Այս ինչպէս, այս երբ:

**ՀԵՂԻՆԵ**

Այսօր, հենց այսօր եմ եկել:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Առաւտուայ կնացքով իհարկէ:

**ՀԵՂԻՆԵ**

Այն:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Յետոյ՝ միթէ չէիր կարող իմաց տալ, որ զայի քեզ դիմաւորելու:

**ՀԵՂԻՆԵ**

Հենց զրա համար էլ չուզեցի իմաց տալ, որ քեզ անհանգիստ չանեմ:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Ինչե՞ր ես տառմ, Հեղինէ. ինչպէս թէ անհանգիստ չանեմ: Միթէ այդպէս է:

Նստում է եւ Հեղինէին նստեցնում իր կողքին:

**ՀԵՂԻՆԵ**

Գիտեմ, զիտեմ, անզին իմ Մարզարիտ, որ զու ինձ այնպէս ես սիրում, ինչպէս ես քեզ, և հենց այդ ուշին էր պատճառը, որ ես չուզեցի առաւտեան անուշ քոնդ խանզարել... Այս, իմ հրեշտակ Մարզարիտ, վերջապէս նորից արժանացայ տեսութեանդ և այս անզամ յոյս ունիմ որ մէկ օր էլ չեմ անց կացնիլ առանց քեզ:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Այս, չեղինէ, Աստուած քեզ ինձ համար է ու-  
ղարկել... Ուրեմն այնաեղ պաշտօնդ թողել ես:  
չեղինէ

Այն, ընդունեած:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Բայց վերջին նամակուամդ հակառակն էիր զրում:  
չեղինէ

Ուղիղ է, բայց այնպիսի մի անակնկալ հանգամանք  
պատահեցաւ, որ պաշտօնս էլ թողի, քաղաքն էլ:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ի՞նչ ես ասում, չեղինէ. ի՞նչ պատահեցաւ արդեօք:  
չեղինէ

Մի շատ սովորական բան... նոր հոգարածուք  
մասն ուսումնարան, մենք միմեանց չհասկացանք, և  
ահան ես այստեղ եմ... ես կը պատմեմ քեզ, Մարգա-  
րիտա, բոլոր կը պատմեմ, առայժմ թող մնայ:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Թող մնայ, հոգեակս... Բայց այսօք ամբողջ օրը  
ուր էիր. ինչու առաջին անգամ այստեղ ենք աեսնիլ-  
վում... Թում մօտ ես իջել, ում գերազանցիր ինձա-  
նից: (Գժողով: ) Սպասիր զեռ:

## ՉԵՂԻՆԵ

«Կովկաս» հիւրանոցում մի փոքրիկ սենեակ եմ  
վարձել, մինչեւ տեսնեմ՝ գործս ինչպէս է զնում:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ի՞նչ ասացիր, ի՞նչ. ի՞նչպէս թէ հիւրանոցում...  
Ուրեմն ես այլևս քո Մարգարիտ չեմ: Ի՞սկոյն, իս-  
կոյն, հէնց այս գիշեր անդախութիր ինձ մօտ:

## ՉԵՂԻՆԵ

Որ մենակ լինէիր, իմ անգին Մարգարիտ, ինչու  
չէ, մեծ ուրախութեամբ, բայց կարելի է ամուսնուդ  
հաճելի շնորի:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Եյդ կողմից դու բոլորավին հանգիստ եղիր: Ես  
ինձ համար իմ առանձին սենեակներն ունիմ: Մի  
վախենար, ես քեզ այնպէս կը պահեմ, որ դու կա-  
րողանաս լիովին վայելել քո պատութիւնը:

## ՉԵՂԻՆԵ

Հաւատացած եմ, հոգիս, բոլորավին հաւատացած  
եշատ չնորհակալ եմ, միայն թէ... բայց...

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ոչինչ չեմ ընդունում, ոչինչ ոչ քո միայն թէն և  
ոչ էլ բայց-ը. ես քեզ հիւրանոցում թողնողը չեմ...  
ե'կ, ե'կ, յատուկ խնդրում եմ, ե'կ, հետո ընկերութիւն  
արա, կեանքս էլ այնպէս ծանր չի երկալ... Դու  
շգիստու, չեղինէս, թէ ի՞նչ մեծ բարութիւն արած  
կը լինիս ինձ. անշափ, անշափ կը պարտաւորեցնես:

## ՉԵՂԻՆԵ

Եթէ այդպէս է, իհարկէ պէտք է զամ:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Այսօր միանգամից ես երկու ուրախութեան ար-  
ժանացայ: Այս գիշեր մինչեւ քեզ տեսնելու, հէնց այս-  
տեղ մեմ պատահեցայ, ի՞նչ ես կարծում. մեր վիպա-  
սան Արտաշէս...

## ՉԵՂԻՆԵ

Արտաշէս Արտահամին...

## ՄԱՐԳԱՐԻՑ

Այն:

ՀԵՂԻՆԵ

Քո մանկութեան բնկերո՞ջը:

ՄԱՐԳԱՐԻՑ

ՀԵՂԻՆԵ:

ՀԵՂԻՆԵ

Միթէ: Ի՞նչ ուրախութիւն... նա հիմա հասուն  
տղամարդ կը լինի դարձած:

ՄԱՐԳԱՐԻՑ

Անելացրու նաև՝ կարիճ զօրական... Գնանք, զը-  
նանք, ես քեզ ծանօթացնեմ նրա հետ:  
Թեւ մեւի տուած դուրս են գնում աշ կողմից:

## ՏԵՍԻԼ Ը

ԱՐՏԱՇԵՍ, զինուորականի զգեստով, կրծքին քաջութեան  
պատուանշան, ԼԵՒՈՆ, հասարակ զգեստով. զարս  
են հակառակ կողմից:

## ԱՐՏԱՇԵՍ

Այն, Լեռն, ես քեզ մեծ ապագայ եմ գուշակում:  
ԼԵՒՈՆՃնորհակալ եմ, Արտաշէս, ես այժմ էլ զոհ եմ իմ  
վիճակից, և ճշմարիան ասեմ, լիովին երջանիկ կը  
լինէի, եթէ ունենայի կեանքիս մի լծակից, որ իր  
բարեմասնութիւններով կարողանար նեցուկ լինել ինձ  
աշխատութեանս ժամանակ:

## ԱՐՏԱՇԵՍ, տխուր:

Որոնիր, եղբայր, գուցէ գտնես:

ԼԵՒՈՆ

Այն, բայց մինչև ալսօր գեռ ես չպատահեց մինը,  
որի մասին կարողանայի ասել ահա նա, առանց որի  
կեանքը կեանք չէ ինձ համար:

ԱՐՏԱՇԵՍ

Միայն թէ լընտրածիդ ուրիշը չառնէ, կամ, որ  
աւելի վասն է, ուրիշի կինը շինի քո սիրածը:

ԼԵՒՈՆ

Ի՞նչ ես ուզում ասել... (Արտաշէսը խոր յոգուց է  
հանոււմ:) Դու տխուր ես, Արտաշէս, փոքր ինչ առաջ  
այլպէս չէիր:

ԱՐՏԱՇԵՍ

Այն, ես շատ զզջում եմ, որ այս կրեկոյ ժողո-  
վարան եկայ:

ԼԵՒՈՆ

ԶՊՀՈՒՄ ես:

ԱՐՏԱՇԵՍ

Սաստիկ, թէի միենայն ժամանակ ուրախութեանս  
սահման չկայ: (Լոռւթիւն:) Այն, կարծում եմ շուտով  
ճանապարհ եմ ընկնելու կրկին:

ԼԵՒՈՆ

Ի՞նչ ես ասում, եղբայր, և դէպի ո՞ր:

ԱՐՏԱՇԵՍ

Գէպի գաւառները:

ԼԵՒՈՆ

Ինչի:

## ԱՐՏԱՋԵՍ

Ես քեզ պատմել եմ արդին. Աշխարհագրական  
Ընկերութեան յանձնաբարութեամբ...  
ԼԵԽՈՆ

Այն, այն, զիտեմ: Բայց դու կամենում էիր դեռ  
ևս մի քանի ամիս մնալ այստեղ:

## ԱՐՏԱՋԵՍ

Ճատ անգամ հանգամանքներն շտապեցնում են  
պարծը: Ես հինգ վաղը կը գրեմ գործակիցներիս, որ  
ինձ սպասեն... Այն, պէտք է գնալ, ուրիշ կերպով  
սթափուել անկարող եմ:

## ԼԵԽՈՆ

Ես քեզ չեմ հասկանում. ասա, ի՞նչ է պատահել:  
ԱՐՏԱՋԵՍ

ԱՌ, Լեռն, դու չգիտես, թէ նրբան անրազդ եմ:  
ԼԵԽՈՆ

Անրազդ... Գո՞ւ...

## ԱՐՏԱՋԵՍ

Թողնենք, ինը լին:

## ԼԵԽՈՆ

Բայց ի՞նչ կայ վերջապէս:

ԱՐՏԱՋԵՍ, փոքր լուռելունից յիտոյ:  
Ես... սիրում եմ...

## ԼԵԽՈՆ

Սիրում եմ:

## ԱՐՏԱՋԵՍ

Այն, և անյոյս:

## ԼԵԽՈՆ

Ի՞նչ... միթէ ծնողները...

## ԱՐՏԱՋԵՍ

Ո՛չ, ոչ, լոլորովին ուրիշ արգելք... նա ամուս-  
նացած է:

## ԼԵԽՈՆ

Ամուսնացած... Ո՞հ, թշուառդ... Եւ նա էլ փո-  
խադարձարմք...

## ԱՐՏԱՋԵՍ

Այն, բայց ինչպէս իր եղրօղը... չըհշտակային  
անմեղ սիրով է սիրում նա ինձ... իսկ զգացմունք-  
ներիս մասին ոչինչ չգիտէ:

## ԼԵԽՈՆ

Նա Թիֆլիզումն է:

## ԱՐՏԱՋԵՍ

Այն, և այժմ իսկ այս ժողովարանում... Գու տե-  
սար ինձ նրա հետ խօսելիս:

## ԼԵԽՈՆ

Նրա հետ...

## ԱՐՏԱՋԵՍ

Այն... Տիկին Սամսոնեանի:

## ԼԵԽՈՆ

Տիկին Սամսոնեան...

## ԱՐՏԱՋԵՍ

Այն:

## ԼԵԽՈՆ

Պարոն Արկադիի կի՞նը:  
ԱՐՏԱՋԵՍ

Այն:

Հեռուից կրկին լսվում է մեղմ երաժշտութիւն, որ  
տեւում է մինչեւ նշանակած տեղը:

**ԼԵՒՈՆ**, երկար լոռութիւնից յետոյ:  
Արտաշէս, Արտաշէս, դու խելքդ կորցրել ես բու-  
լորսպին:

**ԱՐՏԱԶՔԵՍ**

Ժամը ատարի էր, Լեռն, օ, ատալ երկար ատարիներ,  
հասկանում ես դու, մենք բաժանուած էինք, և բաւա-  
կան էր այս զիշեր մէկ անգամ տեսնել նրան, որ  
սրտիս մէջ անթեղած կըսակը նորից բորբոքուէր իր  
բոլոր ոյժավ... Պիտի խմանաս, թէ փոքր ինչ առաջ  
ինչ պատահեցաւ ինձ, երբ-որ յանկարծ նրա ձեռքն  
զգացի իմ ձեռքիս մէջ... ձշմարտոթիւնը վկայ, Լե-  
ռն, ես երբէք այնպէս չեմ ցնցուել... Կարծեմ ինքն  
էլ նկատեց այդ և խոկոյն յետ քաշեց ձեռքը... Օ՛,  
աղին՛ Մարգարիտ, անզի՞ն Մարգարիտա...

**ԼԵՒՈՆ**

Երաւ, շատ ազնիւ կին են ասում:

**ԱՐՏԱԶՔԵՍ**

Հաւատան ինձ, Լեռն, եթէ զբուածքներիս մէջ  
պատահում է մի բարի, ազնիւ, առաքինի, վեհ կին,  
ես միշտ նրան եմ ունեցել աշքիս առաջ... (Լոռութիւն:) Այն, այն, պէտք է շուտով կորչեմ այստեղից... Այդ  
կինը կեանքիս մէջ միշտ վճռական դեր է խաղացել  
և, երեի, պիտի խաղայ, քանի շունչ կայ բերանումն...  
Նրա սէրն էր, որ ինձ մղեց դէպի կըսակը, դէպի զոռ  
պատերազմները:

**ԼԵՒՈՆ**

Ի՞նչպէս:

**ԱՐՏԱԶՔԵՍ**, փոքր լոռութիւնից յետոյ:  
Իմ սէրը դէպի այդ անհման էակը սկսվում է այն

օրերից, երբ ես գեռ ուսանում էի այսակղ... Մենք  
միենոյն տանն էինք կենում, համարեա միասին ենք  
մեծացել... Զգիտեմ ինչպէս եղաւ, ևս նրան սիրեցի,  
սիրեցի, եղայր, որպէս մի խելագար, ինչպէս և  
սիրում եմ մինչև այսօր... Ես ուխտեցի վերջապէս  
կեանքս յաւիտեան կապել նրա հետ. նրա համար  
ապրել, նրա համար մեռնել... Ակսեցի աշխատել,  
անդուլ աշխատել, որ թէ զգաւոթեամբ և թէ զիր-  
քով կարսպանամ արժանի լինել իրան... Եւ ահմ  
սնուցանելով ինձ քաղցր յայսերով՝ ես վերջացրի ու-  
սումն այստեղ և զնացի համարախան... Նա այն ժա-  
մանակ տասն և հինգ տարեկան էր... (Խորը յուղոց  
հանելով;) Այն...

**ԼԵՒՈՆ****ՑԷՄՈՒՅ:****ԱՐՏԱԶՔԵՍ**

2որս ատարի անցկացրի համալսարանում յուսոյ և  
երկիւղի մէջ... Ես աշխատում էի զիշեր և ցերեկ...  
Կեանքի գժուարութիւններից և սրաւում վառուղ սի-  
րոյ կըսակից հանգստաթիւն չունէի. միայն Մարգար-  
տիս հրեշտակային պատկերն էր, որ ոյժ և զօրու-  
թիւն էր առլիս ինձ... (Գաղար:) Ես աւարտում էի  
ուսումն... Վերջին քննութեանս նախընթաց օրը յան-  
կաբծ լուր եմ ստանում, որ իմ աննման Մարգարտին  
մարդու են տալիս... Աշխ, Լեռն, արպիսի ծանր, ար-  
պիսի զարհուրելի բապէ էր այդ ինձ համար...

**ԼԵՒՈՆ**, ձեռքը բռնելով:

Հասկանում եմ, Արտաշէս, քո զրութիւնը... Այն,  
զարհուրելի է:

## ԱՐՏԱՃԵՍ

Յուսահատութիւնս քիչ էր մնում անձնասպանութիւն գործել տար ինձ. բայց դիմացայ, եղբայր, դիմացայ... (Երաժշտութիւնը կամաց-կամաց զաղարումէ:) Մեռնել, գոնէ այնպէս մեռնել, ասացի, որ մէկ բանի նման լինի... ես վճռեցի... ես ձգեցի ամեն ինչ և անմիջապէս մտայ զինուորական ծառայութիւն՝ մահը պատերազմի զաշտում՝ որոնելու։ Իմ բաղդից պատերազմի տաք ժամանակն էր, երբ ամենքն էլ ոգեսրուած էին ազգերի ազատութեան գաղափարով...

## ԼԵԽՈՆ

Ահա, թէ մըտեղ պէտք էր որոնել քո փառաւոր յաղթանակների շարժառիթը։

## ԱՐՏԱՃԵՍ

Այն, այդ պատերազմը մեծ զարման էր բորբոքուած սրախս, բանալով աչքիս առաջ մի նոր ասպարէզ... Գու երեակայել անգամ չես կարող, թէ ինչ զգացմունք է ալիսապետում քեզ պատերազմի դաշտում, երբ յանկարծ դիմացդ կանգնած ես տեսնում... զարաւոր թշնամուգ, որ յափշտակել է քո հայրենի երկիրը, որի համար քո պապերն ու նախնիքը իրանց քրաֆինքն ու արինն են թափել, ուր ամեն մի քար, ամեն մի աւերակ պատմում է քեզ անցեալի փառքը... Ո՞հ, այն ժամանակ, Լուսն, բալորը մոռացվում է, բոլորը, և ամրող գոյութիւնդ միայն մի տենչով, մի ցանկութեամբ է համակվում՝ կամ մահ, կամ կեանքիդ հետ քո հայրենի երկիրը... Գու ինձ հասկանում ես, Լուսն։

## ԼԵԽՈՆ

## Լիովին, եղբայր։

## ԱՐՏԱՃԵՍ

Մահն ինձ համար արդէն խաղալիք էր, բայց մընացի ողջ և առողջ, ինչպէս տեսնում ես... Պատերազմը վերջացաւ, ևս հաշտուցի կեսնիքի հետ. իսկ Մարզպարտի սէրը մնաց սրտիս խորիում որպէս մի թանկապին գանձ, որ հետո ման ևմ տծում անրաժան, ուր որ գնում եմ։

## ԼԵԽՈՆ

## Ապարանդ Արտաշէս։

## ԱՐՏԱՃԵՍ

Սը... նա ինքն է, այս կողմն է գալիս։

## ՏԵՍԻԼ Թ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԴԱՐԻՑ, ՀԵՂԻՆԵ, որոնք վերադառնում են ձախ կողմից։

ՄԱՐԴԱՐԻՑ, չեղինէի հետ թեւ թեւի տուած եւ առաջ գալով։  
Թայլ տուէք, պարոն Արտաշէս, ծանօթացնել ձեզ  
բարեկամուհուս հետ, օրիսրդ չեղինէ-Ծեթառամ։

## ԱՐՏԱՃԵՍ

Մեծ ուրախութեամբ։ (Ողջունելով չեղինէին։) Պատիւ ունիմ, օրիսրդ, Արտաշէս Արամեան։

Միմեանց ձեռք են տալիս։

## ՄԱՐԴԱՐԻՑ

Օրիսրդն էլ ինձ պէս զմայլուած է, պարոն Արտաշէս, ձեր զրուածքներից։

## ՀԵՂԻՆՔ

Այն, պարոն, ուրախ եմ, որ ծանօթանում եմ ձեզ  
հետ:

## ԱՐՏԱՋԵՄ

ՄԻԴԱՊԷՄ պատում էք ինձ, օրիսով... (Մարգար-  
տին:) Տիկին, թնջուկ և ինձ ներկայացնել ձեզ  
իմ մտերիմ բարեկամիս. Լեսն օդիքակեան:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Չատ ուրախ եմ: (Չեռք է տալիս Լեւոնին:) Ես ձեզ  
արդէն փոքր ինչ ճանաշում եմ, պարոն Լեսն: Պարոն  
Արտաշէսը խօսում էք ձեր մասին, երբ դուք պարում  
էք մեր օրիսորդների հետ: (Մատանցոյց անելով Հեղի-  
նէին:) Խնկըսմ ծանօթանաք... (Հեղինէին:) Պարոն  
Չիքակեան... (Լեւոնին:) Օրիսորդ Հեղինէ-Ծիժառամբ:  
(Հեղինէն եւ Լեւոնը ծեռք են տալիս միմեանց:) Դուք հիա-  
նալի պարում էք, պարոն: Հեղինէս էլ լաւ պարող է:  
Լեւոն, Հեղինէին:

Եթէ կը բարեհաճէք, օրիսորդ, հետեւեալ կաղըիլը  
միասին պարենք... Ինձ շատ կը պարտաւորեցնէք:  
Հեղինէն զլուխ է տալիս:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Իսկ առայժմ նսահնք, պարտներ, ինչու ենք  
կանգնած մնացել: (Նստում են՝ Մարգարիտն ու Հեղինէն  
միասին, իսկ Արտաշէսն ու Լեւոնը նրանց հանդէպ:) Պարոն  
Լեսն, ուրիմն դուք միծ մասամբ զիւղումն էք անց-  
կացնում, ինչպէս պատմեց ինձ պարոն Արտաշէսը:

## ԼԵՒՈՆ

Այն, աիկին, ես ինձ լիովին նուիրել եմ հողին և  
հողագործներին:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Լսել եմ, պարոն Լեսն... Պէտք է մէկ օր գանք  
ահօններ ձեր աշխատաւթիւնները, եթէ թոյլ կը ասք.  
ամուսինս ուրախ կը լինի ձեզ հետ ծանօթանալու:  
ԼԵՒՈՆ

Տիկին, ես ինձ երջանիկ կը համարէի, եթէ ձեզ  
պէս հուրեր ահօննէի իմ աղքատիկ աղքարակում:  
ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՛, դուք շատ բարի էք, պարոն Լեսն... Ուրիմն  
այլպէս, այս օրերն գնանք միասին, եթէ կը կամե-  
նաք, պարոն Արտաշէս: (Արտաշէսը լուռ ողջունում է:)  
Եւ դու, Հեղինէ:

## ՀԵՂԻՆՔ

## ՄԻԴԱՊԱԽՈՒԹԵԱՄԲ:

## ՄԱՐԳԱՐԻՏ, մտայոյդ:

## Ես սաստիկ սիրում եմ բնութիւնը:

## ԱՐՏԱՋԵՄ

Այն, աիկին, լաւ յիշում եմ, որ դուք զեղեցիկ  
ահօնականներ էք նկարում բնութիւնից: Արդիօք այժմ  
էլ շարունակում էք նկարչութիւնը:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչպէս չէ, այդ ինձ համար միծ սփոփանք է:  
ԼԵՒՈՆ

Օ՛, աիկին, եկէք, եկէք, ինպատմ եմ. դուք այն-  
ակ սրանչելի նկաթեր կը զտնէք ձեր վրձինի համար:  
ՄԱՐԳԱՐԻՏ

Անպատճառ, պարոն Լեսն, և առաջին պատկերը,  
որ կը նկարեմ ձեր զիւղի ահօնականներից, ես լուս-  
տանում եմ ձեզ հուրերլ:

**ԼԵԽՈՆ,** ողջունելով:

Այդ անմոռանալի յիշասակ կը լինի ինձ համար,  
տիկին:

**ՄԱՐԳԱՐԻՏ,** ժպտալով:

Ճատ չնորհակալ եմ... (Ասվում է կազրիլի բիտուր-  
նէլը:) Ահա ձեզ են հբաւիբում: (Լեւոնը ոտքի է կանգ-  
նում:) Այս օրերս կը սպասեմ ձեզ... Պարոն Արտաշէսը  
խոսացել է գալ մեզ տեսութեան, միասին չնամն  
բերէք, ինգրեմ:

**ԼԵԽՈՆ,** ողջունելով Մարգարիտին:

Սուանձին պատիւ էք անում ինձ, տիկին: (Հեղի-  
նէրն:) Թոնը տուէք, օրիսրդ...

Առաջարկելով թեւը, գնում է նրա հետ միասին եւ  
մտնում ուսո՞նդ:

### ՏԵՍԻԼ Ժ

**ՄԱՐԳԱՐԻՏ,** ԱՐՏԱՇԵՍ

**ՄԱՐԳԱՐԻՏ,** փոքր ինչ լրութիւնից յետոյ:

Ո՞րքան ուրախ եմ, որ ձեզ կրկին տեսնում եմ...  
Ի՞նչքան գեղեցիկ յիշողութիւններ են զալիս միաս  
մեր մանկութիւնից... Այն ժամանակ ես այնպէս էի  
հաւատացած, թէ մենք միշտ նոյնը կը մնանք, մինչ-  
դեռ այժմ անցած օրերն ինձ թւում են ուրպէս ե-  
րազ... Մարգարիտ էք, պարոն Արտաշէս, ինչպէս  
մենք խաղում էինք, ինչպէս վազվում մեր փոքրիկ  
պարտիզում... Մարգարիտ էք և իմ խեղճ մօրը, թէ

ինչպէս էր նա ձեզ գուրզուրում... Օ՛, խեղճ կինը  
շատ էր սիրում ձեզ, շատ...

Աջքերը սրբում է:

**ԱՐՑԱՋԵՍ**

Միթէ կարող եմ ես մոռանալ այն բարի կնոջը  
երբ և իցէ... Ես ևս սիրում էի նրան ինչպէս հարա-  
գատ մօրս... Սմեն ինչ, ամեն ինչ միտս է, մեր  
խաղն էլ, մեր ուրախութիւններն էլ, մեր զուարձու-  
թիւններն էլ... Հաւատացէք, տիկին, օր չի եղել, որ  
այդ ամենը շմարերէի, և շատ անգամ, նոյն իսկ  
այդ ամենը շմարերէի, առ շատ անգամ, նոյն իսկ  
պահերազմի դաշտում, թշնամու գնդակների դէմ  
կանգնած՝ ձեր պատկերը սաւանել է աշքիս առաջ:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Ճնորհակալ եմ, բարեկամ, ես ևս միշտ մտարե-  
քել եմ ձեզ. մանաւանդ ձեր հեղինակութիւնները  
կարգալիս շատ անգամ պատահէլ է ինձ, որ մտքիս  
հետ ընկնելով, ամբողջ ժամեր եմ անցկացրել միե-  
նոյն թերթի վրայ... (Արտաշէսը խորը յոգոց է հա-  
նում, երկար լուսութիւնն) Գնանք, պարոն Արտաշէս, մեր  
ըստում, երկար լուսութիւնն) Ինձ թւում է,  
բարեկամներին գանենք... (Գնալով.) Ինձ թւում է,  
թէ մենք գարձեալ մեր պարտիզումն ենք ման զա-  
լիս...

**ԱՐՑԱՋԵՍ**

Եյն, երջանիկ օրեր էին...

Խորքում երեւում են էլիզ և Արկադին թեւ թեւը  
տուած, իսկ կրոբին Աքէլը եւ մի ուրիշ խմբում  
վարդունին:

## ՏԵՍԻԼ ԺԱ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, առաջ զալով:

Մարզարիտ, ժամանակ է. Ընթրիքն արդէն սլատը լաստ է:

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐՄԱՉԵՍԻՆ:

Պարոն Արտաշէս, ամուսինն է, խնդրեմ ծահօթիմիք: (Արկադիին) Պարոն Արտաշէս Արամեան, մանկութեանս ընկերը:

ԱՐԿԱԴԻ, իրան զապելով:

Ճատ ուրախ եմ, պարոն:

Տալիս է ձեռքը:

## ԱՐՑԱՋԵՄ

Պատիւ եմ համարում, պարոն:

## ԱՐԿԱԴԻ

Ճատ ուրախ եմ ձեզ հետ ծանօթանալու... Ամբողջ հասարակութիւնն այս զիշեր ձեզ վրայ է խօսում, ձեր քաջութեան մասին սպասմում:

## ԱՐՑԱՋԵՄ

Օ՛, խնդրեմ:

## ԱՐԿԱԴԻ

Յոյս ունիմ, որ այսուհետեւ ինձ ես ձեզ յարգողներից մինը կը համարէք:

## ԱՐՑԱՋԵՄ

Հափաղանց բարի էք, պարոն:

## ԱՐԿԱԴԻ

Իմ պարագս է, պարոն... Միայն այժմ կը ներէք, խնդրեմ. մեղ սպասում են:

## ԱՐՑԱՋԵՄ

ԱՌ, խնդրեմ, պարոն:

ԱՐԿԱԴԻ, Մարզարտին:

Գևանք, սիրելիս:

ՄԱՐԳԱՐԻՏ, Արկադին, ցածր եւ յանդիմանական հայեացը:

բով:

Բայց հիմքը... (Բարձր:) Պարոն Արտաշէսը ևս այն կողմն է գալու, մենք խոստացանք բարեկամուհուս: (Արտաշէսին:) Գևանք, պարոն Արտաշէս, օրիորդ չեղնէն մեղ սպասելիս կը լինի:

ԱՐՑԱՋԵՄ, առաջարկելով թեր:

Խնդրեմ, տիկին:

ՄԱՐԳԱՐԻՏ, առնելով թեր:

Ճնորհակալ եմ... (Արկադին:) Գևանք, Արկադի... Գնում են:

ԱՐԿԱԴԻ, առանձին, բարկացած:

Միծեալ...

ՎԱՐԴՈՒԽԻ, հեղնօրէն, Արկադին:

Խեղճ Արկադի:

Նիծաղում է: Նոյն միջոցին լավում է երածշտութիւն, որ նուազում է կազրիլ, կամ տեղական երածշտութեան լավերէն պարի եղանակը: Ժողովուրդը շտափով գնում է զէպի ոստօնը, իսկ Արկադին, Վարդուհին եւ խորրում էլիզն ու Աթէլը մնում են անշարժ: Պատկիր:

ՎԵՐՁ ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾԻ

## ԱՌԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԾ

Սամսոնեանի տանը մի փարթամ գահին՝ չորս դռնով, որոնցից երկուսը ձախ կողմը, մինը աջ և մինն էլ խորքումը։ Զախ կողմի առաջին կարգի դռւում տանում է Մարգարոսի սենեակը, երկրորդ կարգինը՝ չեղինէի սենեակը։ աջ դռւուր, որ գտնվում է երկրորդ կարգում, Սբկապին է, իսկ վերջինը բացվում է դէպի նախասենեակը, որի լուսամուտներից երկում է մի գեղեցիկ պարտէզ։ Աջ կողմը, առաջին կարգում, մի լուսամուտ կայ։ Դահիճի յատակը ամբողջապէս ծածկած է գորգով, իսկ առաստաղից կախած է ոսկեզօծ ջահ հանդած մոմերով։ Դահիճը զարդարած է ամենաշքեղ զրապրիներով և կահ-կարսափրով՝ գաշնամուր, հայելիներ, ժամացոյց, պատկերներ և այլն։ Մի պատկեր, որ պարտէզ է ներկայացնում, զբած է սենեակի աշակողմեան անկինում ոսկեզօծ պատկերակալի վրայ։ Զախ կողմը՝ արմաւենիք, լիմօնի ծառեր և ծաղիներ ծածկում են երկրորդ դռւուր։ Ցերեկ է։

### ՏԵՍԻԼ Ա.Ռ.Ա.ԶԻՆ

ՄԱՐԳԱՐԻՏ, միշտ միենոյն մանեակով, ՍԵՍԻԼ

ՄԱՐԳԱՐԻՏ, նստած սուրճ է պատրաստում։  
Ո՞ր ժամն է։

ՍԵՍԻԼ, գնելով սեղանի վրայ պարսիմատով՝ սկսուտեղը։ Կէս օրից մէկ քառորդ պակաս է, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, զնացէք, տեսէք թէ օրիորդը տուն է եկել,  
առացէք որ սուրճը պատրաստ է։

ՍԵՍԻԼ

Խոկոյն, տիկին. իսկ պարսին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա տանն է։

ՍԵՍԻԼ

Այն, ավելին, նոր է վեր կենում։

ՄԱՐԳԱՐԻՏ

Գարձեալ... Այս ինչ սովորութիւն է լնդումել։

ՍԵՍԻԼ

Առաւոտեան ժամի շորսին է տուն եկել, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Հետզհեաէ աւելի ու աւելի ուշ... Արդեօք որտեղ է անցկացնում նա իր ժամանակը։

ՍԵՍԻԼ

Ի՞նչպէս կը հրամայէք, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, զնացէք, պարսինն էլ խնդրեցէք. եթէ կամնում է, թնդ գայ... Միայն զարձեալ կրկնում եմ, ՍԵՍԻԼ, որ օրիորդի սենեակի վրայ առանձին ուշք զարձնէք... Ամեն բան իր տեղը լինի, խնդրեմ, բոլորը մաքրած, որբած լինի. Փոշի չնկատուի և նչ մի տեղ։

ՍԵՍԻԼ

Հըամել էք, տիկին։

ՄԱՐԳԱՐԻՏ

Սպասաւորը բերում է արծաթեայ սկուտեղով մի ծրար։

ՄԱՐԳԱՐԻՏ, վերցնում է ծրաբը:  
Օլիորդինն է: (Սպասաւորին:) Լաւ: (Սպասաւորը  
դուրս է գնում: Ոչսիլին:) Քնացէք, իմացէք՝ պարոնը  
սուրճ կամենմամ է:

## ԱՅՍԻԼ

Այս բռալէիս, տիկին... Բայց ահա ինքը պարոնը:  
Մարզարտի նշանով դուրս է գնում նախասենեակ:

## ՏԵՍԻԼ Բ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐԿԱԴԻ, գիշերազգեասով:

ԱՐԿԱԴԻ, յօրանշելով գալիս է իր սենեակից:  
Ինչքան քնել եմ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Այդ ինչ կարգ է, ասա, խնդրեմ. մի՛թէ չզիահս,  
որ տանը օտար աղջիկ կայ. նա խկոյն դուրս կը  
կայ. նրա մօտ էլ պէտք է այդպէս երևան:

## ԱՐԿԱԴԻ

Եթէ մեր տանն է կենում, էլ ինչ օտար:  
ՄԱՐԳԱՐԻՏ

Խնդրեմ, խնդրեմ, գնա հագնուիր խկոյն. այդ  
ինչ բաղաքավարութիւն է:

## ԱՐԿԱԴԻ

Գնում եմ, գնում, լաւ:

Նստում է աջ կողմը եւ դարձեալ յօրանցում:  
ՄԱՐԳԱՐԻՏ, ծեռքը զիմին տանիլով:

Աշխ:

ԱՐԿԱԴԻ  
ԽՍԼՈՅՆ, խկոյն... Թնդ մէկ ձգձուեմ:

ՄԱՐԳԱՐԻՏ, տեղից վեր թոշելով:  
Անտանելի՛ է... Ես կը հեռանամ, եթէ դու չզնաս:

ԱՐԿԱԴԻ, վեր կենալով:  
Մարսափելի կիմ ես. մարդ իր տան մէջ էլ հան-  
գոտութիւն չանենամ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Գնա, քո սենեակնւմ հանգստացիր... էլ ուր էիր  
այդպէս վաղ պարթնում:

## ԱՐԿԱԴԻ

Լաւ, լաւ, բաժակս տնտը, ես իմ սենեակը կ'եր-  
թամ:

ՄԱՐԳԱՐԻՏ, ածելով մի բաժակ սուրճ:

Ահա, վեր առ:

ԱՐԿԱԴԻ, վերցնելով բաժակը:

Այս ինչ հիանալի պաքսիմատ է... Ո՞րտեղից են  
դնել:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ճետոյ, յետոյ, զնա, շնառով հագնուիր:  
ԱՐԿԱԴԻ

Գնդում եմ, գնում: (Քնիշութեամբ նայելով:) Բայց  
ինչ զեզեցիկ ես դու այսօր, Մարզարիտ: (Մօտենա-  
լով:) Կարելի՛ է մէկ համբոյր տաս:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ճեռացէք, խնդրեմ:

ԱՐԿԱԴԻ, աւելի մօտենալով:

Ճշմարիտ, այսօր շատ ես դուր զալիս ինձ:

ՄԱՐԴԱՐԻԾ, զնալով հակառակ կողմը:  
Կատարեալ պատիժ է:  
ԱՐԿԱԴԻ, բաժակը դնելով սեղանի վրայ:  
Փանդա...  
Սուլիով օսկերէտայից մի եղանակ, զնում է իր  
սենեակը:  
ՄԱՐԴԱՐԻԾ, մենակ:  
Եյս մարդը հետպիեաէ անտանելի է դառնում:  
(Նեղացած նստում է:) Աշխ...

Վերջնում է մի ոսկեզօծ գիրք եւ լուռ կարդում է,  
յետոյ զլուխը ձեռքի մեջ առնելով, արմնելով  
յենվում է սեղանին:

## ՏԵՍԻԼ Գ

## ՄԱՐԳԱՐԻԾ, ՀԵՂԻՆԵ

ՀԵՂԻՆԵ, մտնում է զիխարկով իր սենեակից:  
Չուշացած տրդեօք, Մարգարիտ:  
ՄԱՐԴԱՐԻԾ  
Ո՛չ, ո՛չ, հոգիս. նստիր, խնդրեմ... (Յուրօ ածե-  
լով:) ի՞նչ արիր, ի՞նչ շինեցիր, պատմիր, տեսնեմ:  
ՀԵՂԻՆԵ, վերցնելով զիխարկը:

Ինկոյն, Մարգարիտո... Միայն առա, ինչու իս  
տխուր:

## ՄԱՐԴԱՐԻԾ

Ոչինչ:

## ՀԵՂԻՆԵ

Առաւտուանից արդէն նկատում եմ, որ մի բա-  
նից վշացած ես:

ՄԱՐԴԱՐԻԾ  
Ուշադրութիւն մի դարձնիր, խնդրեմ, դու քո գոր-  
ծերի մասին պատմիլ:  
Հնչյունում է սեղանի վրայ դրած զանգակը:  
ՀԵՂԻՆԵ

Օ՛, գործերս առժամանակ հիանալի են զնում.  
մօղա եմ ընկնում ինչպէս վարժուհի. շատերն են զի-  
մուս... Կարծեմ ժամանակ չափակի ունենամ ամեն-  
քին հասնելու:

ՄԱՐԴԱՐԻԾ  
Ջատ ուրախալի է, չեղինչս... ես հաւատա-  
ցած էի, որ գործերդ լաւ կ'եթամն: (Տալով ծրարը:)  
Ահա, կարծեմ, մի հրաւէր ես: (Ուսիլն, որ մտել էր  
նախասենեակից:) Պարոնի բաժակը ապրէք:  
Ոչսիլը աչքերը վայր թողնելով, զնում է բաժակը  
արծաթեայ փոքրիկ սկուտեղի վրայ եւ տանում  
է Արկադի սենեակը:

ՀԵՂԻՆԵ, նամակը կարդալուց յևոյ:  
Այն, յիրաւի մի նոր հրաւէր է... Զարմանալի  
երեսին է, ճշմարիտ. կամ ամենեին ոչ ոք չէ հրաւի-  
րում, կամ հինց ոք մէկը հրաւիրում է, ամենքն էլ  
աշխատում են միմեանց առաջը կարել... Այս ի՞նչ  
տեսակ բան է:

ՄԱՐԴԱՐԻԾ  
Դու էլ վրանց միջից ընտրութիւն արա... Աւելի  
լաւ է մարդ ընտրելու բան ունենայ, քան թէ ամե-  
նեին ոչինչ չունենայ:

## ՀԵՂԻՆԵ

Բայց ժամանակը կորչում է իդուր... Այն ի՞նչ ոք

կարելի է գասատան մէջ բաղմաթիւ աշակերաների հետ կատարել մի ժամումը, այժմ ամբողջ օրեր կը պահանջէ միայն երեք-չորս աշակերախ համար:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Այն, քեզ ուսումնաբան է հարկաւոր:

#### ՀԵՂԻՆԵ

Այն, ուսումնաբան: Այնաեղ ես իմ դերումն եմ, այնաեղ ես զգում եմ, թէ արդարի զործ եմ կատարում. ես իմ պաշտօնիս վսեմութիւնը գասատան մէջ եմ միայն հասկանում... Այս, Մարգարիտ, երբ ես կանգնած եմ երեսուն-քառասուն աշակերաների առաջ, երբ նրանց վասվուն աչքերն ինձ են նայում, երբ հարց ու փորձ անելով համոզվում եմ, որ մի ժամուայ ընթացքում նրանք ամնենքն էլ մի բան սովորեցին ինձանից, ես ինձ երջանիկ եմ համարում այն ժամանակ:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Սատուծով կրկին կը հասնես նպատակիդ:

#### ՀԵՂԻՆԵ

Այն, իմ կոչումը ուսումնաբանի մէջ է... ի՞նչպէս լաւ էի իմ պաշտօնում, որշափ երջանիկ... Բայց ի՞նչ արած, ուրիշ ելք չկար՝ պէտք է կամ գաղափարներից հրաժարուի, կամ պաշտօնիցս... Երեք տարուայ աշխատանքու իդուր անցաւ:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Ափսնս, շատ ափսոս...

#### ՀԵՂԻՆԵ, ազքերը սրբելով:

Ափսնս իմ հրեշտակի նման աշակերաներ... ես նրանց այնպէս էի սիրում, ինչպէս իմ հարազատ

քոյր ու եղբայրներիս... 2է, ես պէտք է իմ սեպհական ուսումնաբանն ունենամ, որ կարողանամ առանց ուրիշի միջամտութեան իմ ուղած ձևն ու կերպանքը տալ նրան:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Խսրակ ցանկանում եմ քեզ այդ բանը, իմս Հեղինէ:

#### ՀԵՂԻՆԵ

Ճնորհակալ եմ, հոգիս, այսպէս թէ այնպէս՝ ես կը հասնեմ նպատակիս... Միայն զու մի պատմիք, թէ ի՞նչ է պատահել քեզ... Քանի օր է նկատում եմ, որ զու թէ աշխատում ես միշտ ուրախ երեալ բայց հետպհետէ աւելի ու աւելի տիրում ես... Դու ծածկում ես ինձանից քո տիրութեան պատճառը. զու երջանիկ չես, Մարգարիտ:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞հ, թանկագին իմ հեղինէ, այն, զու քո առաջ տեսնում ես ամենաթշուառ մի կին:

#### ՀԵՂԻՆԵ

Ի՞նչպէս... Միթէ ճշմարիտ զու անբաղդ ես:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Այն, անբաղդ եմ... (Լոռութիւն:) Օ՛, եթէ հնար լինէր ճանաչել մարդկանց այնպէս, ինչպէս որ նրանք են իսկապէս, այն ժամանակ, կարծում եմ, աշխարհիս երեսին ոչ մի կին անբաղդ չէր լինիլ... Կարո՞ղ էի արգեօք մաքսվս անզամ անցկացնել, թէ այն բարի, աղնի, համեստ երիտասարդը, որ մի քանի տարի առաջ ներկայացնել ինձ իրրե իմ վեսացու,

այս անառակ, վաւաշոտ, խարերայ մարդն է, որին  
դու տեսնում ես այժմ որպէս իմ ամուսին:  
ՀԵՂԻՆՔ, կցելով ձեռքերը եւ զարմացած:  
Մարգարիտ...

## ՄԱՐԳԱՐԻՏ

Մի դարմանաբ, հոգիս, խօսքերիս մէջ չափազան-  
ցութին չկայ... Ահա, անո՞ւ պարոնը նոր է զարթ-  
նում. առաւօտեան ժամի չորսից յետոյ է առն եկիր:  
Ես չեմ կասկածում, որ նա ամբողջ զիշեր անառա-  
կութեամբ է անցկացրել... Այս, այն:

## ՀԵՂԻՆՔ

Եւ դու չե՞ս սիսալվում:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ո՛չ, ես գիտեմ, թէ ինչ եմ ասում. պարոն  
ամուսնու ես լաւ եմ ճանաչում... (Լոռութիւն:) Գուցէ  
ինձ պատիւ չէ բերում այսչավն էլ ասել, բայց եթէ  
բեղ ես շասեմ, Հեղինէ, էլ ում ասեմ, էլ ում բանամ  
սիրոս... (Ձեռքը կրծքին տանելով:) Էլ հատար այս-  
տեղ... (Լոռութիւն:) Եթէ ամբողջ աշխարհն անգամ  
ինձ տան, էլ աչքիս ոշինչ չի երկալ... (Որոտափում  
է:) Կարծես թէ ես ինձ ծախած լինիմ այս փառ-  
քին, այս հարստութեանը...

Աչքերը սրբում է:

## ՀԵՂԻՆՔ

Խեղդ իմ Մարգարիտ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛՛, Հեղինէ, թէ ինչ տանջանքներ եմ կրել այս  
տանը և ինչքան արցումք թափել այս ոսկէ պատերի  
մէջ, այդ միայն Աստուծուն է յայտնի...

ՀԵՂԻՆՔ  
Խոլ ամբողջ հասարակութիւնը քեզ երջանիկ է  
համարում և շատերը մինչեւ անգամ նախանձում են  
վիճակիդ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Նախանձում են... Հըմ... Հասարակական կար-  
ծիքի սարուկ եմ գարձել, Հեղինէ, և ոչ մի կողմից  
փրկութիւն չկայ...

Լոռութիւն:

## ՀԵՂԻՆՔ

Բայց մէկ բան շատ է զարմացնում ինձ, Մարգա-  
րիտ. ամուսինդ, ոլքան կանողացայ նկատել այս մի  
քանի օրս, միշտ բաղրութեամբ է վարփում հետզ...  
Եթէ նա քեզ չսիրել, հազիւ թէ այդպէս լինէր:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Գիմնկ, գիմնկ, սիրելիս, բոլորը դիմակ է... Նա  
ինձ հետ այդպէս վարփում է միայն քո ներկայու-  
թեամբ, ուրիշների առաջ, հասարակութեան մէջ,  
թէս ինքն էլ լաւ գիտէ, որ ես իրան շեմ հաւա-  
տում... Այս, նրա բարփութեան և ազնութեան այդ  
դիմակն էր, որ ինձ մոլորեցըց:

## ՏԵՍԻԼԻ Գ

ՆՐԱՆՔ, ԷԼԻԶ, ԱԲԷԼ, պաշտօնական հասարակ նշա-  
նազեստով, պարանոցին շքանշան:

## ՄՊԱՍՍԻԱԲ

Տիկին և պարոն Մաստակեաններ:

ՄԱՐԴԱՐԻԾ, ՀԵՂԻՆԵՐԻՆ, ցածր եւ դժողոն: Ամուսնուս մաելիմ բարեկամներն են: (Յռաջ զնալով եւ սառը բաղաքավարութեամբ:) Համեցէք:

Ապասաւորը գուրս է զնում:

ԱԲԷԼ, ձեռքին Թերթապահ:

Բարի օր ձեղ, տիկին:

ՄԱՐԴԱՐԻԾ, ձեռք տալով:

Բարի ձեղ, պարսն:

ԷԼԻԶ, նոյնպէս:

Բարի, սիրելի Մարգարիտ, ինչպէս ես:

ՄԱՐԴԱՐԻԾ

Ճնորհակալ եմ, դու ինչպէս ես:

ԷԼԻԶ

Ինչպէս տեսնում ես, լու եմ:

ԱԲԷԼ

Ինչի՞ լաւ շենք լինիլ, փառք Աստուծոյ. ջաններս սաղ, քէֆներս քօքը, հայցներս բօլ, հա լու ենք ու լու, էլլ:

ՄԱՐԴԱՐԻԾ, հրաւիրելով:

Համեցէք, խնդրեմ: (Մեկնելով ձեռքը զէպի Հեղինէն: ) Օրիսլու Հեղինէ:

ԱԲԷԼ

Գիտեմ, զիտեմ, ճանաշում եմ: (Ձեռք տալով Հեղինէն, բայց խօսքերն ուղղելով Մարգարտին:) Այն զիշերը չըր, այն պարահանդէսի զիշերը, որ ժողովարանում միասին ընթրիք արինք: (Հեղինէն:) Ասլիս, շատ ապրիս, զաւակս:

Թերթապահը դնում է աջ կողմի սեղանի վրայ:

ԷԼԻԶ, համբուրելով Հեղինէն:

Իսկ մենք նոյն զիշեր բարեկամացանք արդէն: ՄԱՐԴԱՐԻԾ

Նստեցէք, խնդրում եմ: Մի - մի բաժակ սուրճ, եթէ թոյլ կը տաք:

ԷԼԻԶ

Ո՛չ, շատ չնորհակալ ենք, մենք պրդէն խմել ենք: ԱԲԷԼ,

Ես իմ սուրճն էլ, իմ թէյն էլ վագուց խմել-պրծել եմ: ՃԵՂԻՆԵՅ, Մարգարտին, կիսածայն:

Ես զնամ, տեսնեմ ինչ են ուզում: (Հերերին:) Ներողութիւն եմ խնդրում, ես ստիպուած եմ զնալու: ԱԲԷԼ,

Վա, մեր գալլ ձեղ դուր չեկաւ, ինչ է: ՃԵՂԻՆԵՅ

ԱՌԱ, ինչ էք հրամայում, պարսն, ես արդէն զընալու վրայ էի, երբ դուք եկաք: ՄԱՐԴԱՐԻԾ, նամակը տալով Հեղինէն:

Այս, օրիսրդին ահա հրաւիրել են:

ԱԲԷԼ

Գինա, գինա, զաւակս, շատ ապրիս. գործիդ միշտ այդպէս մըի եղիք: ՃԵՂԻՆԵՅ

Ջատ չնորհակալ եմ, պարսն: (Ձեռք տալով:) ՄԻԱՅՐ բարեւաւ: (Ելիզին, նոյնպէս:) Յաւեսութիւն, տիկին, ներկրեցէք, խնդրում եմ: (Մարգարտին:) Ես շուտով կը վերպատճամ, Մարգարիս:

Գլխարկը ձեռքին դնում է իր սենեակը:

## ՏԵՍԻԼ Ե

ՆՐԱՆՔ, առանց ՀԵՊԻՆԷՒ

## ԱԲԷԼ

Այս ի՞նչ է նշանակում. մինչև այժմ տաճն է մեր  
վսիմաշուր պարոնը:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Այս գիշեր շատ ուշ է տուն եկել:

ՀՆՀԵՂՆՈՒՄ է զանգակը:

## ԱԲԷԼ

Զարմանում եմ... Գիշերս նա մեղ մօտ էր և գեռ  
ժամի տաճնում չկը չկար, փախաւ. պէտք է տուն  
վնամ, ասաց... Ջատ խնդրեցի, բայց չկացաւ...

## ԷԼԻԶ

Ո՛վ գիտէ ճամհապարհին ում է պատահել. դու չես  
տառմ, որ գործ շատ ունի:

## ԱԲԷԼ

Մի պատճառ կը լինէր, էլի՞:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Իհարկէ առանց պատճառի չէր լինիլ: (Նորից հըն-  
չեցնում է զանգակը. մտնում են՝ նախասենեակից սպա-  
սաւորը և Հեղինէի գոնից [Զառ Շաշէ Երբորտ Շառչէ Երա-  
ռազ:] Աէսիլը:) Այս ուր էք, Աէսիլ, այսքան կանչում եմ  
ձեզ: (Սպասաւորը դուրս է գնում:) Հաւաքեցէք այս  
ամենը:

ԱԲԷԼ, Սէսիլին, մինչդեռ սա հաւաքում է սուրճի բոլոր  
պարագաները:

2 գիտես, սիրելիս, կարելի՞ է պարոնին տեսնել.  
Հարկաւոր գործ ունիմ:

ՍէՍԻԼ, նազով:

2 գիտեմ, պարոն:

ՄԱՐԳԱՐԻՏ, Սէսիլին:

Ասացէք, որ յայտնեն պարոնին:

ՍէՍԻԼ, ցածր:

Իսկոյն, տիկին:

Սկուտենը ձեռքին դուրս է գնում նախասենեակ:

Աթէլ առանձին հաւանութեան նշան է անում

Սէսիլի վերաբերմամբ:

Էլիզ, որ նետարբերութեամբ գննում էր Աէսիլին:

Այս ազախնին նոր էք վարձել... Անցեալ անգամ,  
կարծեմ, դա չկար:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, կար. մէկ ամսից աւելի է մեղ մօտ է:

## ՏԵՍԻԼ Զ

ՆՐԱՆՔ, ԱՐԿԱԴԻ, պաշտօնական հասարակ նշանազգես-  
տով, կրօքին աստղանշան, իսկ պարանոցին շքանշան:

## ԱՐԿԱԴԻ

Ա՛, բարնվ, հաղար բարի էք եկել:

Տալիս է ձեռքը նախ էլիզին եւ ապա Աթէլին:

## ԱԲԷԼ

Բարով, ձերդ վսիմութիւն... Կէս օրին անց է և

դուք գեռ տանն էք: Երեկոյեան մեղ մօտ ընթլիքի  
էլ չմնացիք. պէտք է տուն զնամ, կինս մեղք է, ա-  
սում է... Այդ է:

### ԱՐԿԱԴԻ

Հաւատացէք, յարգելի բարեկամս, ես ինքս էլ չէի  
սպասում... Հէնց ձեր տանից մի տասը քայլ հազիւ  
էի անցել, որ իմ լաւ բարեկամներիցս մէկը պատա-  
հեցաւ, արտասահմանից նոր էր եկել... Կամենում էի  
հետա տուն բերել, բայց որովհետեւ մի փոքր ուշ էր,  
մտածեցի՝ անհանդիսա չանեմ կնոջս... (Մարգարտին  
ձեռք տարով:) Ա՛խ, բարի լոյս, անզինս, լնչպէս ես:  
(Մարգարիտը լուռ ողջունում է:) Խօսելով զնացինք հիւ-  
րանց, ուր նա իջել էր... Դէհ, զիտէք էլի, երկու  
լաւ բարեկամ որ միմիանց պատահում են, էլ զերջ  
չի լինում նրանց քաղցը խօսակցութեանը... (Խորհրդա-  
ւոր հայեացը է ծառում էլփոք վրայ, որ թաշկինակով ծած-  
կում է բերանը:) Ժամի շորսն անց էր, որ բաժանուե-  
ցանք:

Էլփոք թաշկինակը բերանին բոնած հազում է:

### ԱԲԷԼ

Տեսէք, Է. ուղիղ ժամի շորսն էր, որ սա էլ ինձ  
զարթացրեց իլ աղմուկով... Թրը՛իսկ, թրը՛իսկ...  
Գնացին, եկան, վայր զցեցին, կարծեցի զաղեր են  
եկել... Դուրս նայեմ, լնչ տեսնեմ. աղջիկ պարոնս  
մենակ բոլթա է տալսս զահլիճում... Ի՞նչ է, ի՞նչ է  
պատահել. սա թէ՛ վախեցայ, զետինը ժաժ էկաւ,  
ասում է... Դուք իմացաք զետինի ժաժ զալը... Ը՞մ,  
լնչ զետին ժաժ զալ, ի՞նչ ֆլան, ի՞նչ ֆստան... Մի  
ասիլ, երազումը վախեցել է աղջիկ-պարոնս, վեր է

թռել յանկարծ, քնախթաթախս դուրս է ընկել դահ-  
լիճ, ես հօ միւս ծայրին եմ քնած, դիպել է աթո-  
ովին, աթուոն էլ միւսին ու երկուուը միասին՝ շրջ՝ սկա-  
թըլլիկ, վայր են թափփում յատակի վրայ... Գե-  
տինը ժաժ էկաւ, ասում է... (Ծիծաղում է...) Այդպէս  
որ ամեն ժամանակ զետինը ժաժ զայ, այդ ուր  
կ' երթայ, ձեղ եմ հարցնում..., ել քարը քարի վրայ  
չի մնայ, Ասուուած է վկայ:

Էլիջ, ամաչելով:

Վա, ես լինչ անեմ, որ վախեցայ:  
Խորհրդաւոր հայեացը է զգում Արկազիի վրայ. այդ  
նկատում է Մարգարիտը, որ սկսում է հետզինաէ  
աւելի եւ աւելի յուզուել:

### ԱՐԿԱԴԻ

Զատ բնական է, որ մարդ երազի մէջ վախենայ,  
լնչ կայ որ:

ԱԲԷԼ

Է՞հ, ձերդ վսեմութիւն, վախենալն էլ իրանից է...  
Սինքան ասում եմ՝ մենակ մի քնիր, զիշերն առան-  
ձին սենեակ հարկաւոր չէ քեզ... բայց ում կը հաս-  
կացնես. կինարմատի հալիցը ով կարող է զալ...  
Այս ամենը ձեր չնորդիւն է, ձերդ վսեմութիւն. չէ  
որ զնուք ես առանձին-առանձին սենեակ ունիր...  
Նայեց կինս և սովորեց:

### ԱՐԿԱԴԻ

Է՞հ, պարոն Աբէլ, նոր ժամանակ, նոր սովորու-  
թիմնիր...

ԱԲԷԼ

Գուք վիտէք, ձերդ վսեմութիւն... Քնիլն էլ որ  
աշուսուններ

մօղայի տակ դցեցիք, էլ ինչ բարիքի սպասի մարդ...  
Տեսնեմք վերջն ինչ է լինելու... ես միայն այսքանը  
կ'ասեմ, որ եթէ սրա հաւատարմութեան մասին բո-  
լորովին վստահ շինէի, մի բովէ էլ կողքից չեի  
հեռացնիլ, հաւատացէր ինձ:

ԷԼԻԶ

Դու հօ չես կարող փոխել աշխարհի սովորու-  
թինը...

ԱԲԵԼ

Նորից մի սկսիր, լաւ:  
ԱՐԿԱԴԻ, էլիզին, որ խորհրդաւոր կերպով նայում է իր  
ձեռքի պայուսակին:

Այդ ինչ հիանալի պայուսակ է, տիկին:  
Առնում է ձեռքից:

ԱԲԵԼ, էլիզին:

Մեր տատերը որ այդ չեին գրզծ ածում, է, հա-  
ւատահ հարիւր տարի չեին ապրում, չ՞:

ԷԼԻԶ

Զարմանալի դատողութիւն... Զգիտեմ թէ պայ-  
ուսակի գործածութիւնը ուժմ ինչ վնաս կարող է  
տալ:

ԱՐԿԱԴԻ, իբր թէ զնում է պայուսակը:  
Հիանալի՞ է, հիանալի՞:

ԱԲԵԼ, էլիզին:

Ո՛վ է իմանում, հոգիս, կարելի է մեծ վնասը  
հինց դրա մէջն է: (Մարգարտին, մինչդեռ սա եւ էլիզը  
տարբեր յուզմունքով նայում են Արկադիին, որ այս մի-  
ջոցին պայուսակից մի փոքրիկ թուղթ է հանում ծածկա-  
բար:) Կատակ չեմ անում, տիկին, այնպիսի բաներ

մօղա եկան, որ էլ մարդ չէ իմանում թէ ինչիցն է  
մեր կեանքը կարմանում:

ԱՐԿԱԴԻ, թուղթը ծոցումը պահելով:

Զարմանալի լաւ ճաշակ ունիք, տիկին: (Պայուսա-  
կը վերադարձելով էլիզին:) Բարով վայելէք:

ԷԼԻԶ

Միթէ այդքան հաւանում էք:  
ԱԲԵԼ, Մարգարտին, որ կուրծքը բռնած եւ բոլորովին  
զունաթափ արդէն ոտքի է կանգնել:

Տիկին... (Էլիզին ճրելով:) Այս կնդմը նայիր:

ԱՐԿԱԴԻ, էլիզին:

Հիանալի՞ է, հիանալի՞... (Մարգարտին:) Ի՞նչ եղաւ,  
սիրելիս, ինչ պատահեցաւ:

ՄԱՐԳԱՐԻԾ, սաստիկ յուզուած:

Ո՛չինչ, ոչինչ... (Արելին:) Ներողութիւն, պարոն,  
ևս ակար եմ:

ԱԲԵԼ

Խնդրում եմ, տիկին:  
ՄԱՐԳԱՐԻԾ, սիրով բռնած զնում է. յետոյ, առանձին,  
զառն նեղնութեամբ:

Հիանալի՞ է, հիանալի՞...

Գնում է իր սինեակը. բոլորեքեան շուարվում են:

ԱՐԿԱԴԻ, անմիջապէս:

Կացէք, գնաք կացէք:  
Շուարվ նետեւում է Մարգարտին:  
ԷԼԻԶ, առանձին:

Արդեօք բան նկատեց:

5\*

ԱԲԷԼ, անուն ասես բժիշկները կը հնարին... Ցալը  
Այս ի՞նչ է նշանակում: Եղանակում պատճեն առաջ արքուն  
Եղիզը յանկարծ վազում է գէպի Արևադին, որ վե-  
րադառնում է: ԱՐԿԱՐԻ, զռներում:  
Ո՛չինչ, ոչինչ, հանգիստ եղէք:  
Ելիջ, Արևադին, ցածր:  
Կարելի է տեսմա: ԱՐԿԱՐԻ, նոյնպէս:  
Ո՛չ նրան այդպէս պատահում է երրեմն: (Բարձր:)  
Նսեցէք, ես խոյն կը վերադառնամ: Նսեցէք,  
ինպէս: Յատ է գնում:

ՏԵՍԻԼ, Ելիջ  
ԱԲԷԼ, Ելիջ  
Յաւագար է եղել խեղճը:  
Ելիջ  
Ո՛չ թէ ցաւագար, այլ խտերիկա ասն:  
ԱԲԷԼ  
Ում ի՞նչ պատահի, քեզ համար բոլորն ել խտե-  
րիկա է:  
Ելիջ  
Ո՛ր բժշկն կամենաս հարցրու: ԱԲԷԼ  
Խտերիկան ի՞նչ բան է, ասն, ինպէս... Ի՞նչ

յիմար անուն ասես բժիշկները կը հնարին... Ցալը  
ցալ է, հիւանդութիւնն էլ հիւանդութիւն: Հեաը խօ-  
սկիս էլ պարզ տեսնում էի, որ գունաթափում էր...  
Կոչի գու չես գունաթափում այդպէս կամ ի՞նչի գու  
շոնիս այդ խտերիկան, եթէ յաւ բան է:

Ելիջ

Աստուած մի արացէ:

ԱԲԷԼ

Եյն, ես քեզ ասում եմ, մօղնի բաներից ձեռք  
վերցրու, եթէ ոչ մէկ օր քեզ ել կը պատահի այդ  
խտերիկա է, ի՞նչ զանցումար է:

Ելիջ

Վայ, անիծում ես:

ԱԲԷԼ

Ընդհակառակը, իմ սիրուն թոշնակս, ես քեզ  
խրատում եմ. այդ իմ պատաւորութիւնն է... Օրի-  
նակ՝ ի՞նչ է աւելանում, որ անունդ զրել ես Ելիջ...  
Մկրտութեանդ անունը Եղիսարէթ է, Եղիսարէթ էլ  
կաց քեզ համար. եթէ ոչ, ի՞նչ է՝ Ելիջ, Ելիջ...  
Քաղցրութիւն ես ուզում, ահա քեզ՝ Եղիս, կամ Սա-  
րէդ... Արի Սարէդ գատիր, եթէ ուզում ես:

Ելիջ

Լուացուլար եմ, ի՞նչ է:

Գնում է եւ Մարգարտի սենեակի գնից ծածուկ  
նայում:

ԱԲԷԼ, առանձին:

Ինչիցն է, որ կանայք այսպէս հետաքրիր են:  
Հետեւում է կոոչ օրինակին:

**ԷԼԻԶ,** ուրախ:

Նա բոլորին առաղջ ման է զալիս:  
ԱԲԵԼ,

ԷՇ, փառք Աստուծոյ... երանի մի շուտով այն  
մարդը գուրս գար, (Թերթապահից մի ծրար հանելով:)  
մէկ այս ցաւից աղասուէի:

**ԷԼԻԶ**

Սպասիր մի փոքր, ի՞նչ եղաւ քեզ:  
ԱԲԵԼ

Ինչպէս կը հրամայես, իմ սիրելի Սարէդ:  
Առանձին, ծիծաղիով երեսը ծամածում է:

**ԷԼԻԶ**

Ես քեզ հրամայում եմ, որ այսուհետեւ չհամար-  
ձակուիս Սարէդ ասել ինձ:

**ԱԲԵԼ**

Լաւ, լաւ, ներիր, մի բարկանար, իմ անզին էլիզ,  
մա շէ՛ր էլիզ... Դու զիտես, որ ես քեզ շատ եմ  
սիրում և ոչինչ չեմ խնայիլ քեզ համար... Ես պատ-  
րաստ եմ գլուխս քեզ մատաղ անել:

**ԷԼԻԶ**

Իհարկէ զիտեմ և հէնց դրա համար էլ քո մէկ  
մաղը ամրող աշխարհի հետ չեմ փոխիլ:

**ԱԲԵԼ,** զրկելով:

Իմ աղաւնեակս... իմ հրեշտակս...  
ԷԼԻԶ, աղասուելով:  
Գալիս են, զալիս...

**ՏԵՍԻԼ** Ը

**ՆՐԱՆՔ,** ԱՐԿԱԴԻ

**ԱՐԿԱԴԻ**, ծափահարելով:

Ապրիք, ապրիք, կեցցէք:  
ԷԼԻԶ, ԱԲԵԼԻՆ, ցածր:

Խայտառակեցիր:

**ԱՐԿԱԴԻ**

Ո՛րշափ հաճելի է սիրով ամուսիններ տեսնելը:  
ԱԲԵԼ, փոքր ինչ շուարուած:

ԷՇ, ի՞նչ անենք, ձերդ վսեմութիւն, շատ մարդ  
սովորութիւն ունի՝ ուրիշի կնկան է զրկում, այս  
մէկն էլ իմ կնկան ես ինքս լինիմ զրկած, ի՞նչ կայ որ:

**ԱՐԿԱԴԻ**

Կատարելապէս իրաւոնք ունիք, բարեկամու:  
Յանդիմանական հայեացք է ձգում էլիզի վրայ:

ԷԼԻԶ, հայեացքով հանգստացնում է Արկադիին:

Ի՞նչպէս է Մարգարիտս:

**ԱՐԿԱԴԻ**

Փառք Աստուծոյ... Մի քիչ կողը ցաւում էր,  
բայց անցաւ: Երեխ մըսել է: (Աբէլը շարժուածքով յի-  
շեցնում է չշիզին, որ ինքն ուղիղ էր նկատել, թէ Սար-  
զարիտը հիւանդ է:) Միայն ներողութիւն է լինդրում,  
որ չէ կարող գուրս գալ... Ես ինքս առաջարկեցի,  
որ փոքր ինչ հանգստանայ:

ԱԲԷԼ

ՄԵՆՔ ՀՕ ՕՄԱՐԻՆՔ ՀԵՆՔ, ՃԵՐՊ ՎԱԽՄՈՒԺԻՒՆ. ԹԱՂ  
ՀԱՆՊԱՏԱՆԱՅ, ԱՏԵԼԻ լաւ:

ՄՈՄԵՆՈՒՄ է ԱԵՂԱՆԻՆ ԻՆ ՎՐԱՊՈՒՄ է ԾՐԱՐՈՎ:  
ԷԼԻԶ, ԱՐԿԱՊԻՒՆ, ցածր:

ՈՒՐԻՄԻ ԱԺԻՆ ՀԵ ՆԿԱՏԵԼ:

ԱՐԿԱԳԻ, ՆՈՅՆԱՐԵՍ:

ՀԱՆԳԻՍՄ ԵՎԻՐ... (ՈԹԵԼԻՆ, բարձր:) Այդ ԲԻՆ է,  
ԱՓԻՐԻՒՄ:

ԵԼԻՋ ՄԻ ԿՈՂՄԸ ՔԱՉՈՒԵԼՈՎ, ՎՐԱՊՈՒՄ Է ԱԼՔՈՄՈՎ:  
ԱԲԷԼ

ԶԵՐ ՎԱԽՄՈՒԺԻԿԱՆՔ յԱյտնի բարեգործութեան հա-  
մար հաւաքած...

ԱՐԿԱԳԻ, ընդմիջելով:  
ԴԻՄԵՄ, դիմեմ...

ԱԲԷԼ, ծրաբ տալով ԱՐԿԱՊԻՒՆ, ցածր:  
ԲՈԼՈՒՆ ԱՅՊԱԿԻ Է՝ ՓՈՂՆ ԷԼ, ՀԱՇԵՄԻՐՆ ԷԼ:

ԱՐԿԱԳԻ, ծրաբ դնելով ծոյը:  
ԼԱՄ, լամ...

ԱԲԷԼ, ԱՐԿԱՊԻՒՆ, ծածուկ:  
Ես իմ մասն արդին վերցրիլ եմ:

ԱՐԿԱԳԻ

Ջատ բարի... Ես այսօր հեթ կը հրամայիմ, սր-  
բուր գործելը վերջացնեն... ՈՒՐԻՇ ԲԻՆ կայ այլակի  
թերթապահում:

ԱԲԷԼ

Ամենահարկաւոր պաշտօնական թղթեր են, ճերպ  
վախմուժիւն:

ԱՐԿԱԳԻ

ԹՊՊԵՐ այստեղ, ևս շուտով կը վերապարձնեմ...  
Այլպէս, այլպէս՝ թերթապահով:

ԱԲԷԼ,

Եթէ թոյլ կը տաք, ճեր սենեակը կը տանեմ:  
ԱՐԿԱԳԻ

ԱՅս, դուք ինչի՞ էք նեղութիւն կրում:  
ԱԲԷԼ,

Ի՞նչ էք հրամայում; ճերպ վախմուժիւն, լինչ նե-  
ղութիւն:

Թերթապահը ծեռքին դուքս է զնում աջ դռնից:  
ԷԼԻԶ, վաղելով դէպի ԱՐԿԱՊԻՒՆ, ցածր:

Ես կարծում եմ, որ բռնուեցանք:  
ԱՐԿԱԳԻ

Ո՛չ, տառմ եմ. միամիտ եղիր... (Զերը տանելով  
ծոյը:) Այս ԲԻՆ ես դրել:

ԷԼԻԶ

Կը կարգաս, կ'իմանաս...

ԱՐԿԱԳԻ, ծոյից հանելով թուղթը:  
Ի՞նչ գաղանիք է:

ԷԼԻԶ

Ա՛, ինդիմ...  
Վաղում է դէպի ալքօմը եւ առաջուայ դիրքն ընդունում:

ԱԲԷԼ, վերապահալով:

ԲՈԼՈՒՆ կարգով դարսեցի սեղանի վրայ:  
ԱՐԿԱԳԻ, պահելով թուղթը:

Ճամ չնորհակալ եմ:

ԱԲԷԼ

Զարժէ, ճերպ վախմուժիւն:

ՏԵՍԻԼ Թ

ՆԲԱՆՔ, ՀԵՂԻՆԵ

ԱՐԿԱԴԻ, ՀԵՂԻՆԵԻՆ, որ մտնում է իր սենեակից:  
ԱՌ, օրիորդ ՀԵՂԻՆԵ, բարե ձեղ... Ի՞նչպէս էք,  
այսօր զեռ շենք տեսնում:

ՀԵՂԻՆԵ

Ձատ ՀՆՈՐՀԱԿԱԼ եմ, պարոն. դուք ինչպէս էք:  
ԱՐԿԱԴԻ

Ի՞նչպէս տեսնում էք, օրիորդ, ես միշտ լաւ եմ,  
միշտ առաղջ, միշտ էլ ուրախ... Կարծեմ, ափկնոջը  
և բարեկամիս ճանաշում էք:

ՀԵՂԻՆԵ

Այն, պարոն, փոքր ինչ առաջ մենք արդին տես-  
նուեցանք այստեղ:

ԱԲԵԼ, ԱՐԿԱԴԻԻՆ:

Ձատ լաւ բան էք արել, ձերդ վսեմութիւն, որ  
օրիորդին ձեղ մօտ էք ընդունել: Այսպիսի վատանգա-  
ւոր ժամանակ, երբ ամեն մի քայլափոխում մի-մի  
դայլի է հանդիպում մարդ, ձեղ ոլէս տէր ունենալը  
մեծ բազդ է: (ՀԵՂԻՆԵԻՆ:) Այն, օրիորդ: (Կլիզին:) Է՛հ,  
զնանք, հովիս, ժամանակ է: (ԱՐԿԱԴԻԻՆ,) Ներողու-  
թիւն:

ԱՐԿԱԴԻ

ԻՍԼՈՅԻՆ, ԻՍԼՈՅԻՆ: (Սեղմում է էլեբարական հնչակի  
լոճակը:) Մեր կառքով գնացէք, ինդրում եմ:

ԷԼԻԶ, կեղծելով:

Ի՞նչի՞ էք նեղութիւն քաշում, պարսն, շատ ՀՆՈՐ-  
ՀԱԿԱԼ ենք, այնպէս էլ կ'երթանք, հեռու չենք:  
ԱՐԿԱԴԻ

Ցատուկ ինդրում եմ:

ԱԲԵԼ,

Ճշմարիտ, իզուր նեղութիւն էք կրում, ձերդ վսե-  
մութիւն. չէ որ դուք ևս գնալու էք շուտով:

ԱՐԿԱԴԻ, սենեակի ժամացոյցին նայելով:

ՕՌ, ես զեռ բաւական ժամանակ ունիմ... (Ներս  
մտնող սպասաւորին:) Տիկնոջը և պարոնին մեր կառ-  
քով թանեն:

Սպասաւորը գուշու է տափս եւ դուրս է գնում:

ԷԼԻԶ, առանձին շեշտելով:

Ճատ ՀՆՈՐՀԱԿԱԼ ենք, որ այդպէս պատում էք  
մեղ... (Չեռք տալով:) Մնաք բարեաւ. մեղ մի մոռա-  
նաք, ինդրում եմ: (ՀԵՂԻՆԵԻՆ, համբուրելով:) Ցաեսու-  
թիւն, օրիորդ...

ՀԵՂԻՆԵ

Ցաեսութիւն, տիկին:

ԱԲԵԼ, ձեռք տալով:

Մնաք բարեաւ, օրիորդ... Ո՞ղ և առաղջ լինիք,  
ձերդ վսեմութիւն:

ԷԼԻԶ, ամուսնու թեւն առնելով, ՀԵՂԻՆԵԻՆ:

Մարգարիտ լաւ պահեցէք: (ԱՐԿԱԴԻԻՆ:) Ցայս ու-  
նիմ՝ այս անգամ երկար սպասել չէք տալ մեղ:  
ԱՐԿԱԴԻ, ուղեկցելով:

Անչափ բարի էք, տիկին:

Էլիզն ու Աբելը դուրս են գնում:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ժ Ա Յ Ա Յ Ա Յ  
ՀԵՂԻՆԵ, ԱՐԿԱԴԻ

## ՀԵՂԻՆԵ

Մարդարիստ ուր է:  
ԱՐԿԱԴԻ  
Իր սենեակումն է: (Հեղինէն կամենում է զնալ:)  
Սպասեցէք, օրիորդ:

ՀԵՂԻՆԵ  
Ի՞նչ կը հրամայէք:  
ԱՐԿԱԴԻ  
Ասացէք, խնդրեմ, օրիորդ, արդեօք զ՞ն էք ձեր  
սենեակից:

ՀԵՂԻՆԵ  
Ես շատ զոհ եմ, պարոն, իմ սենեակից և անշափ  
շնորհակալ եմ ձեր հիւրասիրութիւնից:  
ԱՐԿԱԴԻ

Ի՞նչ էք հրամայում, օրիորդ, այդ իմ պարտակա-  
նութիւնն է: Գուք այնպիսի սուրբ գործի էք ծա-  
ռայում, որ մարդ ինչ էլ կատարի ձեղ համար, դար-  
ձալ քիչ է... Տարածել լսու և գիտութիւն մատաղ  
սերնդի մէջ, պատրաստել հասարակութեան համար  
բարոյալէս զարգացած մայրեք... միթէ սրանից էլ  
աւելի վսեմ աշխատանք կայ աշխարհիս երեսին...  
Օ՛, ես սասարի յարգում եմ լուսաւորութիւնը և,  
հաւատացէք, զիահեմ զնահատել ձեղ նման աշխա-  
տաւորներին... Զեր. կոշտումը, օրիորդ, վսեմ է և

սուրբ. ես խոնարհվում եմ այդ կաշման տռաջ և եր-  
ջանիկ կը լինէի, եթէ կարսղանացի մի կերպ հաճելի  
գտնուել ձեզ:

## ՀԵՂԻՆԵ

Գուք չափից դուրս բարի էք, պարոն, շատ չնոր-  
հակալ եմ: Արկադի նույնականութեան մասին ամ  
ժամանակ առ ոչինչ չեմ խնայիլ, հաւատացէք... Ես շատ  
եմ սիրում կնոջս, շատ, և այդ պատճառով սիրում  
և յարգում եմ ամենին, ով նրան սիրում է... Խեղճը  
հիւրանդու է, տեսնում էք. միշտ ախուր, միշտ սիր-  
ութ ծածկուած... Զգիտեմ, ինչ անեմ, ինչպէս ու-  
րախացնեմ... ոչինչ չէ յաջողվում ինձ... Այս մի քանի  
օր է միայն, որ ես նրա երեսին երեսմն ժպիս եմ  
նշամարում... Աւրեմն գուք ինքներդ կարող էք դատել,  
թէ նրան պիսի զոհ լինիմ, որ գուք մեղ մօտ էք...  
Աստուած կը վարձատի ձեղ ձեր բարի, ազնիւ պար  
համար: (Ժամացոյցին նայելով:) Սակայն ժամանակ է...  
(Տարով ձեռքը:) Յատուկ ներողութիւն եմ խնդրում,  
օրիորդ, պաշտօնական գործերս ստիպում են ինձ  
ձեղ թողնելու: Յատուկթիւն, օրիորդ:

## ՀԵՂԻՆԵ

Յատուկթիւն, պարոն:  
ԱՐԿԱԴԻ, զնալով, մնկուսի:  
Օ՛, մրալիսի զեղեցիկ աշքեր...  
Գուրս է դնում:

ՏԵՍԻԼ ԺՈ.

ՀԵՂԻՆԵ, մինակ:

Ես այլես ոշինչ չեմ հասկանում... Միթէ Մարգարիտը սխալվում է... (Կամենում է մոնել Մարգարիտ սենեալը) Դուռը փակած է: (Կամաց բաղխում է զուռը լսվում է Մարգարիտ ձայնը՝ Ո՞վ է...) Ես եմ; (Գարձեալ Մարգարիտ ձայնը՝ իսկոյն;)

ՏԵՍԻԼ ԺԲ

ՀԵՂԻՆԵ, ՄԱՐԳԱՐԻՑ

ՄԱՐԳԱՐԻՑ, զգուշութեամբ դուքս նայելով:  
Դու մեհակ ես;

ՀԵՂԻՆԵ, ապշած:  
Այն:

ՄԱՐԳԱՐԻՑ, աչքերը սրբելով:  
Ամենքը գնացին:

ՀԵՂԻՆԵ

Այն, ամենքը: (Մարգարիտը նստում է եւ կրկին աչքերը սրբում:) Բայց դու ինչո՞ւ ես լաց լինում... Կրկին մի նոր վիշտ: (Լոռութիւն:) Ինչո՞ւ ոչինչ չես խօսում: (Կատելով կողքին, առնում է ձեռքը:) Ասա, հոգիս, ասա, ի՞նչ է պատահել. Չը որ ես քո ՀԵՂԻՆԵ եմ, դու ինձանից ոչինչ չունիս ծածկելու... (Թողնելով ձեռքը:)

Բաւական է, Մարգարիտ, բաւական. հանգստացիր,  
աղաչում եմ... Երեխ քեզ վշապրել են:  
ՄԱՐԳԱՐԻՑ

Ջատ, շատ...

ՀԵՂԻՆԵ

Ո՞վ... ամուսինդ:

ՄԱՐԳԱՐԻՑ

Սմուսիննա... Վազուց է որ ես նրան ճանաչել եմ.  
Նրա արարմունքն ինձ չի վրգովեցնում այլս... Բայց  
երբ քեզ խարում է քո ընկերուհին, որի հետ զու  
երեխայ մեծացել ես, որին դու քոյլը էիր համարում  
միշտ... Ե՞մ... (Ճարժուածքով արտայայտում է վերին  
աստիճանի յուսահատութիւն:) Իզուր չէր կասկածս...  
(Հեղինէն ապշում է:) Թողնենք, թողնենք, խնդրում  
եմ... Ես այժմ ոչինչ չեմ կարող ասել... Ես սաստիկ  
անպատճած եմ... բոլոր ցաւս արտայայտել անկա-  
րող եմ... Ես կը խեղզուեմ պատմելիս... Ինձ յիմարի  
տեղ են ընդունում... ինձ կոյլ են համարում...

ՀԵՂԻՆԵ

Հանգստացիր, Մարգարիտ, աղաչում եմ, հան-  
գըստացիր:

ՄԱՐԳԱՐԻՑ, ՀԵՂԻՆԵի ծեռքը բռնելով:

Այն, այն, քոյլիկ, այն, հոգիս, ես բոլորը կը պատ-  
մեմ քեզ, բոլորը, այժմ ներիր:

ՀԵՂԻՆԵ

Լաւ, լաւ, հանգստացիր միայն, յետոյ իհարկէ  
կը պատմես. այժմ ուրիշ բան խօսենք:

ՄԱՐԳԱՐԻՑ

Այն, ուրիշ բան, ուրիշ բան... Թոնդ մաքիցս հե-

սանան այն դպտելի տեսարանները... (բռնելով շեղինէի ձեռքը, նրա հետ միասին լուս ման է գալիս ծանր քայլերով և տիրապէմ, յետոյ բեկուած ծայնով; ) Գու ինչ արիր:

## ՀԵՂԻՆԵ

Չատ խիստ պահանջներ են առաջարկում, Մարդարիտ. երեք երեխայ, առաւօտնելը զասիր զանազան առարկաներից, նրանց հետ միասին՝ ճաշել, իսկ երեկոյեան՝ զրօսանք: Այդ շատ ծանր է ինձ համար... Ուրեմն պէտք է ամբողջ օրս նրանց նուիրեմ:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Յետոյ համաձայնեցիր:

## ՀԵՂԻՆԵ

Ո՞չ, մերժեցի:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Ո՞ւրան գոհ եմ, չեղինէ, որ մերժել ես... Այլև անկալուզ եմ առանց քեզ ասպել... Բացի քեզանից էլ ոչ ոք չունիմ:

## ՀԵՂԻՆԵ

Իսկ ես ո՞վ ունիմ բացի քեզանից:

## ՄՊԱՍԱԼՈՐ

Տիկին, մի անձանօթ զինուորական է:

Արծաթէ փորբիկ սկուտեղով առաջարկում է մի այցառուս:

ՄԱՐԴԱՐԻՑ, յուզուելով, վերցնում է այցետոմար:

Արտա... չէս Արա... մեան... (Սպասաւորին: ) Խընդրիք, (Սպասաւորը գուրս է դնում:) Ա՛խ, չեղինէ, իս այսպէս...

## ՀԵՂԻՆԵ

Ի՞նչ պատահեցաւ քեզ, Մարդարիտ. զու բոլորովին գումառառեցար:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Ո՞վ, ես... Միթէ...

## ՀԵՂԻՆԵ

Այն, այն, հոգիս:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Ա՛խ, նա բարձրանում է:

## ՀԵՂԻՆԵ

Իսկ ես փախչում եմ:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Սպասիր, սպասիր, խնդրում եմ:

## ՀԵՂԻՆԵ

Ես գործ ունիմ:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Մի քանի լուզէ միայն...

## ՀԵՂԻՆԵ

Կուշանամ, Մարդարիտ:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Աղաչում եմ... Ես իսկոյն... զմէ ընդունիր...

Գուրս է վազում իր սննեակը:

## ՏԵՍԻԼ ԺԳ

## ՀԵՂԻՆԵ, ԱՐՏԱՇԵՍ

ՄՊԱՍԱԼՈՐ, ծանուցանելով:

Պարոն Արտաշէս Արամեան:

## ԱՐՏԱՃԵՍ

Բարի ձեղ, օրիսրդ:

Ապասաւորը դուրս է գնում:

## ՀԵՂԻՆԵ

Բարի, պարն: (Միմանց ձեռք են տալիս:) Նստեցէք,  
խնդրեմ, տիկին Մարգարիտն իսկոյն դուրս կը գայ:  
Կատում են:

## ԱՐՏԱՃԵՍ

Գուցէ ես անյարմար ժամանակ եմ եկել:

## ՀԵՂԻՆԵ

Ընդհակառակը, պարոն Արտաշէս... Վաղուց է որ  
սպասում էինք ձեղ և ձեր բարեկամին... Ինչու նա  
էլ ձեղ հետ շնորհ շրերեց:

## ԱՐՏԱՃԵՍ

Ներսութիւն, օրիսրդ, պարահանդէսի երկրորդ  
օրը զիւղացիք տարան նրան մի կարեոր զործի հա-  
մար և ահա մինչի այժմ դեռ չէ վերադարձել... Այ-  
սօր ես ես թողնում եմ Թիֆլիսը:

## ՀԵՂԻՆԵ

Միթէ:

## ԱՐՏԱՃԵՍ

Այն, օրիսրդ, ստիպուած եմ... Եկել եմ հրաժեշ-  
տիս ողջոյնը տալու ձեղ և տիկին Մարգարիտն: (Նկա-  
տելով պատկերակալի վրայ դրած նկարը, յանկարծ:) Այսի...  
ներեցէք, խնդրեմ... (Մատենում է նկարին:) Սա տիկ-  
նոջ նկարածը պէտք է լինի:

## ՀԵՂԻՆԵ

Այն, պարոն Արտաշէս. այդ նկարը ներկայացնում

է այն պարտէզը, որը Մարգարիտ անց է կացրել իր  
մանկութիւնը:

## ԱՐՏԱՃԵՍ

Այն, այն, ծանօթ է ինձ... ԹՇ, մըքան քաղցր  
յիշողութիւններ...

## ՏԵՍԻԼ ԺՊ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, զգեատը փոքր ինչ կարդի բերած:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Պարոն Արտաշէս, բարի ձեղ:

## ԱՐՏԱՃԵՍ

Բարի ձեղ, տիկին... (Միմանց ձեռք են տալիս)  
ես հիացած նայում էի ձեր նկարին:

## ՄԱՐԳԱՐԻՏ

ԹՇ, այդ մի չնշին բան է: (Հրաւիրելով) Համեցէք,  
նստեցէք, խնդրեմ: (Կատում են:) Խոկ պարոն Լևոնն  
մոր է. չէ որ դուք խոսացաք միասին գալ:

## ԱՐՏԱՃԵՍ

Այն, տիկին, բայց նա զնաց զիւղը և զեռ երկի  
ուշ կը վերագառնայ:

## ՀԵՂԻՆԵ

Գիտեն, Մարգարիտ, պարոն Արտաշէսը զնում է:  
ՄԱՐԳԱՐԻՏ

## Միթէ...

Այն, տիկին, ես հինց այսօր զնալու եմ. Եկել եմ  
ձեղ բարի-միաք տոելու:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Միթէ այդպէս շուտ... եւ երկար կը տեի ձեր  
բացակայութիւնը:

## ԱՐՏԱՋԵՍ

Զգիտեմ, տիկին, այդ կախուած է հանգամանք-  
ներից. զուցէ մի քանի շաբաթ ուշանամ:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Իսկ ձեր նոր վէպը... զարունակում էք արգեօք:  
ԱՐՏԱՋԵՍ

Ի՞նչպէս չէ, տիկին, բոլոր աղատ ժամերս նրան  
ևմ նուիրում:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Յաջողութիւն եմ ցանկանում... (Լոռութիւն:) Այդ-  
պէս... Քննում էք ուրեմն...

ՀԵՂԻՆՔ, տեղից վեր կենալով:

Ներողութիւն եմ խնդրում, պարսն Արտաշէս,  
սովորած եմ, դասի եմ զնալու:

ԱՐՏԱՋԵՍ, նոյնպէս:

ՀԵՂԻՆՔ, ձեռով տալով Արտաշէսին:

Բարով գնաք, բարով զաք... եթէ պարսն Աստին  
տեսնէք, ինձանից շատ բարե արէք:

## ԱՐՏԱՋԵՍ

Անշուշտ, օրիսրդ:

ՀԵՂԻՆՔ, ձեռով տալով Արտաշէսին:

Բարով գնաք, բարով զաք... եթէ պարսն Աստին  
տեսնէք, ինձանից շատ բարե արէք:

## ԱՐՏԱՋԵՍ

Անշուշտ, օրիսրդ:

ՀԵՂԻՆՔ, ողջունում է եւ զնում իր սենեակը:

—co—

## ՏԵՍԻԼ ՃԵ

## ՄԱՐԴԱՐԻՑ, ԱՐՏԱՋԵՍ

## ԱՐՏԱՋԵՍ, նոտելով:

Ճշմարիտ որ շատ համակելի օրիսրդ է... Բա-  
րեկամս իդուր չէ այնպէս հրապարաւել:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Իրաւ... Ուրեմն պարսն կեռնը հաւանում է չե-  
ղինէիս:

## ԱՐՏԱՋԵՍ

Այն, տիկին, շատ է հաւանում:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Հեղինէս էլ յաճախ է մտարելում նրան... Փոխա-  
զարձ համակրանք...

## ԱՐՏԱՋԵՍ

Իսկ ես համոցուած եմ, տիկին, որ բարեկամս  
մինչեւ անզամ սիրում է օրիսրդին:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Այդպէս... Տայ Աստուած... Երկուսին էլ որտանց  
երջանկութիւն եմ ցանկանում:

## ԱՐՏԱՋԵՍ

Երբ երկու սիրա իրար հասկանում են և զնահա-  
տում, երջանկութիւնն այնքան էլ հեռու չէ նրանցից...

ՄԱՐԴԱՐԻՑ, յուրոց հանելով:

Այն, եթէ միայն այդ սրտերը անյաղթելի ար-  
դելքների չեն հանդիպում...

Աշխատում է մի կերպ ծածկել յուզմունքը:

ՏԵՍԻԼ ԺԶ

ՆԲԱՆՔ, ԱՐԿԱԴԻ

ՄԱՐԳԱՐԻՑ

Ամուսինու...

ԱՐԿԱԴԻ, գալով դրսից, առանձին, դժողով:

Դարձեալ այս զինուորականը... (Առաջ գալով:) ԱՌ, պարոն Արամեան... (Որտաշէսը ոտի է կանգնում:) Ջատ ուրախ եմ... (Սիմեանց ծեռք են տափս:) Նստեցէք, խնդրեմ: (Նստում են:) Ի՞նչպէս էք, ի՞նչպէս է ձեր առսղջութիւնը:

ԱՐՑԱՋԷՍ, սառը քաղաքավարութեամբ:

Ճնորհակալ եմ, պարոն, դուք ի՞նչպէս էք:

ԱՐԿԱԴԻ

Ես միշտ լաւ եմ, վառք Աստուծոյ: Եթէ լժիշկ-ներն իմ յասով մնային, քաղցած կը մնանէին... Ջատ ուրախ եմ, շատ, ձեզ իմ տանը տեսնելով... Զեր հայրենասիրութեան և քաջութեան մասին շատ զո-վասանքներ եմ լսում:

ԱՐՑԱՋԷՍ

Թողնենք այդ, պարոն:

ԱՐԿԱԴԻ

Օ՛, ես շատ եմ սիրում քաջ և մանաւանդ հայ-րենասէր երիտասարդներին: Արդարի ես ինքս ձեղ պէս քաջազործութիւններ արած չեմ, բայց իմ հայ-րենասիրական... զգացմունքներս ուրիշներից պակաս

չեն, հաւատացէք... Զեռքիցս եկածը չեմ ինայիլ իմ պաշտելի հայրենիքիս համար...

ԱՐՑԱՋԷՍ

Օ՛, պարոն, ես այդ մասին չեմ կասկածում: ԱՐԿԱԴԻ

Եւ ատելով ատում եմ այն մարդկանց, որոնք միայն իրանց համար են ապկում... Ուտում են, խը-մում, զուարձանում, իսկ ժողովրդի բարօրութեան մասին բնաւ չեն էլ մտածում: Այդպիսիների համար երկրորդական բաներ են՝ ազգ, հայրենիք, մարդկու-թիւն... Կան նաև այնպիսիները, պարոն, որ ձեր առաջ ձեանում են ամենաջերմ ազգասէր, ընաիր հայրենասէր, մարդասէր և էլ չզիտեմ թէ ինչասէր, միով բանիւ՝ իրրե շատ և շատ բարձր գաղափարնե-րի աէր մարդիկ. բայց լաւ իմացած եղէք, պարոն, որ այդ բոլոր զեղեցիկ բառերը նրանք գործ են ա-ծում որպէս զինք՝ միայն միամիտաներին շացնելու համար: Մէկ կոպէկ շահի համար նրանք պատրաստ են տասն անգամ ծախել իրանց ազգն էլ, հայրե-նիքն էլ...

ԱՐՑԱՋԷՍ

Ջատ ճշմարիտ էք ասում, պարոն. բայց ի՞նչպէս զանազաններ արդարը խարերայից, քանի որ խարե-րաների յատով սովորութիւնն է միշտ արդարի զի-մակով երեալ:

ՄԱՐԳԱՐԻՑ

Եւ ամենավանդաւոր մարդիկը հէնց գրանք են, որ իրանց արատները վարպետութեամբ ծածկում են առաքինութեան քողի տակ:

## ԱՐԿԱԴԻ

Ա՛ս, աղնիւ ընկերս, դու տկար էր, մոռացայ հարցնել առողջութեանդ մասին... ներիր, խնդրում եմ. ի՞նչպէս ես այժմ, լաւ ես:

ՄԱՐԳԱՐԻՑ, մեղմօրէն:

Եմ մասին մի հոգար, ես շատ լաւ եմ:

## ԱՐԿԱԴԻ

Ջատ ուրախ եմ. ես շարունակ քեզ վրայ էի մատում, սիրելիս: (Արտաշէսին:) Դուք ես շատ ուղիղ էք զատում, պարոն: Այն, մի փոքր գժուար է խարերաներին իսկոյն ճանաշել... (նոյն ժամացոյցին նայելով, Մարգարիտին:) Հիանալի եղանակ է, սիրելիս, կամենում ես մի փոքր մաքուր օդ ծծել. կառքը պատրաստ է:

ՄԱՐԳԱՐԻՑ, հանգիստ:

Ճնորհակալ եմ. ես այսօր դիտաւորութիւն չունիմ տանից դուրս գալու:

## ԱՐԿԱԴԻ

Բայց առողջութիւնդ, սիրելիս, առողջութիւնդ... ես շատ ցաւում եմ, որ դու բոլորովին արհամարհում ես քո առողջութիւնը... Այսպիսի եղանակին քեզ հարկաւոր է բացօթեայ զրոսանք:

ԱՐՏԱՐԵՔ, վեր կենալով:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ո՛չ, ո՛չ, պարոն Արտաշէս, նստեցէք, խնդրում եմ:

## ԱՐԿԱԴԻ

Այն, պարոն, նստեցէք, նստեցէք, խնդրում եմ... (Խնդր ոտքի է կանգնում:) Տիկինը կարող է գնալ էլ,

դալ էլ, իսկ մենք կարող ենք խօսել, դատել, վիճել, ինչքան կամենանք:

## ԱՐՏԱՐԵՔ

Ջատ չնորհակալ եմ, պարոն, յատուկ պարտաւորեցնում էք ինձ... (Ճեղնօրէն:) Ճեր առանձին ուշադրութեամբ, բայց ներողութիւն եմ խնդրում, ժամանակ է:

ԱՐԿԱԴԻ, նոյնպէս հեղնելով:

Ավտոսում եմ, շատ ավտոսում եմ, հաւատացէք ինձ... Գիտեմ որ դուք սասափիկ զրադաւած էք և բոլովին ժամանակ չունիք ունայն այցելութիւններով պարապելու, այնու ամենայնիւ, ինդրում եմ, երբ աղատ լինիք Ճեր ծանր զրծերից, երբեմն-երբեմն մեղ ես մտաքերէք... Իմ տան գոները միշտ բաց են, պարոն, աղնիւ մարդկանց համար, մանաւանդ... Կը նո՞չս բարեկամների համար:

Մարգարիտը՝ այս միջոցին սաստիկ յուզուած, կանդնած, ջուր է ածում եւ խմում:

ԱՐՏԱՐԵՔ, Արկադիին, հեղնօրէն:

Զափից զուրս բարի էք... (Գնում է դէպի Մարգարիտը եւ մեղմօրէն:) Սնաք բարեաւ, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՑ, Արտաշէսի ձեռքը բռնած:

Յոյս ունիմ, պարոն Արտաշէս, որ դուք դարձեալ կ'այցելէք մեղ...

Թողնում է ձեռքը եւ ուղեկցում է:

ԱՐԿԱԴԻ, նոյնպէս ուղեկցելով:

Այն, այն, ես ևս խնդրում եմ:

ԱՐՏԱՐԵՔ, հեղնօրէն:

Օ՛, Ճեր սիրալիք ընդունելութիւնը, պարոն, ես

երթք չեմ մոռանալ... (Մարգարտին:) Մնաք բա-  
րեաւ...

Գուրս է զնում:

ՏԵՍԻԼ ԺԵ

ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, երկար լուսնիւնից յետոյ, մինչդեռ Մարգարի-  
տը դժոհութեամբ նայում էր նրան:

Ասա, խնդրեմ, ինչ է նշանակում այս լուսը կա-  
տակերգութիւնը:

ՄԱՐԳԱՐԻՏ, առաջ գալով:

Այդ հարցն ինձ է վերաբերում... ինձ:  
ԱՐԿԱԴԻ:

Այն, քեզ, քեզ, միթէ պարզել է հարկաւոր... Յան-  
կարծ հիւանդանում ես, ամբողջ տունը տակնուվայ  
է լինում, գործերս համարեա անկատար եմ թող-  
նում քեզ համար, վազում եմ տուն և ինչ եմ տե-  
նում. հիւանդս հանգիստ նստած՝ ամենասիրալիր  
ընդունելութիւն է ցոյց տալիս մի բազգախնդիր զի-  
նուրականի, որ չգիտեմ՝ ով է կամ ինչ է:

ՄԱՐԳԱՐԻՏ

Նա իմ մանկութեան բարեկամն է, ես արդէն  
ասել եմ քեզ:

ԱՐԿԱԴԻ

Բարեկամ, բարեկամ... Երեփ բարեկամից էլ մէկ  
բան աւելի է, որ հիւանդութիւնդ անդամ մոռացել  
ես նրա համար:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք ինձ վիրաւորում էք, պարսն, բայց իդուր.  
Ես արդէն այսաւեղ էի հեղինէի հետ, երբ նա եկաւ:  
ԱՐԿԱԴԻ

Եւ դու, ամիկին, հարկաւոր համարեցիր ընդունել  
նրան, լաւ իմանալով, որ այդ ինձ դուք չի գալ:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ էք կամենում ասել:  
ԱՐԿԱԴԻ

Նոր ոչինչ, այսօր բարեկամ, վազը երկրպագու և  
վիրջիվերջոյ խայտառակութիւն... Միշտ այդպէս է  
լինում:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Երկնքից չեք վախենում, որ այդպիսի մեղագանք  
էք բարձում ինձ վրայ... Դուք անպատճում էք ինձ,  
պարսն:

### ԱՐԿԱԴԻ

Օ՛հ, մեծ-մեծ խօսքերգ մի կնզմը դիբ... Ինձ  
խարելլ հեշտ չէ, ես շատ բան եմ տեսել կեանքումս:  
ՄԱՐԳԱՐԻՏ, դառն հեղնութեամբ:

Եւ շատ բան էլ վորձել էք իհարկէ:  
ԱՐԿԱԴԻ, բարկացած:

Այն և վորձել եմ, եթէ կամենում ես... Օ՛, ես  
ոչ ոքի չեմ թոյլ տալ, որ մէկ մազի շափ անզամ  
արասաւորի իմ պատիւը... Այսուհետեւ թնդ համար-  
ձակուի այդ պարսնը իմ տունը մտնել:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք այնքան բազգավարի վարուեցաք նրա հետ,  
որ հազիւթէ նա մեր գոնովն անզամ անցնի երբ և իցէ:

**ԱՐԿԱԴԻ**

Ճառ լաւ էլ արի. սիրտդ ցամեց, համ... (Բարկացած ման է զալիս:) Գոնէ աւելի քաղաքավարի, քան թէ գու՝ իմ բարեկամներիս հետ... Համարեա վիրաւորուած գնացին այսաւեղից... (Յանկարծ կանգ առնելով, խփում է ճակատին:) Ա՛... (Լուսթիւն, յիտոյ ծիծաղում է:) Հասկացայ, հասկացայ, այժմ հասկացայ... (Կանգնում է Մարգարտի առաջ և գլուխը շարժում:) Գներ, տիկին, սպասում էիք նրան և սուտ հիւմնդացար, որ ինձ և իմ բարեկամներին շուտով հեռացնէք այստեղից... (Մարգարիտը՝ ձեռքերը միացնելով, գարնուրած նայում է Արկադիին:) Այն, այն, այլիս կասկած չկայ... (Ճեզնութեամբ:) Օ՛, ի՞նչ խորամանկութիւն... (Ճեզնօրէն ծիծաղում է:) Բայց այդպէս չէ, տիկին, ես ձեղ երկուսիդ միասին կը ոչնչացնեմ, մինչեւ որ դուք հնար կը գտնէք ինձ խայտառակելու...  
ՄԱՐԳԱՐԻՏ

Բանական է, պարոն, բանական է... Ձեղ խայտառակողը ձեր վարմումքն է... Ձեր չափով մի չափէք ուրիշներին:

**ԱՐԿԱԴԻ**, բարկացած:

Ի՞նչպէս, ի՞նչպէս էք համարձակվում այդպէս խօսել հետ:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Այլիս վերջացաւ... Գնացէք, գնացէք, պարոն, բարեկամուհիս սպասում է ձեղ և այս զիշեր:

**ԱՐԿԱԴԻ**

Ի՞նչ բարեկամուհի, ի՞նչ էք բարբանջում:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Այդ գուք լաւ զիտէք, պարոն, ի՞նչպէս և և...

**ԱՐԿԱԴԻ**

Սնատ էք խօսում, սնատ, տիկին... Լուցէք:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Ո՛չ, պարոն, ո՛չ, բաւական է, ի՞նչքան լուցի. այժմ ամբողջ աշխարհի առաջ պէտք է պաղակեմ... Թնդ ամենքն իմանան ձեր վարմունքը, թնդ ամենքը լսեն, թէ ի՞նչ օրեր եմ քաշել ես ձեր ձեռքին, ի՞նչքան արտասուր թափել այս պատերի մէջ...

**ԱՐԿԱԴԻ**

Գուք խելագարուել էք, տիկին... Հեռացէք այստեղից:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Խելագարուել եմ... (Ծիծաղում է:) Ո՛չ, պարոն, ո՛չ, ես այժմ եմ միայն արթնանում... Կէս ժամ առաջ ձեր սիրահարական սիրագործութիւններին ակամայ վկայ լինելով, քիչ էք մնում ամօթից մեռնէի:

**ԱՐԿԱԴԻ**, բերանը փրփրած:

Սնատ է, սնատ... Հեռացէք աշքիցս, ասում եմ, ապա թէ ո՛չ այս բուքիս կը սպանեմ ձեղ:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Սպանեցէք ու վերջացրէք, գոնէ մէկ անգամից կաղասուեմ այս տանջանքներից:

**ԱՐԿԱԴԻ**

Օ՛, այդ արդէն չափից գուրս է, տիկին... (Զայրացած ման է զալիս:) Այս ամենը ես պարտական եմ այն անիծեալ զինուորականին... (Յանկարծ յարձակուելով սեղանի զանգակին, բոլոր ոյժով զանգանարում է:)

Զանագան դոներից շտապով ներս են մտնում Սէսիլն ու սպասաւորը: Ես ձեղ խոտիւ հրամայում եմ, որ այսուհետեւ չհամարձակուէք ընդունել այն բաղդախնդիր զինուարականին... միենոյն է՝ նա ինձ հարցնի, թէ տիկնոջը:

Սէսիլն ու սպասաւորը շուարվում են:  
ՄԱՐԴԱՐԻԾ, զսպելով իրան եւ բոլորովին զունաթափ:  
Այն, պարոնի հրամանը կատարեցէք խփութեամբ,  
ես ևս հրամայում եմ... (Մեկնելով ձեռքը դէպի զուռը:)  
Հեռացէք... (Սէսիլն ու սպասաւորը դուրս են զնում:  
Լոռութիւն: Սաստիկ վրդովուած եւ արտասուրից խեղբուելով:) Չափ չնորհակալ եմ, պարոն... Այս էք իմ այսքան տարուայ տանհջանաց վարձատրութիւնը... Այսուհետեւ ես մի անարժան կին եմ ձեղ համար... Այսօրուանից ամենայն ինչ վերջացաւ մեր մէջ... Ահա... (Պարանոցից կտրում է մանեակը:) Ասէք այն շղթան,  
որով ինձ կտպել կաշկանդել էիք այսքան տարիներ...  
(Մանեակը շպրտում է: ) Ո՞հ, Աստուած ամենակարող...  
Դուրս է զնում իր սենեակը: Արկադին մնում է  
ապշած:

ՎԵՐԱ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒՅՆԻ

## ԱՐԱՐՈՒՅՆԻ ԵՐՐՈՐԴ

Միհնոյն տեսարանը, պակասում է միայն պատկերական  
իր նկարով:

ՏԵՍԻԼ Ա. Ո. Ա. Զ Ի Ն

ԱՐԿԱԴԻ, Ա.ԲԵԼ,

ԱՐԿԱԴԻ, ման գալով:  
Ո՛չ, ոչ, պարոն Արէլ, խօսք խօսք է. ես նրան  
զլսազիր չեմ տալ, մինչի որ այդ թղթին շատորազը:  
ԱԲԷԼ, մի ծալած թուղթ ձեռքին:

Հեր կամքն է, աէր, միայն թէ...  
ԱՐԿԱԴԻ

Այն, այն, այդպէս է... Տարէք այդ թուղթը և մի  
կերպ աշխատեցէք որ ստորազը:  
ԱԲԷԼ, փոքր լոռութիւնից յետոյ:

Մինչի օրս, ձերդ վսիմութիւն, բոլոր ձեր հրամանները միշտ կատարել եմ սրբութեամբ, այժմս էլ պատրաստ եմ կատարել և ներկայ յանձնաբարութիւնը. սակայն ես ինձ թոյլ եմ տալիս նկատել, որ եթէ կարողանայիք մի կերպ հաշտուել տիկնոջ հետ,  
ճշմարիտ, աւելի լաւ կը լինէք:

## ԱՐԿԱԴԻ

Անհնարին է, պարսն Սթէլ, մեր մէջ հաշտութիւն  
չի կարող կայանալ. անունս ու պատիւս խայտառա-  
կեց նա... չը, թշուառական...

## ԱԲԷԼ

Ի՞նչ արած, ձերդ վսեմութիւն, էլի դուք պէտք  
է ներողամիտ լինիք... 2է որ նա ձեր կինն է...  
Միթէ այս լաւ է՝ ահա երեք ամիս է ամբողջ քա-  
ղաքը ձեղ վրայ է խօսում:

Թուղթը զնում է սեղանի վրայ:

## ԱՐԿԱԴԻ

Թոնդ խօսեն, նըրան կամենան:

## ԱԲԷԼ

Դարձեալ ձեղ է վնաս, ձեր անունն է վնասվում,  
ձերդ վսեմութիւն... (Արկադին նստում է եւ զուկը  
ձեռքի մէջ առնում:) Խնձանից ձեղ խրատ չի հասնի  
Եհարկէ, բայց ձեր բարին ցանկանալով, ինչպէս և  
միշտ, ես համարձակվում եմ յայտնել իմ կարծիքը...  
Միայն չրարկանաք, ի սէր Սստուծոյ:

## ԱՐԿԱԴԻ

Ջարունակեցք, շարունակեցք, խնդրեմ:

Չեռքի նշանով հրաւիրում է նստել:

## ԱԲԷԼ, նստելով:

Այս, վսեմափայլ աէր... Ի՞նչքան էլ կինը պակա-  
սութիւն ունենայ, ինչքան էլ մեղաւոր լինի նա,  
դարձեալ ամուսնու ոչ թէ սուբբ պարաւարութիւնն  
է միայն, այլ և նրա ամենամեծ արժանաւորութիւ-  
նը... լոել և միշտ լոել այդ մասին: Հակառակ զէպ-  
քում, նա իր սեպհական պակասութիւնը խոստո-

վանած կը լինի, իր մեղասպարտութիւնը, իր թուլու-  
թիւնը... (Արկադին զուկը կամաց-կամաց շարժելով, մե-  
կուսի ժամում է: Լոռութիւն: ) Համարձակութեանս հա-  
մար ներողութիւն եմ խնդրում ձեր վսեմութիւնից.  
Միայն ես աններելի յանցանք կը համարէի, եթէ իմ  
սրախ խորհուրդը ծած կէի ձեզանից... (Արկադին զո-  
ւումը ձեռքի մէջ, արմնկով յենուածածէ սեղանին: Երկար  
լուրթիւն: ) Ձեր մեծահոգութեանն եմ զիմում, ձերդ  
վսեմութիւն... Եթէ թոյլ կը տաք, տիկնոջը ես շուտ  
կը համոզեմ, միայն թէ դուք համաձայնէիք հաշ-  
տուել հետը:

## ԱՐԿԱԴԻ

Իզուր կը լինի ձեր աշխատանքը, սիրելիս... (Օտ-  
քի է կանգնում, Աքէլը նմանապէս:) Եթէ ես ուզեմ էլ  
հետը հաշտուել, նա լիքը չի կամենալ. ես նրան լաւ  
եմ ճանաչում... Այն կապը, որ մեղ կապում էր, խոր-  
ակուած է յաւիտեան. այժմ մնում է մեղ ձեակեր-  
պիլ մեր իրաւունքները և օրինական ընթացք տալ  
մեր ներկայ կացութեանը: (Աքէլը վերցնելով թողթը,  
կամնում է կարդալ:) Տարէք, տարէք այդ թուղթը...  
այնտեղ կը կարգաք, տարէք:

## ԱԲԷԼ

Ես իմ պալպաքս կատարեցի, ձերդ վսեմութիւն.  
այժմ կ'անհմ, ինչ որ հրամայում էք:

Թուղթը զնում է Թերթապահի մէջ:

## ԱՐԿԱԴԻ

Աշխատեցք շուտով վերագտնալ:

## ԱԲԷԼ

Անպատճառ, ձերդ վսեմութիւն:

Մի քանի քայլ զնում է:

## ԱՐԿԱԴԻ

Սպասեցէք, պարոն Արէլ... Այս ծրաբը կը յանձնէք իրան: (Ծոցից հանում է մի փոքրիկ ծրաբ եւ տալս է նրան:) Տասը հազարի ստանալիք է բանկից իր անունով. թնդ բարով վայելէ... Խակ եթէ այդքանն էլ քիչ է, կարող էք դարձեալ խոստանալ... Բայց աչ, փողի մասին աչ մի խօսք. նա կարող է վիրաւորուել... Միայն այդ տուէք, այդ ծրաբը, և շմոռանար հասկացնել նրան, որ մինչեւ յանցանքն իր վրայ չառնէ, գլխագիր չի ստանալ ելլէք:

## ԱԲԷԼ

— Գիտեմ, ձերդ վսեմութիւն:

Ծրաբը գնում է ծոցը:

## ԱՐԿԱԴԻ

Դէհ, շնւա, պարոն Արէլ, ի սէք Աստուծոյ, շնւա. Իս կը սպասեմ անհամբեք: Պէտք է մտածենք և վկաների մասին:

## ԱԲԷԼ

Կէս ժամից յետոյ այստեղ կը լինիմ, ձերդ վսեմութիւն:

Թերթապահը ձեռքին գնում է: Երկրորդ արարուածի սպասաւորը բերում, առաջարկում է Արկանիին մի այցետում:

## ԱՐԿԱԴԻ

Վարդուհի Վարդառեան... Միթէ... նա ինքը...

## ՍՊԱՍՈՒԹՐ

Այս, ձերդ վսեմութիւն:

## ԱՐԿԱԴԻ

Կացէք, կացէք, պարոն Արէլ: (Սպասաւորին:) Գնա,

լսնդրիր իսկոյն. ուրիշ ոչ ոքի չես ընդունիլ: (Սպասաւորը դուրս է գնում:) Դուք, պարոն Արէլ, այն կողմից գնացէք... (Ցոյց է տախս հափս կողմի երկրորդ կարգի դուրս.) Թնդ նա ձեզ չտեսնի:

Այցետումը ձեռքին շտապով գնում է իր սենեակը:

## ԱԲԷԼ, յետեւից:

Հանգիստ եղէք: (Մենակ:) Օհօ՛, պնամ՝ կնոջս թագա խարաբ ասեմ:

Դուրս է գնում ցոյց տուած դռնից:

## ՏԵՍԻԼ Բ

ԱՐԿԱԴԻ, զգեստը փոխած, յետոյ ՎԱՐԴՈՒՀԻ

ԱՐԿԱԴԻ, մենակ, ձեռքին անուշանոտ ջրի շիշ սրսկիրով [Pulvérisateur], իր սենեակի դռնում, հրամայում է:

Մալթճը չմոռանար... (Սրսկում է օդի մէջ եւ ինքը նրա տակ շուռումուռ է գալիս. յետոյ գնում է եւ նախասենեակի դռնից նայում:) Գալիս է... (Առաջ գալով եւ ձեռքը տանելով սրտին:) Ի՞շպէս սիրաս բարախում է, կարծես տանի և եօթը, տարեկան պատանի լինիմ... (Սրսկիչը պահում է. յետոյ Վարդուհուն, որ մտնում է նախասենեակից:) Բարի, բարի ձեզ, պաշտելի իմ ակին... ամբողջ երեք ամիս է ձեզ տեսնելու բաղկշեմ ունեցել:

ՎԱՐԴՈՒՀԻ, տալով ձեռքը:

Բարի ձեզ, բարեկամ... Մի քանի օր է միայն, որ ամարանոցից վերադարձել եմ...

## ԱՐԿԱԴԻ

Համեցէք, նստեցէք, ինդրիմ:  
ՎԱՐԴՈՒԽԻ:

Ծնորհակալ եմ... ի՞նչպէս էք:  
ԱՐԿԱԴԻ

Փառք Աստուծոյ: Դուք ի՞նչպէս էք, տիկին:  
ՎԱՐԴՈՒԽԻ

Ինչպէս տեսնում էք, լաւ եմ: (Յոյց տալով առու-  
ռը) Ինչի՞ էք կանգնած մնացել:

ԱՐԿԱԴԻ, նստելով:  
Այս ի՞նչ բարեյաջող գիտուածով, տիկին, չնորհ  
էք արել ինձ մօտ զալ:

## ՎԱՐԴՈՒԽԻ

Ինչի՞ էք զարմանում, վսեմափայլ պարոն, միթէ  
ես չեմ կարող զործ ունենալ:

## ԱՐԿԱԴԻ

Ինարկէ կարող էք, հրաշալի իմ տիկին, բայց  
զորք ինչու էիր նեղութիւն կրում... Միթէ չէիր կա-  
րող հրամայել, ես ինքս ձեզ մօտ կը զայի:

## ՎԱՐԴՈՒԽԻ

Հաւատացած եմ, որ ձեր վսեմութիւնն ինձ շատ  
է յարգում, բայց զործը խիստ կարևոր է և շատպո-  
ղական, զրա համար էլ ինքս եկայ:

## ԱՐԿԱԴԻ

Հրամայեցէք, տիկին. ինչ որ ձեռքիցս զայ, չեմ  
լսնայիլ:

## ՎԱՐԴՈՒԽԻ

Օ՛, այդ ես լաւ զիտեմ: Մէկ օր ինձ հաւատա-

յնում էիք, որ ձեր կեանքն էլ չէք ինայիլ ինձ հա-  
մար. բայց լեզուն շատ բան կ'ապի իհարկէ:

## ԱՐԿԱԴԻ

Սրանց, սրանց, աիկին, հաւատացնում եմ, որբ-  
տանց... Եթէ ինձ հրամայէք զնալ ջուրն ընկնի,  
իսկոյն կ'երթամ ջուրը կ'ընկնիմ:

## ՎԱՐԴՈՒԽԻ

Ուրեմն՝ խկնին զնայէք և ջնուրն ընկէք:  
ԱՐԿԱԴԻ, ոտքի կանգնելով:

## ԳԻԱՄԻ:

ՎԱՐԴՈՒԽԻ, ժպտալով:

Գնայէք, այն, զնայէք:

## ԱՐԿԱԴԻ

Տիոէք, տիկին, կ'երթամ. հաւատացնում եմ ձեզ,  
կ'երթամ:

## ՎԱՐԴՈՒԽԻ

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԻՄ:

ԱՐԿԱԴԻ

Ո՞հ, քարասիրա... Ահա, մնաք բարեաւ յափառեան:  
(Գնում է մինչեւ նախասենեակի զուռը. յետոյ վերադառ-  
նալով:) Բայց նշ, ձեզ մենակ թողնել չեմ կարող:

ՎԱՐԴՈՒԽԻ

Նստեցէք, պարոն, նստեցէք... Ես ձեզ քանիքա-  
նի անզամ առել եմ՝ մի արտասանէք այնպիսի խօռը,  
որը կատարել չէք կարող:

ԱՐԿԱԴԻ

Ահա, գարձեալ չէք հաւատում, տիկին:

ՎԱՐԴՈՒԽԻ

Հաւատում եմ, հաւատում, պարոն, զիցոք թէ

շատ էլ հաւատում եմ. բայց ջուրն ընկնելու պէտք չկայ... իմ խնդիրը ոչինչ զոհաբերութիւն չէ պահանջում և նրա կատարելն էլ շատ հեշտ է... Միայն մի խօսք է հարկաւոր ձեր կողմից... (Չեռքի պայուսակը բանալով:) Բայց գուք ինչի՞ էք այդքան հեռու նստել... նստեցէք այստեղ... (Կոտրտուելով:) Մօտիկ, մօտիկ... Մի վախենաք, ես ձեղ կուլ չեմ տալ:

**ԱՐԿԱԴԻ,** մօտենալով:

Ա՞ս, տիկին, խելքից հանում էք ինձ;

**ՎԱՐԴՈՒՀԻ**, հեռանալով:

Օ՞հ, օհ, ձերդ վսեմութիւն, մի փոքր հեռու, խնդրում եմ:

**ԱՐԿԱԴԻ,** օրինաւոր նստելով:

Ահա, տիկին... չրամայեցէք, ինչ էք կամենում:

**ՎԱՐԴՈՒՀԻ**

Ջատ չնշին բան ձեղ համար... Ձեր խօսքն ամեն տեղ անցնում է. անշափ ծանօթներ ու բարեկամներ ունիք գուք... (Պայուսակից հանելով մի հեռագիր:) Արտասահմանից մի քանի կտոր թաւիշ են ուղարկել ինձ և ահա, ինչպէս հեռավորում են թաթումից, իմ արկղիկը պէտք է որ այս գիշեր այստեղ լինի... (Տարով հեռագիրը:) Ինչպէս էլ լինի, պէտք է վաղը իմ ձեռքը հասնի այդ, էլ մաքսատանը երկար շպահեն:

**ԱՐԿԱԴԻ,** աչքի անցնելով հեռագիրը:

Իրաւ որ շատ չնշին բան է եղել... ես էլ մտածում էի թէ ինչ կարող է լինել:

**ՎԱՐԴՈՒՀԻ**

Ներեցէք, անհանդիստ եմ անում ձեղ:

### ԱՐԿԱԴԻ

Ա՞ս, ինչ էք ասում, տիկին, իմ բոլոր հանգստութիւնս ձեր շարը տանի. այդ ինչ խօսք է:

**ՎԱՐԴՈՒՀԻ**

Գուք մարմնացած քաղաքավարութիւն էք, պարոն:

**ԱՐԿԱԴԻ**

Օ՛, չափից գուրս բարի էք, տիկին:

**ՎԱՐԴՈՒՀԻ**

Ես ճշմարիտն եմ ասում: (Վեր կենալով:) Ուրեմն վաղը կ'ստանամ:

**ԱՐԿԱԴԻ,** նոյնակս:

Անպատճառ, անպատճառ, անման իմ տիկին:

Սեղմում է էլեբորական հնչակի կոճակը:

**ՎԱՐԴՈՒՀԻ**

Ճատ չնորհակալ եմ, շատ, պարոն Արկադի. յատուկ պարտաւորեցնում էք ինձ: Ուղիղն ասեմ՝ այսպիսի մի չնշին բանի համար ես ձեղ նեղութիւն չէի տալ, բայց քոյլս վաղը անպատճառ զնալու է թագու. ես շատ գոհ կը լինէի, եթէ կարողանայի անձամբ իրան յանձնել իր մասը:

**ԱՐԿԱԴԻ**

Ճանվիստ եղէք, տիկին, ես ինքս կը բերեմ ձեր արկղիկը:

**ՎԱՐԴՈՒՀԻ**

Ո՛չ, նեղութիւն մի քաշէք, պարոն, կարող էք ուղարկել... Թէի շատ ուրախ կը լինէի ձեղ իմ ասնը տեսնել:

## ԱՐԿԱԴԻ

ի՞նչ նեղութիւն... Այս բոլէս ինձ նման երջանիկ մարդ չկայ աշխարհում:

Կրկին սեղում է հնչակի կոճակը:  
ՎԱՐԴՈՒԽԻ

ՄԻՋԷ:

## ԱՐԿԱԴԻ

Հաւասացնում եմ, արկին: (Սպասաւորին, որ արծաթեայ մեծ սկուտեղով բերում է պատուիրած սուրճը և պաքսիմատ, ցածր:) Ինչի՞ ուշացրիլ: (Վարդուհուն, մինչդեռ սպասաւորը սկուտեղը գնում է սեղանի վրայ և բաժները կարգի բերում:) Թոյլ կը տաք ինձ, արկին, մի բաժակ սուրճ առաջարկել ձեզ:

ՎԱՐԴՈՒԽԻ, բրբռուելով:

Զգիտիմ, ճշմարիտ, ի՞նչ պլատասխանիմ... Դուք այնքան բարի էք դէպի ինձ, որ մերժել չեմ վստահանում:

## ԱՐԿԱԴԻ

Կտարելապէս երջանկացնում էք ինձ, արկին: (Սպասաւորին:) Լաւ, գնա, ևս ինքս կը պլատաստիմ: (Սպասաւորը գուրս է գնում: Վարդուհուն աթոռ առաջարկելով սուրճի սեղանի մօտ:) Համեցէք, ինդրում եմ:

ՎԱՐԴՈՒԽԻ, նստելով:

Ծնորնակալ եմ... Այս մի բաժակն ի՞նչ դեղեցիկ է... Երեի ձեր սովորական բաժակն է:

ԱՐԿԱԴԻ, պատրաստելով սուրճը:

Ո՛չ, արկին, ևս գրանով երբէք չեմ խմում:

ՎԱՐԴՈՒԽԻ

Երեկի բաժակ է... (Յանկարծ:) Այդպէս չէ, պա-

լոն, այդպէս չէ. թողէք ես պատրաստիմ: (Ոտքի կանգնելով:) Դուք նստեցէք, ինդրեմ:

ԱՐԿԱԴԻ

ի՞նչքան բարի էք, արկին:

Նստում է:

ՎԱՐԴՈՒԽԻ, հեղնօրէն:

Եւ միշտ այդպէս էք պատրաստում ձեր սուրճը:

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ, արկին, սպասաւորն է հոգում:

ՎԱՐԴՈՒԽԻ, ածելով սուրճը:

Սպասաւորը... Խեզ մարդ, մեղքս զալիս էք, ճշմարիտա... Ահա, այդպէս իմացէք տանտիկնոջ արձէքը... (Տալով նրան գեղեցիկ բաժակը:) Համեցէք:

ԱՐԿԱԴԻ, առնելով բաժակը:

Ո՛չ, արկին... (Համբուրում է Վարդուհու ձեռքը և բաժակը նրան առաջարկում:) Յատուկ ինդրում եմ:

ՎԱՐԴՈՒԽԻ, նստելով:

Ճնորհակալ եմ... (Արկադին իր համար վերցնում է միւս բաժակը:) Այն, ևս ձեզ խորհուրդ եմ տալիս, զնացէք, ձեր ինոջ ձեռքը համբուրեցէք... Բաւական է ինչքան խոսվ մնացիք. ինդրեցէք, որ զայ ձեզ տէրութիւն անէ:

ԱՐԿԱԴԻ

Ո՛չ, ոչ, արկին, մեր մէջ ամեն բան վերջացած է:

ՎԱՐԴՈՒԽԻ

Է՛հ, բարեկամ, մարդ ու կնոջ մէջ այդ տեսակ թիւրիմացութիւններ շատ է պատահում... Մի քանի ժամանակից յիտոյ զարձեալ այնպէս կ'ապրէք միասին, ինչպէս ապրել էք... Հետեապէս՝ որքան շուտ,

այնքան լաւ երկուսիդ համար էլ... Գնացէք, զնացէք, սիրան տուէք... Դուք ի՞նձ լսեցէք, ևս ձեղ վատ խորհուրդ չեմ տալիս:

#### ԱՐԿԱԴԻ

Աշխ, տիկին, ի՞նչ էք հրամայում. ես հինց այս ըսպէիս սպասում եմ նրա խոստովանութեանը:

#### ՎԱՐԴՈՒՀԻ

Որ նա է պատճառը մեր բաժանման և որ բոլոր յանցանքը նա իր վրայ է առնում:

#### ՎԱՐԴՈՒՀԻ

Ի՞նչպէս... 2է որ օրէնքով այդպիսի գործերում սեպհական խոստովանութիւնը ոչինչ նշանակութիւն չունի:

#### ԱՐԿԱԴԻ

Այն, բայց երբ վկաները հասաւառում են, հարցը փոխվում է:

#### ՎԱՐԴՈՒՀԻ

Այդ ես բոլորովին չեմ հասկանում... Եթէ վկաներ ես կան, էլ ի՞նչ հարկաւոր է մեղապարտի յանձնառութիւնը:

#### ԱՐԿԱԴԻ

Բանն էլ այն է, տիկին, որ այս գործում վկայ գտնելն անհնարին է, եթէ ինքը՝ յանցանք ընդունողը, յօժար չէ... Օ՛, ես այս խնդիրը լիովին ուսումնասիրել եմ... Այս միշտ այսպէս էլ կատարվում է ամենուրեք:

#### ՎԱՐԴՈՒՀԻ

Ուրիմն, ինչպէս երկում է, կատակ չէ այդ ամենը:

#### ԱՐԿԱԴԻ

Միանդամ բաժանուելուց յետոյ՝ էլ կատակը ո՞րն է:

#### ՏԵՍԻԼ Գ

#### ՆՐԱՆՔ, ՍՊԱՍԻՈՐ

ԱՐԿԱԴԻ, տեսնելով սպասաւորին, որ մի այցետոմս ձեռքին, Վարդուհուց ծածուկ, նշան է անում:

Ի՞նչ կայ: (Գէմ է վազում:) Ես քեզ ասացի, որ ո՞չ ոքի շընդունես... (Վերցնելով այցետոմսը, մնկուսին:) Էլլ՛զ...

Մնում է շուարուած:

#### ՍՊԱՍԻՈՐ

Ճառապեցէք, ձերդ վսեմութիւն, միծ աստիճանաւոր է, սպասում է ձեզ ներքին նախասինեակում:

ԱՐԿԱԴԻ, սպասաւորին, ցածր:

Անիծեալ: (Վերադառնում է գէպի Վարդուհին:) Աշխ, տիկին, յատուկ ներողութիւն եմ խնդրում, մի բոլէ թնջող տուէք ինձ... Պաշտօնական ամենահարկաւոր գործի են եկել:

#### ՎԱՐԴՈՒՀԻ

Խնդրեմ, ձերդ վսեմութիւն, իմ մասին անհանգիստ մի լինէք:

#### ԱՐԿԱԴԻ

Անչափ բարի էք, տիկին:

Դուքս է վազում, սպասաւորը հետեւում է նրան:

## ՏԵՍԻԼ Գ

ՎԱՐԴՈՒՀՆԻ, մենակ, փոքր լոռեիւմից յիտոյ աչ ցուցամատը ճակատին տանելով:

Վարդուհի, գպաշ... (Յանկարծ ոսրի է կանգնում, առանց տեղից շարժուելու նայում է հայելու մէջ, զիսարկը ծռում եւ կրկին նատում: Յետոյ լսելով դրսի դռան ձայնը, տեղից վեր է թռչում, վազում է դէպի լուսամուտը եւ ձգգուելով դուրս նայում:) Ո՞վ էր... Ավանդ չտեսայ: Շտապով վերադառնում է իր տեղը եւ առաջուայ դիրքն ընդունում:

## ՏԵՍԻԼ Ե

ՎԱՐԴՈՒՀՆԻ, ԱՐԿԱԴԻ

ԱՐԿԱԴԻ, վերադառնալով, մեկուսի:  
Ուժի, ազատուեցայ... (Վարդուհնուն:) Յատուկ ներսութիւն եմ խնդրում, ափկին... Հաղիւ ազատուեցայ, պաշտօնատէր մարդը ինքն իրան չէ պատկանում, ինչ արած:

## ՎԱՐԴՈՒՀՆԻ

Հասկանալի է... Միայն շատ եմ ցաւում, որ ձեր դործերին ժամանակը խլեցի և արգելք եղայ ձեր

## ԱՐԿԱԴԻ

Ես այժմ բոլորովին ազատ եմ, հաւատացեք...

Մնացէք մի փոքր հս, խնդրում եմ... Այդպէս շուտ մի խլէք ինձանից այս երջանկութիւնը... Աղաչում եմ ձեզ, ափկին:

## ՎԱՐԴՈՒՀՆԻ

Բայց ժամանակ է, պարսի:

## ԱՐԿԱԴԻ

Գուցէ կը բարեհաճէք, ափկին, պարտէզը տեսնել... Հազուազիւտ ծաղիկներ կան:

## ՎԱՐԴՈՒՀՆԻ

Զատ շնորհակալ եմ, պարսի, մի ուրիշ անգամ: (Հայելում նայելով:) Աշխ, այս ինչպէս է ծռուել զբլիւարկս: (Վերցնելով զիսարկը:) Կը ներէք ինձ՝ մի փոքր ուղղեմ:

## ԱՐԿԱԴԻ

Խնդրեմ, ափկին, համարեցէք թէ ձեր տանն էք: ՎԱՐԴՈՒՀՆԻ

Բայց զուք այս կողմը չնայէք, մյ: (Իբր թէ գնդասեղներն ամրացնում է: Յանկարծ երկար ու հիանալի մազերը թափվում են ուսերի վրայ:) Աշխ, ներոզութիւն եմ խնդրում, այս ինչ անքաղքավարութիւն է իմ կողմից:

## ԱՐԿԱԴԻ

Մարդասպանութիւն ասացէք, ափկին: (Վարդուհին յիտ է նայում եւ բնդշութեամբ սպառնում է մատոյ:) Ի՞նչ կամենաք, արէք. այլիս չեմ կարող զիմանալ...

Վրայ է ընկնում եւ ստէպ-ստէպ համբուրում է մազերը:

## ՎԱՐԴՈՒՀՆԻ

Պարմն, պարմն, ինչ էք անում, ինչ էք անում...

(Մազերը բռնելով յետ է քաշվում:) Գուք ձեղ մոռանում էք...

ԱՐԿԱԴԻ, շարունակելով համբուրել մազերը և ուսերը:  
Օ՛, իմ թագուհի, իմ միակ աստուածուհի...  
ՎԱՐԴՈՒՀԻ

Ա՛խ, բաւական է, խնդրեմ...  
ԱՐԿԱԴԻ

Ո՛չ, մշ, էլ ձեռք չեմ վերցնիլ ես ձեզանից... Բաւական է ինչքան ատմիջեցիք ինձ... Այսուհետև դուք իմն էք, ես ձերը...

Գրկած համբուրում է:  
ՎԱՐԴՈՒՀԻ

Ա՛խ... (Իբր թէ աշխատում է ազատուել:) Թողէք,  
թողէք... Օգնութիւն կը կանչեմ... Ա՛... մ... ա՛խ...  
Սուտ ուշաթափուելով յետ է ընկնում Արկադիի  
թեւի վրայ:

ԱՐԿԱԴԻ

Իմ հրեշտանկ, իմ հոգեանկս... (Համբուրում է:) Այսուհետև պէտք է միասին ապրենք, միասին մեռնենք:  
ՎԱՐԴՈՒՀԻ, իբր նոր ուշքի գալով:

Ա՛խ, թողէք, թողէք... (Ազատվում է Արկադիի  
գրկից:) Ըստ շնորհակալ եմ, պարոն... Այս անպատճութիւնը ես երբէք չէի սպասիլ ձեզանից... (Մազերը  
հաւաքելով:) Լաւ դաս տուիք դուք ինձ... Այդպէս է  
ուրեմն... (Սուտ լաց լինելով:) Մի օրինաւոր կին իրաւունք շունի ծանօթ մարդու մօտ գործի դնալ... (Գրլիսարկը  
ծածկում է եւ կեղծ լացով:) Օ՛հ, ես յիմարս...  
Ծնկնում է աթոռի վրայ եւ հեկեկալով սուտ լաց է  
լինում:

ԱՐԿԱԴԻ, նատելով մօտը:

Հանգստացէք, տիկին, աղաջում եմ, հանգստացէք... իմ դիտաւորութիւններս մաքուր են... Ես կամենում եմ կեանկս յաւիտեան կապել ձեղ հետ... Ես կ'ամուսնանամ ձեղ հետ, վկայ է երկինք... Միայն խոսացէք իմս լինել:

ՎԱՐԴՈՒՀԻ, աչքերը սրբում է եւ զննող հայեացքով նայում  
Արկադիին: Երկար լուռիւն:  
Կ'ամուսնանամք...

ԱՐԿԱԴԻ

Այն, օրինաւոր կերպով կ'ամուսնանամ:  
ՎԱՐԴՈՒՀԻ, ըրբիջ բարձրացնելով:

Երեխայ եմ, ինչ է... Դեռ մէկից չազատուած՝  
միւսի վրայ ամուսնանալ էք կամենում:  
Հարունակում է քրքչալ:

ԱՐԿԱԴԻ

Լսեցէք, տիկին, աղաջում եմ, լսեցէք... Ես ձեղ չեմ խարում, իզուր էք այդպէս զարմանում... Ես իմ կեանքումս մի անպատիւ քայլ անպամ չեմ արած... Երգում եմ, որ պարզ սրբով եմ խօսում... Իմ ապահարզանի գործը տուած է զնում իր կարգով, շուտով  
էլ կը վերջանայ... Այսօր է թէ վաղը ես կ'ստանամ իմ աղատութեան վկայագիրը...

Զախ կողմի երկրորդ կարգի դնից մտնում է էլից զը, բողով ծածկուած, եւ թաքնվում ծառերի ու ծաղիկների յետեւը:

—○—

ՏԵՍԻԼ Զ

ՆԲԱՆՔ, ԷԼԻԶ, ԹԱՔՆՈՒԱՅ:

ԱՐԿԱԴԻ, շարունակելով:

Մատղիր էի թռւղթը ձեռքիս գալ ձեր ոտքելի ընկեր... Ես աղատ, զուք աղատ, մի երկու շարաթ չի տեիլ, ես կը տանեմ ձեզ եկեղեցի և այնտեղ, սուրբ սեղանի առաջ, կը խոստանամ ձեզ իմ սիրան էլ, իմ կեանքն էլ:

Համբուրում է նրա ձեռքը: Էլիզը ապրսափելի դրութեան մէջ է:

ՎԱՐԴՈՒԽԻ, վեր կենալով:

Այդ մասին մենք կը խօսենք, երբ ձեր աղատութիւնը ձեռք կը բերէք:

ԱՐԿԱԴԻ, նոյնպէս:

Մի համբոյք, միայն մի համբոյք, տիկին, որպէս գրաւական մեր ամուսնութեան...

ՎԱՐԴՈՒԽԻ

Ո՛չ, ո՛չ, պարոն, ես իմ պատիւս ոտնակոխ չեմ տնիլ... (Տալով ձեռքը:) Մնաք բարետւ... Մոսացէք բոլորը և խելօք կացէք:

ԱՐԿԱԴԻ, գարդունու ձեռքը բռնած:

Խղճացէք ինձ, տիկին... Այրվում եմ...

ՎԱՐԴՈՒԽԻ, ժպտարով:

Միթէ... (Չուր է ածում բաժակը եւ հազիս կարողանալով զսպիլ իր ծիծաղը:) Համեցէք, վսեմափայլ տէք: (Առաջարկում է բաժակը:) Ախ, չէք կամենում... (Բա-

ժակը դնելով սեղանի վրայ: ) Ուրեմն այսպէս... (Հովհարում է Արկադիին, որ լուռ եւ անշարժ նայում է նրան. յետոյ բրբիջ բարձրացնելով:) Ի՞նչ զուարձալի էք այդպէս: (Հովհարը դնելով Արկադիի ձեռքը:) Ահա թողնում եմ յիշատակ ձեր բարբորուած սիրալ հովացնելու... Յոյս ունիմ, որ արկղիկս վաղը կ'ստանամ...

Խորը ողջոյն [Révérence] է տախս եւ բրբջալով գուրս գնում:

ՏԵՍԻԼ Ե

ԱՐԿԱԴԻ, ԷԼԻԶ, սկզբում Թաքնուած:

ԱՐԿԱԴԻ, մի քանի վայրկեան լուռ եւ անշարժ մնալու յետոյ:

Օ՛, կանայք... (Բարկացած ման է զալիս:) Ուրեմն ես մարդ չեմ լինիլ, եթէ քեզ շյաղթեմ: (Հովհարը ձգում է սեղանի վրայ: Էլիզը, որ փոքր ինչ առաջ էք եկել, հեղնօրին ծիծալում է:) Ա՛խ...

Ճեռքը ճակատին մնում է ապշած:

ԷԼԻԶ, բացաբանչելով:

Ահա... չէիր սպասում... Ասա, ասա, որ ոչ ոք չկար այստեղ, ասա... Քեզ համար սուտն ինչ նշանակութիւն ունի... (Վերցնելով Վարդունու հովհարը:) Այս ինչ է, այս էլ նրանը չէ... (Կոտրտում է հովհարը եւ դէն ածում. յետոյ յարձակուելով դէպի սուրճի սեղանը, վերցնում է Վարդունու բաժակը:) Այս բաժակն էլ նրա ձեռքին չէր... (Շպտելով:) Ահա քեզ...

## ԱՐԿԱԴԻ

ելի՞զ, ելի՞զ, նաշքի արի, աղաշում եմ. ամօթ է,  
ծառանիերը կարող են տեսնել:

Փակում է նախասենեալի գուռը:

Ելիջ, պոկելով իր զիմի բողը:

Ահա ամօթը... ես իմ ամօթը վաղիցի:

Գէն է ձգում:

## ԱՐԿԱԴԻ

Իսէր Աստուծոյ, գաղարիր... Ամուսինդ գալու է...  
Նա այս բոպէիս կը զայ:

## ԵԼԻՋ

Թնդ զայ... ես էլ ոչ ոքից չեմ վախենում... Թնդ  
զայ տեսնէ՝ մրգիսի կին եմ եղել ես նրա համար...  
թնդ մաս-մաս անէ ինձ... թնդ երեսիս մուր քսէ և  
մազերից բանած՝ փողոցէ փողոց ման ածէ. ես ար-  
ժանի եմ...

## ԱՐԿԱԴԻ

Ա՛լս, Աստուծ...

## ԵԼԻՋ

Մյդ էր, մյդ, քո պաշտօնական հարկաւոր գործը.  
այլպէս էիր միշտ խարում ինձ: Հինց այս բոպէիս  
նախասենեակում... (Ներկայացնելով ինչպէս Արկադին  
խարում էր նրան նախասենեակում:) «Ա՛լս, Ելիջ, հոգիս,  
ներիք, տունս պաշտօնեանելով լիքն է, սպասում եմ  
նոյն իսկ նահանգապետին»... Եւ սրա հետ՝ տաք-տաք  
համբոյներ... (Գլխի շարժուածքով ներկայացնում է՝  
ինչպէս Արկադին նրան համբուրում էր նախասենեակում:)  
Ո՞հ, Յուղայ... (Թաշկինակով սրբում է երեսը:) Եւ դու  
կարծում էիր, որ ես շպիտէի թէ նվ էր այստեղ...

(Հեղնօրէն ծիծաղում է:)

Օ՛, վաղուց է որ ես քեզ չեմ  
հաւասառմ... Ինձ վաստ էր հարկաւոր, վաստ, և  
ահա այս անգամ բանուեցար վերջապէս... Խօսիր,  
խօսիր, պարոն... Ո՞ւր են քո երդումները, քո Աս-  
տուածը, քո Երկինքը... Ո՞հ, ինչ ծաղրալի ես դու  
այժմ...

Երկար ծիծաղում է:

ԱՐԿԱԴԻ, մօտենալով:

Հանգստացիր, Ելիջ, աղաշում եմ...

## ԵԼԻՋ

Հեռու, հեռու... Դու ոչ Աստուած ունիս, ոչ հո-  
գի... Այսուհետո չհամարձակուիս ինձ դիպչել... մեր  
մէջ ամենայն բան վերջացաւ... Գնա, գնա, այժմ  
քո գեղեցիկ Վարդոհու առաջը չոքիս, նրա ոսի հո-  
ղը գարձիր... գնա, հարսանիքիդ պատրաստութիւն-  
ները տես... (Հազիւ հաղ կարողանալով պահել լացր:)  
Կեանքս, բարի անունս, պատիս ես զոհեցի քեզ հա-  
մար, իսկ դու... (Զեռքի պայուսակից հանելով մի բա-  
նալի եւ շպրտելով:) Ահա, մոռ քո պարտիզի բանա-  
լին... Մնան բարես յաւիտեան... Ես իմ պատիժը  
կրեցի...

Թաշկինակը աչքերին՝ լալով դուքս է գնում ձախ  
կողմի երկրորդ կարգից: Արկադին մնում  
է քարացած:

## ՏԵՍԻԼԸ

ԱՐԿԱԴԻ, յետոյ ՍՊԱՍԱԽՈՐ

ԱՐԿԱԴԻ, մենակ, երկար լրութիւնից յետոյ:

Ի՞նչ են կատաղել վրաս... (Բարկացած ման է զալիս, յետոյ վերցնելով բանալին: ) Դէ՞ն ձգեց... Զատ հարկաւոր է. դու շլինիս, ուրիշը կը լինի... (Հնչեցնում է զանգակը: Լոռութիւն: Նորից հնչեցնում է, յետոյ բարկացած: ) Ե՞յ... (Լոելով որ նախասենեակի դուռը չարչարում են, գնում է, բաց անում: Ներս մտնող սպասաւորին: ) Հաւաքիր այդ տմինը... (Լուռ ման է զալիս, մինչդեռ սպասաւորը կատարում է հրամանը: ) Անպիտան... Ես քեզ հրամայեցի որ ոչ որի շընդունես... Ի՞նչպէս համարձակուեցար ասել, որ ես տանն եմ:

## ՍՊԱՍԱԽՈՐ

Ես մեղաւոր չեմ, ձերդ վսեմութիւն, տիկին վարդուհու կառապանն ասել էր արդին:

ԱՐԿԱԴԻ, սարասիած:

Ի՞նչպէս... Ուրեմն նա էլ սրա զալը կ'իմանայ:

## ՍՊԱՍԱԽՈՐ

Երեխ...

ԱՐԿԱԴԻ, բարկացած:

Դժո՞խը... (Ման է զալիս:) Ջնտառվ, շուտով վերջացրն և կորիր աշքից:

## ՍՊԱՍԱԽՈՐ

Իսկոյն, ձերդ վսեմութիւն:

Արկադին նստում է, բռունցքը սեղանին խփում եւ

յետոյ, գլուխը երկու ծեռքի մէջ առնելով, արմունկներով յենվում է սեղանին. իսկ սպասաւորը հաւաքելով հովհարի կտորները, զարմանք է արտայայտում, յետոյ վերցնելով էլիզի բողը, հոս է բաշում եւ ծոցում պահում: Լոռութիւն:

ԱՐԿԱԴԻ, վեր Թռչելով տեղից:

Ճաշին տուն չեմ գալ... Խոհարարին կ'ասես, որ լաւ ընթրիք պատրաստէ... Սեղանը սպարաէզումը բաց կ'անես... Տես որ ամեն բան կարգին լինի:

## ՍՊԱՍԱԽՈՐ

Քանի հոգու համար, ձերդ վսեմութիւն:

ԱՐԿԱԴԻ

Քանի էլ կ'ուզես... Հինգ, տասը, տասնուհինգ... Պէտք է բարեկամներիս հրամիրեմ... մի փոքր դուարձանամ... Զամպայնը վազօրօք սառուցի մէջ կը դնես:

## ՍՊԱՍԱԽՈՐ

Կանայք էլ կը լինին:

ԱՐԿԱԴԻ

Կանայք, երգչուհիք, երաժշտութիւն... ամեն բան, միայն թէ այս դժոխքից աղատուեմ...

## ՍՊԱՍԱԽՈՐ

Այն, ձերդ վսեմութիւն, երկու կնոջ հետ միաժամնակ գործ բռնելը շատ վսանգաւոր է:

ԱՐԿԱԴԻ

Կորիք, անպիտան... (Ման է զալիս: Սպասաւորը զուխը շարժելով դուրս է գնում:) Աստուած իմ, այս ինչ շար ասողի տակ եմ ծնուիլ ես:

**ՏԵՍԻԼ** Թ  
ԱՐԿԱԴԻ, ԱԲԵԼ

**ԱՐԿԱԴԻ**

Ա... Բերիք ստորագրութիւնը:

**ԱԲԵԼ**, շուարուած:

Այն, ձերդ վսեմութիւն:

**ԱՐԿԱԴԻ**

Բերէք, բերէք, պէտք է վերջ դնել այս կացութեանը:

**ԱԲԵԼ**, անվստահ հանում է Թերթապահից մի ծալած Թուղթ,

որ արտաքուստ բոլորպին նման է նախկին Թոթին:

Ահա, ձերդ վսեմութիւն... Միայն այս այն չէ:

**ԱՐԿԱԴԻ**

Ի՞նչպէս թէ այն չէ... (Բանալով Թուղթը:) Այս ի՞նչ է... Այս ի՞նչ էք արել:

**ԱԲԵԼ**

Վատ ոչինչ, ձերդ վսեմութիւն... (Մինչեռ Արկադին լուս եւ դժգոհութեամբ կարդում է Թուղթը:) Իմ կարծիքով այդ աւելի մեծ ապացոյց է. բոլորն էլ իր ձեռքով է զրած... (Թերթապահից հանում է նախկին Թուղթը եւ փորբիկ ծրաբը:) Իսկ այս՝ ի՞նչքան էլ աշխատեցի, նա չկամեցաւ ստորագրել, ոչ էլ այս ստանալիք ընդունեց... Իսձ ոչինչ սղորմութիւն հարկաւոր չէ, ասաց և սաստիկ բարկացաւ...

Ծրաբը ու Թուղթը զնում է սեղանի վրայ:

**ԱՐԿԱԴԻ**, ձեռքը խփելով Թղթին:  
Հը՛, խորամանկ... Այս թուղթը մէկ կոպէկ շարժէ:  
**ԱԲԵԼ**

Ի՞նչի, ձերդ վսեմութիւն, չէ որ յանցանքը նա իր վրայ է վերցնում:

**ԱՐԿԱԴԻ**, մեկուսի:

Դժնիքը կլանէ քեզ... (Աբէլին:) Զարմանում եմ, պարսն Աբէլ... Այսքան տարի է ասպաւմ էք աշխարհիս երեսին և մինչի օրս ամենատարբական բաներն անգամ չփիտէք... Ո՞րն է այսաեզ յանցանքի խոստովանութիւնը, ձեզ եմ հարցնում, այն յանցանքի, որ օրէնքը պահանջում է, այսինքն՝ ամուսնական անհաւատարմութեան... Ի՞նչ է զրում այն օձն այսաեզ, ի՞նչ... (Կարգալով:) «Թողեցի ամուսնուս իմ յօժար կամքով, որովհետև չկարողացայ նրա հետ հաշտ ապրել»... Ի՞նչ մեծ գիւտ... Ի՞նչ իրաւունք կարող եմ ստանալ սրանով, ի՞նչ... Իթէ հարիւր վկայ անգամ ստորագրեն այս թղթին...

Բարկացած նղում է Թուղթը եւ դէն ճղում:

**ԱԲԵԼ**

Այն միայն Աստուծուն է յայտնի, ձերդ վսեմութիւն, թէ ի՞նչքան եմ աշխատել, որ կարսղացել եմ զնինէ այդ թուղթն առնել, այն էլ միայն այն պայմանով, որ զուք կը բարեհաձէք իր զլիսպիրն ուղարկել շուտով:

**ԱՐԿԱԴԻ**

Ես նրան զլիսպիր կը ցոյց տամ, թնդ գեռ սպասի... Դառն արտասուրով կը լացացնեմ ես նրան, քանի կենդանի է... Նահանգական Դատարանին կը դի-

մեմ, որ քաշ տալով բերեն նրան այստեղ. աեսնեմ  
թէ ինչպէս չէ ստորագրում... չը՛, թշտառական...  
(Աքէլ կամենում է սեղանի վրայ դրած թուղթը վերցնել:) Թողէք, թողէք այդ թուղթը. զբա փոխարէն ևս մի  
ուրիշը պէտք է պատրաստեմ... Դուք գնացէք, սսակ-  
կանին և փաստարանիս իսկոյն այստեղ ուղարկեցէք,  
մնացածը ևս գիտեմ... (Բարկացած:) Այս ինչ անի-  
ծեալ օր լուսացաւ ինձ համար...

Կատաղած ման է զալիս սենեակում:

ԱԲԷԼ, Թերթապահը ձեռքին, մեկուսի, ցածր:

Չ-Հ...

Սարսափից բռնուած հեռանում է մատների ծայրե-  
րի վրայ, ճանապարհից յետ է նայում Արկադիի  
կողմը եւ դուրս գնում. իսկ Արկադին նետվում  
է իր սենեակը:

ՎԵՐՖ ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒՅԾԻ

## ԱՐԱՐՈՒՅԾԻ ԶՈՐՔՈՒՅՑԻ

Մարգարտի և Հեղինէի կացարանում հասարակ սենեակ՝  
ճաշակով կահաւորած և յատակն ամբողջապէս մոմաթով  
ծածկած: Սենեակը երկու գուռն ովնի՝ մէկը ձախ կող-  
մում, իսկ միւսը բեմի խորքում, որ և բացվում է զէպի  
նախասենեակը: Աջ կողմում՝ մեծ լուսամուտ: Դռներն  
ու լուսամուտը զբարդարած են զբարդիներով և վարա-  
գոյներով: Մեղան, զբասեղան, զբքելի պահարան, պատ-  
կերներ, արձանիկներ, զբքեր, նկարչութեան պարագա-  
ներ և այլն: Երկըորդ արարուածի այն նկարը, որ զբած  
էր պատկերակալի վրայ, կախած է պատից: Ցերեկ է:

## ՏԵՍԻԼ Ա. Ռ Ա. Զ Ի Ն

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ

ՄԱՐԳԱՐԻՏ, աջ կողմում, իր պատկերակալի առաջ, նր-  
կարչութեամբ է պարապած, տիսուր:  
Ասլա, Հեղինէս, մէկ այս կնդմը նայիր:  
Հեղինէ, որ, վարագոյրը բացուելիս, ձախ կողմում զրում  
էր զանազան զբքերի նայելով, մօտենում է:  
Հիանալի է... ես իդուր չէի ասում, Մարգարիտ,  
որ զու մեծ տաղանդ ունիս... 0՛, հրաշալի տեսա-  
րան է...

## ՄԱՐԳԱՐԻՑ

Հորիդոնը յաջողումծ է:

ՀԵՂԻՆԵ

Ճատ, շատ, անզին իմ Մարգարիտ:

ՄԱՐԳԱՐԻՑ, հեռուից զննելով իր նկարը:

Այս, ևս դո՞հ եմ...

ՀԵՂԻՆԵ

Գիտե՞ս, Մարգարիտ, քո այս նկարը շատ նման է մեր գրութեանը... Հորիդոնից այս կողմը ամեն ինչ մութ ու խաւարով պատաժ, իսկ այն կողմը, հետոն, երկինքն արեի մօտալուտ ծագումն է աւետում... Այդ կարծես այն յոյսն է, որով ասլում ենք մենք:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ո՞վ զիտէ, Հեղինէ, կարելի է, ճշմարիտ, մեր արեն էլ ծագի մի օր... Յոյսը լաւ բան է և շատ անգամ աւելի քաղցր, քան թէ նրան իբազործուած տեսնելը:

ՀԵՂԻՆԵ, զննելով նկարը:

Ա՛խ, ա՛խ, ինչ սրանչելի տեսարան է... Ի՞նչպէս ես համրերել, զարմանում եմ, որ շարունակ այս արհետով չես պարապել... Երջանիկ ես, ճշմարիտ, որ այսպէս զեղեցիկ վրձին ունիս:

ՄԱՐԳԱՐԻՑ, զառնութեամբ:

Երջանիկ... Ա՛խ, իմ սիրունիկս, եթէ միայն այդ լինէր երջանկութինը... Ի՞նչ երջանիկ... ամենքից արհամարհուած, ասա, ամենքի աչքից ընկած... Ի՞նչ եմ ես հիմա իսկապէս. մի թշուառ կին, որ հասարակաց կարծիքի առաջ կորցրել է իր անունը, իր պատիւը...

## ՀԵՂԻՆԵ

Ո՞վ կը համարձակուի քո պատրի վրայ մի ստուեր անգամ ձգել:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ամենքը, ամենքը, թանկագին իմ Հեղինէ, բայց քեզանից և մի քանի բարեկամներից, ամենքը... Ամուսնաթող կնոջ վերադիրը մեր հասարակութեան մէջ միայն ամօթն ու անպատութիւնն է... Վրաս այնպէս են նայում, կարծես մի մահապարտ լինիմ. Համարեա ոչ ոք չի ել ուզում հետս խօսել... Եւ ինչի, ինչ եմ արել, ինչ յանցանք եմ գործել... Ես թողել եմ ամուսնուս, որի հետ ապրելի ինձ անտանելի էր..., նա ինքը շատ ուրախ է, որ աղատուեցաւ ինձնանից. Նա երջանիկ ապրում է իր համար, նրան ամեն բան ներփառմ է... Իսկ ես՝ քանի որ կենդանի եմ, քանի շունչս բերանումս է, պէտք է տանջուիմ, շարունակ տանջուիմ՝ ամենքից արհամարհուած... Այս, թողնենք, ինդրեմ... Աւելի լաւ է քո մասին, քս սրտի մասին խօսենք:

## ՀԵՂԻՆԵ

Խօսենք, Մարգարիտ... Ինքս վազուց է պատրաստվում եմ սիրու բանալ, խոսովանուել քո առաջ...

## ՄԱՐԳԱՐԻՑ

Պատմիր, պատմիր, հոգեակս:

## ՀԵՂԻՆԵ

Ես... ևս սիրում եմ, Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՑ, յոզւոց հանելով:

Սիրում ես...

## ՀԵՂԻՆԵ

Այս, և սաստիկ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Եղի ևս զիտեմ, չեղինէ. վազուց է որ ևս այդ  
նկատում եմ:

## ՀԵՂԻՆՔ

Դու զիտես, դու նկատում ես. ի՞նչպէս...

## ՄԱՐԳԱՐԻՏ

Օ՛, հանգիստ եղիլ, ինքն ըստ ինքեան երկում է:  
ՀԵՂԻՆՔ

Այս, Մարգարիտ, շատ էլ կարգացիլ, շատ էլ  
լսել, բայց այժմ եմ միայն հասկանում, թէ ինչ  
զգացմունք է սէրը... Կատարեալ մի ցաւ, մի հիւան-  
դութիւն և միւնոյն ժամանակ մի անսահման երջան-  
կութիւն սրտիդ մէջ... Ես երբէք չէի փորձել այդ  
զգացմունքը... Միշտ նա, միշտ աշքիդ առաջ, միշտ  
նրան ևս տեսնում, նրա ձայնը լսում, նրա հետ խօ-  
սում...

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ... Աստուած ինքն է օրհնում քո սէրը... Դու  
ազատ, նա ազատ... (Յոգւց հանելով:) Երկուսդ էլ  
կարող էք երջանիկ լինել... Նա շատ ազնիւ երիտա-  
սարդ է և լիովին արժանի է քո սիրոյն:

## ՀԵՂԻՆՔ

Լինում են սովիներ, Մարգարիտ, որ ուզում եմ  
յանկարծ զիւկն ընկնել և ասել նրան բոլորը, բո-  
լորը...

## ՄԱՐԳԱՐԻՏ

Նա ինքն էլ անշափ սիրում է քեզ, չեղինէ:

## ՀԵՂԻՆՔ

Ի՞նչպէս. դու այդ էլ ևս նկատել:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Եյն... Մինչի օրս ես ոչինչ չէի ասում քեզ, որ-  
պէսզի խօսքերիս ազդեցութեան ներքոյ չգտնուիս,  
բայց այժմ՝ երբ դու ինքդ էլ խօստավանում ես ինձ  
քո զգացմունքները, ես կարեոր եմ համարում յայտ-  
նել քեզ, որ նա ևս ատենջում է քո սիրուց և այդ  
մասին շատ անգամ է խօսել հետպի...

## ՀԵՂԻՆՔ

Եմ բարի, իմ քնքուշ Մարգարիտ, որքան երջան-  
կացնում ես ինձ այս ըստէիս...

## ՄԱՐԳԱՐԻՏ

Քանի ժամանակ է, չեղինէ, ես նկատում եմ, որ  
դու զիշերներն էլ հանգիստ քուն չունիս... Երեի բայց  
աշքով հենց նրա վրայ ես մտածում:

## ՀԵՂԻՆՔ

Այս, Մարգարիտ, քունս կորել է բոլորովին...  
Ցերեկն էլ ման զալիս, կարծում եմ օդի մէջ եմ  
շրջում. կարգալիս, զրելիս, ինչ զործ էլ շինում եմ,  
միտք յանկարծ թռչում է զէպի նա և զործը ձեռ-  
քից վայր է ընկնում... Մարգարիտաս...

Ընկնում է զիրկը:

ՄԱՐԳԱՐԻՏ, խորը յոգւց հանելով:

Եյն, դու սիրում ես...

Պատկեր: Գրսից լավում է կետնի ծայնը: Տանի են:  
ՀԵՂԻՆՔ

Նա է:

Աչքերը սրբելով զնում է դէպի իր տեղը եւ աշխա-  
տում է մը կերպ յուզմունքը ծածկել, մինչ-  
դեռ լսում է Անահիտի ծայնը՝ ծանն են, տա-  
նը, պարոն կմոն:

ԱՆԱՀԻՑ, ներս դալով:  
Պարսն Լիոնն է:

## ՄԱՐԳԱՐԻՑ

ԽՆԴՐԻՑ:

ԱՆԱՀԻՄԸ դուրս է գնում:

## ՏԵՍԻԼ Բ

## ՆԲԱՆՔ, ԼԵՒՈՆ

ԼԵՒՈՆ, ԱՆԱՀԻՄԸ, գոներում:

Կարելի՞ է:

ՄԱՐԳԱՐԻՑ, դռան կողմը նայելով եւ քաղցրութեամբ:

Կարելի է, կարելի, մտէք, խնդրեմ: (Անահիտը  
Լեւոնի յետեւից ծածկում է դուռը:) Ա՛, պարսն Լիոն,  
համեցէք, համեցէք, խնդրեմ:

ԼԵՒՈՆ, երկու փորքիկ ծաղկեփունջ ձեռքին:

Բարի օր ձեզ, տիկին, բարի ձեզ, օրիորդ:

ՃԵՂԻՆԵՆ լուռ ողջունում է:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Բարի ձեզ, պարսն:

Տալիս է ձեռքը:

ԼԵՒՈՆ, առաջարկելով մէկ փունջը:

ԽՆԴՐԵՄ, տիկին, այս յատուկ ձեզ համար է:  
ՄԱՐԳԱՐԻՑ

Քատ ՃՆՈՐԴԱԿԱԼ եմ, պարսն Լիոն, դուք միշտ  
ուշադիր էք դէպի մեզ:

## ԼԵՒՈՆ

Օ՛, տիկին... (Գնում է դէպի ՃԵՂԻՆԵՆ եւ առաջար-  
կում նրան միւս փունջը:) Օրիորդ, բարեհաճեցէք:

ՃԵՂԻՆԵ, փոքր ինչ շփոթուած, ընդունում է փունջը:  
ՃՆՈՐԴԱԿԱԼ եմ:

Կարմ լրութիւն:

ՄԱՐԳԱՐԻՑ, փունջը դնելով բաժակի մէջ:

Սքանչելի ծաղկիներ են... Դուք մեզ յատուկ պար-  
տաւորեցնում էք, պարսն Լիոն... Թէև, պիտի նկա-  
տեմ, այս անգամ մի փոքր ուշ մասրերեցիք մեզ:  
ԼԵՒՈՆ

Մէկ բոպէ անգամ մաքիցս չէք հեռացել, տիկին,  
ոչ դուք, ոչ օրիորդը, հաւատացէք. միայն հարկա-  
գրուած էի փոքր ինչ երկար մնալ զիւզում... (ՃԵՂԻ-  
ՆԵՆ փունջը ձեռքին գնում է դէպի խորքը, ուր մի յար-  
մար բաժակ է օրոնում:) Ա՛, ՃՆՈՐԴԱԿԱԼ եմ, տիկին,  
դուք արդէն վերջացրել էք նկարը: Եւ ինչ գեղեցիկ  
է դուրս եկել... Այն, այն, հրաշալի է... Զեր տա-  
ղանգը ինձ հիացնում է, տիկին... ՃՆՈՐԴԱԿԱԼ խոր-  
հուրդս. գնացէք, Գեղարուսատից ձեմարան մտէք.  
Հոչակաւոր անուն կը հանէք, հաւատացէք ինձ:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Է՛, պարսն Լիոն, մինչի այսօր ձեր զիւզն էլ չկա-  
րողացայ տեսմել, ուր մնաց ձեմարանը:

## ԼԵՒՈՆ

Սակայն ես յոյս ունիմ, տիկին, որ մէկ օր ՃՆՈՐ-  
ԴԱԿԱԼ և այցելութեան կը զաք իմ խրճիթը:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Կ'աշխատեմ... Թէպէտ ես կը ցանկանայի ակոնել  
ձեզ այդ խրճիթում, երբ արդէն որոշած կը լինէիք  
ձեր վիճակը և ձեր իդձելը կատարած:

ԼԵՒՈՆ, յետ նայելով դէպի Հեղինէն, որ գտնվում է բերի խորքում:

Իմ զգացմունքները ձեզ լիովին յայանի են, տիկին, և կարող էք երեակայել, թէ նրան երջանիկ կը լինէի, եթէ ձեր ցանկութիւններն իրականութիւն ստանային:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Սոսուծով... (Վերցնելով ծաղկեփունջը) Ի՞նչ անուշահոտ են այս ծաղիկները... Դարձեալ ձեր գիւղիցն է իհարկէ:

### ԼԵՒՈՆ

Այն, տիկին, իմ փաքրիկ պարտէղից:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Հիանալի ծաղիկներ են... (Մտածմունքի մէջ է ընկնում, մինչդեռ Լեւոնը աչքը չէ հեռացնում Հեղինէից:) Ասցէք, խնդրեմ, ի՞նչ լուր ունիք ձեր բարեկամից... Ենցեալ անգամ տառմ էիք, որ նա Հայաստան է զնացել:

Փունջը դնում է իր տեղը:

### ԼԵՒՈՆ

Այն, տիկին, բայց թէ նրանք է այժմ, ևս այդ հաստատ չզիտեմ:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Նա բաւականին ուշացաւ:

### ԼԵՒՈՆ

Նամակիս էլ չպատասխանեց:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Չիցէ թէ որ և է փորձանքի հանդիպած լինի:

### ԼԵՒՈՆ

Ո՛չ, աչ, տիկին... Այդ մասին հանդիսա եղէք, ևս

հաստատ տեղեկութիւն ունիմ, որ մօտ օրերս նրան անձամբ տեսել են ողջ և առողջ... Երեկ զիւղից զիւղ շջում է իր հատազօտութիւնները լրացնելու և շատ հաւանական է, որ նամակներս էլ ստացած չլինի...

Լոռիւն: Մարգարիտը կամաց-կամաց գաղտագնաց լինելով, քաղցրութեամբ յետ է նայում դուրս գնալիս, մինչդեռ Լեւոնը սիրով նայում է Հեղինէին, որ այդ միջոցին ջուր է ածում մի զեցիկ բաժակի մէջ:

### ՏԵՍԻԼ Գ

### ՀԵՂԻՆԵ, ԼԵՒՈՆ

ՀԵՂԻՆԵ, առաջ զարով:

Գեղեցիկ ծաղիկներ են... Ջատ շնորհակալ եմ, պարոն Լեւոն:

Ծաղկեփունջը բաժակով դնում է իր սեղանի վրայ եւ տեսրակները կարգի բերում:

### ԼԵՒՈՆ

Ահշափ ուրախ եմ, օրիսրդ, որ կարողանում եմ գոնէ մի շնչին զուարձութիւն պատճառել ձեզ... 2հմ՝ իսանգարում արգեօք:

### ՀԵՂԻՆԵ

Ո՛չ, աչ, պարոն Լեւոն, ես արդէն վերջացրել եմ... Եսացելք, խնդրեմ:

Նստում են:

### ԼԵՒՈՆ

Չեր սովորական պարապմունքն է երեկ:

ԱՄՈՒՍԻՆՆԵՐ

## ՀԵՂԻՆՔ

Այն, աշակերտներիս աետրակներն են:  
ԼԵՒՈՆ

Երևակայել չէք կարող, օրիորդ, թէ ինչ հրճուանք  
եմ զգում, եբբ աեսնում եմ, որ դուք այդքան սիրով  
շարունակում էք ձեր պարապմունքը:

## ՀԵՂԻՆՔ

Դուք շատ բարի էք, պարոն Լեռն... Ես իմ փոք-  
րիկներիս համար կատարում եմ այն, ինչ որ դուք  
անում էք ձեր գիւղի մեծերի համար... (Կարծ լու-  
թիւնից յետոյ:) Բայց ուր էիք այսքան ժամանակ:

## ԼԵՒՈՆ

Ուր որ միշտ, օրիորդ, անձամք գիւղում, իսկ հոգ-  
ւով և սրտով այստեղ, ձեղ մօտ:

ՀԵՂԻՆՔ, քաղցրութեամք նայում է Լեռնին:  
Եւ այդ էք պատճառը իհարկէ, որ այս քանի օրս  
մեղ շայցելեցիք:

## ԼԵՒՈՆ

Հաւատացէք, օրիորդ, ես երջանիկ կը լինէի, եթէ  
միշտ ձեղ մօտ զտնուէի, ձեղ աեսնէի, ձեր ձայնը  
լսէի. բայց այս ամենը կախուած է ձեր կամքից և  
միմիայն ձեր կամքից... (Տեղից վեր է կենում: Ճեղնէն  
հրճում է:) Ձեղ յայտնի են, օրիորդ, իմ զգացմունք-  
ները, իմ սրտի ամենախորին խորհուրդները, ինչպէս  
և ես գիտեմ, որ ձեր սրտումն էլ զոնէ մի փոքրիկ  
անկիւն կայ ինձ համար... Եւ ահա ես սպասում եմ  
այն երջանիկ օրին, եբբ դուք կը տաք ինձ ձեր հա-  
մաձայնութիւնը:

ՀԵՂԻՆՔ, ոտքի կանգնելով:

Իմ համաձայնութիւնը...

## ԼԵՒՈՆ

Այն, ձեր համաձայնութիւնը, որից և կախուած է  
իմ երջանկութիւնը:

## ՀԵՂԻՆՔ

Եւ դուք յիբարի համոզուած էք, որ ես կարող եմ  
ձեղ երջանկացնել:

## ԼԵՒՈՆ |||

ՀԱՍՏԱՏԱՊԷՍ:

## ՀԵՂԻՆՔ

Եւ ինքս էլ երջանիկ լինել:  
ԼԵՒՈՆ

Այն, այն, որովհետեւ ես ձեղ սիրում եմ... Դուք  
գիտէք, որ սիրում եմ... Սիրում եմ ձեղ անկեղծ, ~  
անդաւաճան, սուբբ սիրով, սիրում եմ այն զգաց-  
մունքով, որ ոչ մէկ բան չէ կարող խախտել... (Հե-  
ղինէն լուռ նայում է:) Մի խօսք, միայն մի քաղցր  
խօսք, օրիորդ, և դուք կարող էք յաւիտեան երջան-  
կացնել ինձ:

## ՀԵՂԻՆՔ

Եւ միշտ կը սիրէք ինձ այդպէս:  
ԼԵՒՈՆ

ՄԻՇՏ, միշտ, երդվում եմ:  
ՀԵՂԻՆՔ

Ես ձեղ հաւատում եմ, Լեռն:

Մեկնում է ձեռքք:

ԼԵՒՈՆ, համբուրելով ձեռքք:

Հաւատացէք, օրիորդ, հաւատացէք, որ ես ձեղ  
սիրում եմ բոլոր սրտով, հոգուս բոլոր զօրութիւնով:  
ՀԵՂԻՆՔ, փոքր ընդմիջումից յետոյ ընկնում է Լեռնի գիրկը:

Լեռն...

## ԼԵԽՈՆ

Հեղինէս... (շամբուրում է:) Վերջապէս դու իմն ես:  
ՀԵՂԻՆԷ

Յաւիտեան...

Աչքերը սրբում է:

## ԼԵԽՈՆ

Հրեշտական...

## ՀԵՂԻՆԷ

Լոիր, Լիոն, ես կարեսը բաներ ունիմ՝ քեզ հա-  
ղորդելու... (Նստում են:) Այն օրից, երբ քեզ հետ  
ծանօթացայ ժողովարանում, քեզ հետ պարեցի, այն  
օրից սիրառ կպաւ քեզ, այն օրից ես քեզ սիրեցի,  
Լիոն:

## ԼԵԽՈՆ

Ի՞նչպէս... Ռւբենն էլ ինչի էիր հետո այնպէս  
սառը վարվում է ինձ տանջում... Օ՛, Հեղինէ, միթէ  
մեղքդ չէի գալիս:

## ՀԵՂԻՆԷ

Հաւատացիր, Լիոն, այդ վարմունքը նազ չէր իմ  
կողմից... Ես ինքս պակաս չէի տանջվում. բայց չէի  
համարձակվում սիրառ բաց անել քո առաջ:

## ԼԵԽՈՆ

Աննման իմ Հեղինէ...

## ՀԵՂԻՆԷ

Մանելով այժմ մի նոր ասպարէղ՝ հետզ կեանքի  
լուծը քաշելու, ես կամենում եմ նոյն խոկ առաջին  
քայլում պարզել քո առաջ իմ զգացմունքները... Ես  
սիրում եմ քեզ, Լիոն. սիրում եմ այն աստիճան, որ  
պատրաստ եմ կեանքս զոհել քեզ համար...

## ԼԵԽՈՆ, համբուրելով ձեռքը:

ՀՈՎԻԿԱԼՍ...

## ՀԵՂԻՆԷ

Հաւատում եմ, որ նոյնքան էլ դու ես ինձ սի-  
րում...

## ԼԵԽՈՆ

Այն, հրեշտական, իմ սերը դէպի քեզ երբէք չի  
սպառուիլ, երդվում եմ քեզ:

## ՀԵՂԻՆԷ

Այսուհետեւ, Լիոն, դու և ես մի ենք. քո կամբը՝  
իմ կամքն է, քո սիրով՝ իմ սիրան է, քո կեանքը՝  
իմ կեանքն է... Իմ մէջ դու կը գտնես քո հաւատա-  
ցիմ ընկերակիցը, քո անձնուէր բարեկամը... Ինչ որ  
կարող եմ, ինչ որ ձեռքիցս գայ, քո բոլոր պահանջ-  
ները միշտ կատարած համարիր... Միայն սիրիր ինձ,  
Լիոն, միշտ սիրիր... Երբէք չգաղարես ինձ սիրե-  
լուց, երբէք, զիտես... Իմացիր, Լիոն, եթէ մի ժամ,  
մի բոլէ գաղարես ինձ սիրելուց, ինձ ուրանաս, լու  
է եթէ իսկոյն սպանես ինձ:

## ԼԵԽՈՆ

Ամբազ կեանքս՝ մինչեւ վերջն շունչս քո երջան-  
կութեանը կը նուսիրեմ, անզին իմ Հեղինէ:

## ՀԵՂԻՆԷ

Օ՛, ես երջանիլ եմ... (Աչքերը սրբում է: Փոք-  
րութիւնից յետով:) Բայց զիտես ինչ կայ, Լիոն... Մար-  
զարտի զրութիւնը քեզ յայտնի է, նրան մեղանից  
երբէք չպիտի հեռացնենք:

## ԼԵԽՈՆ

Դու էլ զիտես, հրեշտական, որ ալիքն Մարզարտին

ևս սիրում եմ որպէս իմ հարազատ քրոջս, իհարկէ նա կը մնայ մեղ մօտ:

ՀԵՂԻՆՔ, մեկնելով ձեռքը:

Ճնորհակալ եմ, լիոն:

ԼԵՒՈՆ

Իմ անգին չեղինէ:

ՏԵՂԻԳ վեր են կենում:

ՀԵՂԻՆՔ

Մի խնդիր ես, լիոն... Ի՞նչ զբութեան էլ հասնիս աշխարհիս մէջ, որքան էլ հարստանաս, ի՞նչքան էլ մեծ դիբը ստանաս հասարակութեան մէջ, դու պէտք է թայլ տաս, որ ես իմ պարապմունքներս շարունակեմ:

ԼԵՒՈՆ

Ես քեզ պաշտում եմ, իմ աննման չեղինէ... Աշխարհը, հոգիս, իմ ուղածս էլ հէնց այդ է... Դեռ դու սպասիր, մեր ապարայի մասին մաքումս այնպիսի բաներ են պատոյս զալիս, այնպիսի զեղեցիկ պատկերներ են նկարվում... Քեզ համար ես առանձին ուսումնաբան կը հիմնեմ մեր զիւզում, ուր երկուսս էլ լայն ասպարէզ ունինք գործելու... Պու ուսումնաբանում զիւզութեան լրսը կը տարածես մեր ապարայ յոյս մանուկների մէջ, իսկ ես բաց երկնքի տակ կը գործեմ նրանց ծնողների հետ և մենք մեր անձնական օրինակով կը խրախուսենք ու կ'առաջնորդնքնք նրանց:

ՀԵՂԻՆՔ, բռնելով լեւոնի ձեռքը:

Օ՛, լիոն...

ԼԵՒՈՆ, չեղինէի ձեռքը բռնած:

Այն, իմ անգին լնկերս. այսպէս ձեսք ձեռքի

տուած առաջ լնիթանալով, մենք կ'աշխատենք մշտկել մեր փոքրիկ անդաստանը և գուցէ կարողանանք՝ թէ ծառայել ժողովրդին և թէ լիութին ու անդորրութիւն տարածել մեր շուրջը:

ՀԵՂԻՆՔ

Ի բոլոր սրաէ սիրում եմ քեզ, լիոն:

Միմեանց զիրկն են ընկնում և համբուրվում:

ՏԵՍԻԼ Դ

ՆՐԱՆՔ, ՄԱՐԳԱՐԻՏ, առանց զողնոցի:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ա՛, չնորհաւորում եմ...

ԼԵՒՈՆ

Ա՛իս, տիկին...

ՀԵՂԻՆՔ, ընկնելով Մարգարտի զիրկը:

Ա՛իս, Մարգարիտ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Վերջապէս...

Համբուրում է չեղինէին:

ԼԵՒՈՆ

Օրհնեցք մեզ, տիկին... Ձեր բերանով օրհնուած՝ մենք աւելի երջանիկ կը լինինք:

ՄԱՐԳԱՐԻՏ, մեկնելով ձեռքը, որ լեւոնը համբուրում է:

Աստուած ինքն է ձեզ օրհնողը, բարեկամներս, որովհետեւ զուք սիրում էք միմեանց: Իսկ ես ցանկանում եմ, որ այդ սէրը ձեր մէջ միշտ անխախտ մնայ ձեր ամբողջ կեանքի լնիթացքում... Ամուսին-

ների համար ամենամեծ երջանկութիւնը փոխադարձ  
ուշըն է...

## ԼԵԽՈՅՆ

Հաւասայցնում եմ ձեղ, տիկին, որ իմ ուշը գեղի  
չեղինէս կեանքիս հետ միայն կը վերջանայ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Լիովին համոզուած եմ:

## ՃԵՂԻՆԵ

Ո'րշափ աւելի երջանիկ կը լինէինը, Մարգարիտ,  
եթէ քեզ ևս բազաւոր տեսնէինը:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Իմ վիճակը վշտալի է, հոգիս, և ես համբերու-  
թեամբ պիտի տանիմ իմ խաշը:

## ԼԵԽՈՅՆ

Մենք կ'աշխատենք թեթեայնել այդ խաչի ծան-  
րութիւնը... Մենք ձեղ սիրում ենք ինչպէս մեր հա-  
րազատ քրոջը... Դուք կը բնակուէք մեղ մօտ:

## ՃԵՂԻՆԵ

Այն, այն, Մարգարիտս... (Լեռնին:) Իմ բարի, իմ  
աղին Լիոն:

## ՄԱՐԳԱՐԻՏ, ձեռքը Լեռնին մեկնելով:

Սպնիւ եղբայր, այդ համակրանքն արգէն թեթե-  
այնում է իմ լծիս ծանրութիւնը և մեծ սփոփանք  
է վիրաւոր սրախ համար... Ամին բան կախուած է  
նախախամութեան կամքից... Առայժմ խնդրում եմ  
երկուսիդ էլ, որ ընդունէք այս նկարը որպէս զրա-  
ւուկան մեր բարեկամութեան:

## ԼԵԽՈՅՆ, համբուրելով հեռքը:

Իսրաէ չնորհակալ եմ... Զեր պարզեց մեղ համար  
թանկ է և խորհրդաւոր:

ՃԵՂԻՆԵ, համբուրելով Մարգարիտն միւս կողմից:  
Ա՛յս, իմ անգին Մարգարիտ...

## ՄԱՐԳԱՐԻՏ

Այսօր ձեր կեանքի համար նոր արշալոյս է բաց-  
վում. թող ձեր օրով ծագի այն արել, որի մասին  
այնքան յաճախ և այնչափ շատ երազել եմ ես Ար-  
շալոյսի այս պատկերը նկարելիս...»

## ՃԵՂԻՆԵ

Ի՞նչ երջանկութիւն...

## ԼԵԽՈՅՆ

Օ՛, մեր երջանկութեանը երջանկութիւն չի հաս-  
նիլ այն օրը...

Աննչէծ, փոքրիկ սկսուելով բերում է մի այցետում:  
Տիկին, ձեղ են հարցնում:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Վերցնելով այցետումը:

## ԼԵԽՈՅՆ

## ՄԻՌԵ...

Ճտապում է գէպի գուռը, Մարգարիտը սաստիկ յուզ-  
վում է:

## ՃԵՂԻՆԵ

Այ սրախութիւն:

## ՏԵՍԻԼԵ

## ՆԲԱՆՔ, ԱՐՏԱՇԵՍ

ԼԵԽՈՅՆ, հանդիպելով Արտաշէսին, նախասենեակում:  
Արտաշէս...

## ԱՐՏԱՃԵՍ

Լիոն...

Գրկում եւ համբուրգում են. կանայք դիմաւորում են:  
Լեխոն

Վերջապէս...

Արտաշէսը շտապով մտնում է:  
ՄԱՐԴԱՐԻՑ

Պարոն Արտաշէս...

## ԱՐՏԱՃԵՍ

Բարի ձեղ, տիկին...

ՄԱՐԴԱՐԻՑ, տալով ձեռքը:

Բարի ձեղ... Ահա և գուշ...

ԱՐՏԱՃԵՍ, համբուրելով ձեռքը:  
Օ՛, տիկին...

## ՄԱՐԴԱՐԻՑ

Այս ինչպէս, այս երբ...

## ԱՐՏԱՃԵՍ

Հինց նոր... (Հեղինէին:) Բարի ձեղ, օրիորդ:

ՀԵՂԻՆԷ, տալով ձեռքը:

Բարի, պարոն Արտաշէս. գալուստ բարի:

ԱՐՏԱՃԵՍ, լեռնին:

Դարձեալ բարի, բարեկամա:

## ԼԵԽՈՆ

Բարի, բարի, եղբայր, ազքներս ջուր կտրուց  
քեզ սպասելով:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Նստեցք, ինկրիմ: (Կատում են՝ Մարդարիտն ու  
Արտաշէսը աջ կողմը, իսկ Հեղինէն ու Լեռնը — ձախն.  
Անահիտը դուրս է գնում: ) Դուք մեղ բոլորովին մոռա-  
ցաք, պարոն Արտաշէս:

## ԱՐՏԱՃԵՍ

Մոռացայ... Ո՛չ, աչ, տիկին, մի բոպէ անգամ  
չեմ մոռացել:

ԼԵԽՈՆ

Բայց այս ուր էիր կորել, ասա, ինկրիմ... նա-  
մակներս ստացել են:

## ԱՐՏԱՃԵՍ

Իհարկէ:

ԼԵԽՈՆ

Ցեաոյ ինչի՞ շպատասխանեցիլ:  
ԱՐՏԱՃԵՍ

Է՞հ, եղբայր, առանց քո նամակների էլ ես շատ  
անգամ ուզեցել եմ մի երկու խօսք գրել քեզ, բայց  
ճանապարհորդութիւնս այնպէս դժուարին էր և ար-  
կածներով լի, որ համարեա հանգիստ չունէի... իսկ  
նամակներդ միայն մի բանի օր կը լինի, որ բոլորը  
միասին յանձնեցին ինձ և ահա ես ինքս անձամբ  
եկայ, որպէս կենդանի պատասխան... Կը պատմեմ,  
կը պատմեմ, ամենայն ինչ կը պատմեմ քեզ, Լեռն...  
Պատմելու բաներ շատ կայ և, տարաբաղդաբար,  
շատ անմիթալ բաներ... Ինչեցէ, ես երջանիկ եմ,  
որ դարձեալ ձեղ հետ եմ և ձեղ ողջ և առողջ եմ  
տեսնում:

ԼԵԽՈՆ

Եւ միենոյն ժամանակ տեսնում ես բարեկամիդ՝  
իր կեանքի ամենաերջանիկ բոպէի մէջ:

## ՄԱՐԴԱՐԻՑ

Այն, պարոն Արտաշէս, կարող էք շնորհաւորել...  
Լեռնն ու Հեղինէն հէնց այս բոպէիս պարզեցին մի-  
մեանց իրանց զգացմոնքները:

## ԱՐՑԱՋԵՍ

ի՞նչ ուրախալի լուր... (Տեղից վեր Թոշելով; ) Ծնոր-  
հաւորում եմ, Լեռն: (Գրկվում են եւ համբուրվում: )  
Դեռ չգնացած ես զուշակում էի, որ ձեր համակրո-  
թիւնն այդպիսի վախճան պիտի ունենայ... (Հեղինէին: )  
Ծնորհաւորում եմ ձեզ, օրիորդ... քոյրիկս... (Համբու-  
րելով ձեռքը: ) Այսուհետեւ ինձ թող կը տաք այդպէս  
անուանել ձեզ... Լեռնի հարսնացուն չէ կարող ինձ  
օտար մնալ:

## ՀԵՂԻՆԵ

Չատ ուրախ կը լինիմ, պարսն Արտաշէս, ձեզ պէս  
եղայր ունենալու:

ԱՐՑԱՋԵՍ, Հեղինէին զրուխ է տալիս, յետոյ դառնալով  
Լեռնին:

Կրկին շնորհաւորում եմ, եղայրս... (Հեղինէին: )  
Պէտք է իմանաք, քոյրիկ, թէ մինչե որ ասախճան  
պրաւած ունիք դուք Լեռնի սիրալ... (Լեռնին, ձեռքը  
ծոցը տանելով եւ ժպտալով: ) Կ'ուզե՞ս բարձրաձայն կար-  
դամ քո ճարտասանական գարձուածները...

Ծիծաղում է:

ԼԵՂԻՆ, բռնում է Արտաշէսի ձեռքը եւ ժպտալով:

Ո՛չ, ոչ, մենք քեզ հաւատում ենք... Դու մէկ այս  
կողմը նայիր...

Յոյց է տալիս նկարը:

## ԱՐՑԱՋԵՍ

Վահն, այս ինչ սքանչելիք է...

Մնում է ապշած:

## ԼԵՂԻՆ

Տիկնոջ դործն է:

## ՀԵՂԻՆԵ

Մարգարիտ հէնց այսօր վերջացրեց այդ պատ-  
կերը:

## ԼԵՂԻՆ

Միանգամայն հիացած եմ:

## ԱՐՑԱՋԵՍ

Սքանչելի է... (Մարգարտին: ) Ծնորհաւորում եմ,  
տիկին... Դուք կատարելութեան էք հասցրել ձեր  
վրձինը... (Մարգարիտը թեթև զլուխ է տալիս: ) Իսկ ի  
խոկ Արշալոյս...

## ԼԵՂԻՆ

Ծնորհաւորիք և մեզ, Արտաշէս: (Մարգարիտն անց-  
նում է ձախ կողմու: ) Այդ պատկերը մենք պարզ ստա-  
ցանք մի քանի բռպէ տաաջ ի յիշատակ մեր երջանիկ  
նշանագրութեան:

## ԱՐՑԱՋԵՍ

Ծնորհաւորում եմ, իսբաէ շնորհաւորում եմ: Տայ  
Աստուած որ այս պարզելը երջանկութիւն բերէ ձեզ...  
(Սեղմում է Հեղինէի եւ Լեռնի ձեռքը: ) Տես, տես, Լե-  
ռն, տես թէ այս փոքրիկ կտափ կտորը որ է տա-  
նում մարզու միտքը, հոգին... Հաւատա, Լեռն, ինձ  
թուում է, որ ես հէնց այս բռպէիս դարձեալ այն  
սրբավայրերումն եմ շրջում և մեր թշուաս հզբայրա-  
կիցներին տեսնում եմ Երկնքից օգնութիւն սպասե-  
լիս... (Ամենքին: ) Դուք չգիտէք, թէ ինչ զրութեան  
մէջ են այն խեղճերը: Պատիւ, կեանք, կալք, ընտա-  
նիք, ոչինչ, ոչինչ ապահով բան շտնին այն թշուա-  
ները: Բայց այդ մասին յետոյ... (Լեռնին: ) Դու տուն,  
տեսնեմ, ինչ էք անելու, ինչպէս էք տուն ու տեղ

սարքելու... Կարծում եմ, որ դու քո զիւղից ձեռք  
չես վերցնիլ:

### ԼԵԽՈՆ

{ Իհարկէ չէ... Ի՞նչը կարող է փոխարինել զիւղա-  
կան կեանքի վայելչութեանը: Հեղինէլս հետ մենք  
իսկոյն որոշեցինք մեր բոլոր ոյժերը զիւղին նուիրել:  
ԱՐՏԱՋԵՍ

Կատարեալ յաջողութիւն եմ ցանկանում ձեղ:  
ԼԵԽՈՆ

Նոյնը և քեզ ենք ցանկանում:  
ՀԵՂԻՆՔ

Ի բոլոր սրաէ:

ԱՐՏԱՋԵՍ, գլուխ է տալիս նրանց եւ զնում է դէպի  
Մարդարիտը:

Իսկ ձեզ, տիկին, չպիտեմ ի՞նչ ասեմ. լեզուս կաշ-  
կանդվում է... (Նատում են բեմի ծախ կողմում: Ճեղի-  
նէն ու Լեւոնը մի կողմը քաջուելով նոյնպէս նստում են  
եւ սիրով խօսակցում: ) Ինձ այնպէս ապշեցրեց ձեր  
բաժանութիւնը...

### ՄԱՐԳԱՐԻՏ

Վիճակս էր այդ, ի՞նչ արած... Դուք ի՞նչպէս ճա-  
նապահողդեցիք. վերջացրէք արդեօք ձեղ տուած  
յանձնարարութիւնը:

### ԱՐՏԱՋԵՍ

Այդպէս շուտ անկարելի էր, տիկին... Գործը զեռ  
շարունակվում է... Ընկերներս այնտեղ մնացին:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Աստուած Ինքը յաջողի... (Արտաշէսը գլուխ է տա-  
լիս: Լոռոթիւն: ) Գիտէք, ես արդէն սկսել էի սաստիկ

անհանգիստ լինել ձեր մասին... Ամբողջ երեք ամիս  
է գնացել էք և այսքան ժամանակ ձեղանից ոչ մի  
նամակ չէր ստացվում:

ԱՐՏԱՋԵՍ, յուզուած:

Ա՞ս, տիկին, եթէ զիւենայիք...  
ԱՆԱՀԻԾ, դրսից բերում է մի ծրար եւ տալիս է Մար-  
գարտին: //

Պատասխանի են սպասում, տիկին:  
ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞ւմից է:

### ԱՆԱՀԻԾ

Զգիտեմ, տիկին, տանտիրոջ ծառան բերեց:  
ՄԱՐԳԱՐԻՏ, բանալով ծրարը:

Գարձեալ... (Աչքի անցնելով թուղթը եւ սաստիկ շուս-  
րուելով:) Աստուած իմ...:

Տեղից վեր է թուզում: Ամենքն էլ ոտքի են կանգնում:  
ԱՐՏԱՋԵՍ

Ի՞նչ է...

ՀԵՂԻՆՔ, միաժամանակ:

Ի՞նչ կայ...

ԼԵԽՈՆ, նոյնպէս:

Ի՞նչ է պատահել:  
ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՞վինչ, ո՞վինչ... (Անահիտին:) Ասա, լաւ:  
Անահիտը դուրս է զնում:

ԱՐՏԱՋԵՍ

Ի՞նչ բան է, տիկին: Զենք կարող արդեօք սի-  
տանի լինել:

### ԼԵԽՈՆ

Իհարկէ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ընորհակալ եմ, բարեկամներս, դուք ոչնչով չէք կարող օգնել... Իմ վիճակս կախուած է մի այնպիսի մարդու կամքից, որ վայելում է իր զիբքի ըտոր արտօնութիւնները, իսկ ես՝ թշուառս, նոյն իրաւունքներից զուրկ, անօպնական և անպաշտպան, ստիպուած եմ նրա կամայականութեանը զոհ լինել ամբողջ կեանքիս ընթացքում: (Տալով Թուղթը Լեռնին:) Տեսէք, ահա այս երբորդ անգամն է, որ ոստիկանութիւնը պահանջում է լինանից իմ զիսագիրը, բայց մինչեւ օրս ես չեմ կարողանում ձեռք բերել այդ ողորմութիւնը իմ պարօն ամուսնուց...

## ԱՐՑԱՋԵՍ

Ի՞նչ... Միթէ չէ տալիս նա ձեզ այդ թուղթը:  
ՄԱՐԳԱՐԻՏ

Այն, չէ տալիս: (Մինչեռ Լեռնն ու Արտաշէսը կարդում են Թուղթը, մեկուսի:) Կ'ազմառում՝ արդեօք ես այս տանջանքներից...

## ԱՐՑԱՋԵՍ

Հանգստացէք, տիկին, մենք կը կարգադրենք այս գործը... Ամենահասարակ քաղաքավարութիւնն իսկ պահանջում է, որ նա ապահովացնէ ձեր կացութիւնը զոնէ այդ կորմից: Լեռնն, Թուղթը տալով Հեղինէին, որ նոյնպէս հետաքրքրում էր:

Այն, պէտք է աշխատենք շուտով ձեռք բերել այդ զիսագիրը, ապա թէ ոչ, ինչպէս երեսում է, ոստիկանութեան համբերութիւնը հատնում է արդէն:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Բայց ինչպէս ձեռք բերել. ով կը տայ ինձ իմ

զիսագիրը, ով ունի այդ իրաւունքը բացի իմ ամուսնուց... Դուք լաւ զիտէք, որ այդ կախուած է միմիայն նրա կամքից, և ոչ մի զօրութիւն չէ կարող ստիպել նրան այդ արտօնագիրն ինձ տալու, եթէ ինքը չկամենայ...

## ԱՐՑԱՋԵՍ

Իդուք էք այդչափ անհանգիստ լինում, տիկին. Այդ այնքան էլ գժուար չէ, որքան կարծում էք: Լեռնն, առնելով Թուղթը Հեղինէի ձեռքից:

Այն, տիկին, ահա ես ու Արտաշէսը իսկոյն կ'երթանք ոստիկանատոնն և կ'աշխատենք որ մի փոքր ժամանակ տան մեղ, իսկ այդ միջոցին, իհարկէ, մի ելք կը գտնենք:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, դուք մնացէք... Ես ինքս պէտք է գնամ, ես ինքս պէտք է զոնէ զուռն ընկնեմ, ազգականներիս միջնորդութեանը դիմեմ, աեսնեմ թէ ինչ կարող եմ անել իմ սկ ու մութ օրիս համար... Դուք մնացէք, թնդ իմ անբաղբութիւնը շխանգարէ ձեր երջանկութիւնը... (Գնալով:) Ո՛՛, այս ամենը ամուսնուս գործն է, ես լաւ զիտեմ...

Դուքս է զնում ձախ կողմի դռնից:

## ՀԵՂԻՆԵ

Մտածեցէք, պարսներ, աշխատեցէք, ազատեցէք նրան... Իսէլ Աստուծոյ, ազատեցէք...

Դուքս է զնում Մարզարտի յետեւից:

ՏԵՍԻԼ Զ

ԱՐՏԱՇԵՍ, ԼԵԽՈՆ

ԱՐՏԱՇԵՍ

Ես կարծում եմ, որ Աստիկանապետը չի մերժի  
մեր խնդիրը:

ԼԵԽՈՆ

Իհարկէ... Աստիկանութեան պահանջը, երիի, սառ-  
պին պաշտօնեաների աւելորդ եռանգի հետևանքն է:  
Մեր Աստիկանապետը բարեկիրթ մարդ է և շատ էլ  
ազնիւ. հաղիւ թէ նա կամենայ հալածել մի կնոջ, որ  
հասարակութեան ընտիր դասակարգին է պատկանում:

ԱՐՏԱՇԵՍ

Գնանք, փորձենք, յետոյ ես զիտեմ իմ անելիքը:  
ԼԵԽՈՆ, Թուղթը զնելով սեղանի վրայ:

Արդէն գլուխդ տաքացաւ:

ԱՐՏԱՇԵՍ

Ես կը ցնողուիմ, Լեսն, եթէ որիէ միջոցով ձեռք  
շրերիմ Մարգարտի զիտագիրը: Այդ ամենակարևոր մի  
թուղթ է այս ժամանակին, սատիկանութիւնը պա-  
հանջի, չպահանջի, այդ միենոյն է:

ԼԵԽՈՆ

Մի փոքր համբերութիւն, Արտաշէս... Զէ՞ որ աիկ-  
նոջը զիտագիր տալը բացառապէս կախուած է մի-  
միայն իր ամուսնու կամքից:

ԱՐՏԱՇԵՍ

Հաւատամ ինձ, Լեսն, եթէ մեզ չյաջողուի մի բա-

նով օգնել, ես այդ զիտագիրը դէմ առ դէմ կ'առնեմ  
հինց նորին վսեմութիւնից... Ես նրա հետ հին հա-  
շիներ ես ունիմ... Ի՞նչքան ցաւում եմ, որ այն  
ժամանակ ոչինչ չզիտէի զրանց յարաբերութիւնների  
մասին, ես նրան քաղաքավարութեան դասեր կը  
տայի. բայց ինչ արած, Մարգարտի պատուի համար  
ես սախուած էի համբերութեամբ տանել այն պա-  
րոնի վիրաւորեցուցիչ ակնարկութիւններն ու կոպիտ  
վարմունքը:

ԼԵԽՈՆ

Խեղճ կին... Ինչպէս երեսում է նա վազուց տան-  
ջուելիս է եղել իր շուայտասէր ամուսնու ձեռքին:

ԱՐՏԱՇԵՍ

Օ՛, ես միանգամ ընդմիշտ կ'աղատեմ Մարգար-  
տիս այն բռնակալից: Ա՛խ, Լեսն, քո նամակներն ինձ  
խելազարութեան հասցըլին... Հինց որ սաացայ այդ  
նամակները, բոլոր զործերս բարձի թողի արի և  
զիտագատառ ճանապարհ ընկայ... Ահա հինգ օր է,  
մէկ բոլէ հանգստավթիւն չիմ սննեցիլ. զիշեր ցերեկ  
սլանում էի անդադար. սար, ձոր, զետ, դաշտ, կար-  
ծես գոյսութիւն չունէին ինձ համար... Լեսն, Լեսն,  
եթէ զու կարողանայիր երեակայել, թէ ինչ կրակով  
է այրվում սիբաս, նրախուի սիրով իմ սիլուում ես Մար-  
գարտին... Ես պատրաստ եմ ամեն բան անել, ամեն  
բան մոռանալ և ուրախութեամբ մեռնել նրա սաների  
տակ, միայն թէ մի օր երջանիկ տեսնէի նրան...

ԼԵԽՈՆ, փոքր լոռեթիւնից յետոյ:

Ես քեզ հասկանում եմ, Արտաշէս... Եւ նա լիովին  
արժանի է այդ սիրոյն:

## ԱՐՏՍՋԵՍ

Գիտեմ, եթէ այս վոփոխութիւնը չպատճէր նրա կեանքի մէջ, ևս վճռել էի այլիս չերեալ նրա աշխին... Բայց գնանք, Լեռն, ուշանում ենք:

## ԼԵԽՈՆ

Իսկոյն, Արտաշէս, Թնդ նրանք էլ դուքս գան:  
ԱՐՏՍՋԵՍ

Ա'ս, այն, ևս բոլորովին շփոթուեցայ... (Վան է զախս, յանկարծ կանգ է առնում նկարի առաջ:) Տես, Լեռն, կը հաւատմա, այլիս ոչինչ չեմ որոշում. աչքիս մժնել է միանգամայն:

## ՏԵՍԻԼԵ

ՆԻՄՆՅ, ՄԱՐԳԱՐԻՑ, ՀԵՊԻՆԵ

ՄԱՐԳԱՐԻՑ, դուքս է զախս Հեղինէի հետ. երիտան էլ բոլորովին պատրաստ՝ տանից դուքս գնալու:

Ներեցէք, պարսններ, որ ձեզ մենակ եմ թողնում, ևս շուտով կը վերապահնամ:

Հեղինէն մօտնում է իր սեղանին, վայր զնելով հոգանոցը:

## ԱՐՏՍՋԵՍ

Դուք սպասեցէք, աիկին, հանգստացէք, իսէք Աստուծոյ. մի կէս ժամ միջնց տուէք մեղ, մենք ահա զնում ենք ոստիկանատուն: Եթէ մեղ այստեղ ոչինչ չյաջպուի, խօսք եմ տալիս ձեզ, որ ևս անձամբ կ'երթամ պարոն Սամսոնեանի մօտ, կը խօսիմ նրա հետ և ինչպէս էլ լինի՝ կ'առնեմ նրանից ձեր գլխագիլը:

## ՄԱՐԳԱՐԻՑ, սաստիկ շփոթուելով:

Ի՞նչպէս... Դուք, դուք նրա մօտ կ'երթաք... Ո՛չ, ո՛չ, մի անէք այդ բանը, աղաչում եմ...

## ԱՐՏՍՋԵՍ

Իսկ եթէ ուրիշ ելք չինի...

ՄԱՐԳԱՐԻՑ, վայր զնելով հովանոցը...

Դուք, իգուք կը լինի այդ բոլորովին... Դուք դեռ ամենը շպիտէք... Նա դայրացած է իմ դէմ, նա պահանջում է, որ ևս յանձն առնեմ մի յանցանք, որի յիշելն անգամ ինձ ամօթ է պատճառում... Աղաչում եմ ձեզ՝ մի գնաք նրա մօտ... Զարհուրելի շարիք կարող է առաջ գալ այդ տեսակցութիւնից:

## ԱՐՏՍՋԵՍ

Դուք անհանգիստ մի լինիք, ոչինչ վատանդ չի կարող պատճանել: (Լեռնին:) Գնանք, Լեռն: (Մարգարին:) Ես շեմ հանգստանալ, տիկին, մինչև ձեռք շրերեմ ձեր գլխագիլը:

Դուքս է զնում:

ՄԱՐԳԱՐԻՑ, այս ու այն կողմն ընկնելով:

Ո՛՛, Տէ՛ Աստուծ, նա զնաց... Ի՞նչ պէտք է անեմ ես...

## ԼԵԽՈՆ

Մի յուստատուիք, աիկին, ևս նրանից չեմ հեռանալ:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Չտապեցէք, շտապեցէք, աղաչում եմ. արդելեցէք մի կերպով:

## ԼԵԽՈՆ

Դուք անհնդ եղէք, աիկին:

Դուքս է զնում:

## ՏԵՍԻԼ Ը

ՄԱՐԳԱՐԻՏ, ՀԵՂԻՆԵ

## ՄԱՐԳԱՐԻՏ

Եւ այս ամենն ինձ համար... ինձ համար... օ՛,  
ես թշուասս... ել ուր գնամ այժմ. մինչև կը տեսնեմ  
մէկին, նա արդէն իբանը կը կատարէ:  
Վերարկուն հանելով, յուսանատ ընկնում է աջ կող-  
մի աթոռի վրայ եւ յենուելով սեղանին, զլուխը  
ձեռքերի մէջ է առնում:

ՀԵՂԻՆԵ, մի փարք լուսթիւնից յետոյ:

Մի յուսահատուիր, Մարգարիտ, մի փարք համ-  
րեռութիւն ունեցիր. տեսնենք ինչ է լինում:  
ՄԱՐԳԱՐԻՏ, տեղից վեր կենալով:

Ա՛խ, չեղինէ, եթէ դու կարողանայիր թափան-  
ցել արախս խորը, եթէ դու կարողանայիր տեսնել,  
թէ ինչ է կատարվում այսաեղ... Ա՛խ... ես ինձ  
համար չեմ մտածում, չեղինէ, թնդ պատահի, ինչ  
որ պատահելու է... ես պատրաստ եմ ամին նեղու-  
թիւններ, ամեն զրկանքներ կրելու, բայց իմ պատ-  
ճառով ինչի ուրիշները վտանգի ենթարկուին... Մինչ-  
դեռ ես՝ թշուասս, հնար շոնիմ խափանել այդ վր-  
տանզը...

## ՀԵՂԻՆԵ

Ինչեր ես ասում, Մարգարիտ. երեխայ է, ինչ է:  
ՄԱՐԳԱՐԻՏ, բռնելով զլուխը:  
Ես ինքս էլ չեմ հասկանում՝ ինչ եմ ասում. միարս

շփոթվում է, զլուխս պտոյտ է զալիս, ես խելազար-  
վում եմ:

## ՀԵՂԻՆԵ

Հանգստացիր, իսէր Աստուծոյ... Ինչի ես շա-  
փականցութեան հասցնում գործը... 21<sup>o</sup> որ Լեռնը  
խոստացաւ նրանից չհեռանալ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Լաւ, հոգիս, լաւ, զու զնա, զործդ վերջացրու,  
ժամանակ է, չուշանաս:

Հանում է զլուարկը եւ նստում է նոյն տեղը:

## ՀԵՂԻՆԵ

Այն, Մարգարիտ. միայն այս տեւալուկը հասցնեմ  
ուսումնարան... (Վերցնում է տեսրակը:) Ես շուտով  
կը վերադառնամ... (Գուրգուրելով Մարգարիտն:) Մի  
յուսահատուիր, հոգիս, աղաչում եմ քեզ, մի յուսա-  
հատուիր. Աստուած ողորմած է: (Վերցնելով հովա-  
նոցը, մեկուսի:) Խեղճ, խեղճ իմ Մարգարիտ...

Գուրս է զնում նախասենեակից:

## ՄԱՐԳԱՐԻՏ, մենակ:

Աստուած իմ, Աստուած... (Տեղից վեր է թռչում:)  
Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ... Ո՞ւմ դիմեմ...

Յուսանատ ման է զալիս:

## ՏԵՍԻԼ Թ

## ՄԱՐԳԱՐԻՏ, ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ, մտնելով նախասենեակից:  
Տիկին, այն օրուայ մարդն է:

## ՄԱՐԴԱՐԻՏ

Ի՞նչ մարդ:

## ԱՆԱՀԻԾ

Այ, այն հաստ-հաստ մարդը, անցեալ շարաթ՝ որ  
այստեղ էր:

## ՄԱՐԴԱՐԻՏ

Վերջապէս... Խնդիր:

ԱՆԱՀԻԾ, նախասենեակի դռներում:

Համեցէք, պարոն:

Ներս Թողնելով Արէլին՝ ինքը դուրս է գնում:

## ՏԵՍԻԼ Ժ

## ՄԱՐԴԱՐԻՏ, ԱԲԷԼ

## ՄԱՐԴԱՐԻՏ, մեկուսի:

Օ՛, սոսկակի մարդ...

ԱԲԷԼ, Թերթապահը ձեռքին:

Բարի լոյս ձեզ, տիկին:

## ՄԱՐԴԱՐԻՏ, սառը:

Բարի, պարոն: (Հրափրելով նստել) Համեցէք...  
Վերջապէս շնորհ բերիք, պարոն... (Նստելով:) Գլխա-  
զիրու բերիք արդեօք:

ԱԲԷԼ, Թերթապահը բանալով:

Այդ հեշտ է, տիկին, միայն թէ կարողանամ մի  
կերպ համաձայնութիւն կայացնել ձեր մէջ:

## ՄԱՐԴԱՐԻՏ

Ի՞նչ... Միթէ դեռ էլի շէք բերել. ամբողջ շա-  
րաթ է սպասում եմ... Զէ որ դուք ինձ խոստացաք:

## ԱԲԷԼ

Այն, տիկին, բայց ևս մեղաւոր չեմ. զիտէ Աս-  
տուած, որ մեղաւոր չեմ: (Նատելով:) Նորին վսեմու-  
թիւնը, այսինքն ձեր ամուսինը, ահղեկացաւ ուր  
հարին էր... Այն ստորագրութիւնը, որ դուք ինձ  
յանձնեցիք անցեալ անգամ, բաւարար չէ, այսինքն...  
օրինական ամեն ձեւերը չունի... Նրա կոփարէն պէտք  
է այս թղթի տակ սաստագրէք:

Հանում է Թերթապահից Թուղթը, որ արտաքուստ  
նման է նախկին Թղթերին: [Քառածալ մի Թերթ:]

## ՄԱՐԴԱՐԻՏ

Իսկ իմ գլխագիրը, պարոն, իմ գլխագիրը... Ու-  
տիկանութիւնը պահանջում է, հասկանում էք դուք:  
(Յոյց է տալիս սեղանի վրայ դրած ստորկանութեան Թուղ-  
թը:) Ահա...

## ԱԲԷԼ

Այն, տիկին. բայց նորին վսեմութիւնը բացորոշ  
յայտնեց, որ նա ձեզ գլխագիր չի տալ, մինչեւ դուք  
շտորագրէք այս թղթին...

## ՄԱՐԴԱՐԻՏ

Այդ գալշելի թղթին ևս երբէք չեմ ստորագրիլ,  
ևս ձեզ ասացի արդէն:

## ԱԲԷԼ

Ո՛չ, ոչ, տիկին, մի բարկանաք, այս այն չէ...  
Այս թուղթը բոլորովին նոր է զրած: Նորին վսե-  
մութիւնը իր ձեռքով մեղմացրեց գալձուածները...  
Գործի էութիւնը նրանումն է միայն, որ յանցանքը  
դուք ձեզ վրայ պիտի առնէք:

## ՄԱՐԴԱՐԻՏ

Աստուած էլ զիտէ, մարդիկ էլ զիտին, որ ևս

ոչինչ յանցանք շունիմ և շեմ էլ կարող ճանաչել... ինչ որ զբեցի անցեալ անգամ, այն էլ բանի հարկա- զբեցիք ինձ զբելու:

ԱԲԷԼ, շուարուած:

Այս էլ թեթև է զբաժ, տիկին:

Տատանուելով առաջարկում է Թուղթը:

ՄԱՐԳԱՐԻՏ, առնելով Թուղթը և աչքի անցնելով, դունա- թափում է և տեղից վեր Թուղթ:

Երբէք, երբէք... երբէք շեմ ստորագրիլ ես այս թղթին... (Զգում է Թուղթը սեղանի վրայ:) Դարձեալ նայն խայտառակութիւնը, նոյն գարշելի զրաբառաւ- թիւնը... ի՞նչ կայ այստեղ փոփոխած:

ԱԲԷԼ, սոքի կանգնելով:

Բայց, տիկին...

ՄԱՐԳԱՐԻՏ

Եղուր էք աշխատում, պարոն... երբէք, երբէք շեմ տալ ես այդ զզուելի ստորագրութիւնը... չաս- կանում էք դուք... երբէք:

ԱԲԷԼ

Սակայն...

ՄԱՐԳԱՐԻՏ

Այլս ոչ մէկ խօսք, խնդրում եմ... Այդ ահսակ խայտառակութիւն երբէք շեմ ընդունիլ ինձ վրայ, ասացի ձեզ... ի՞նչն է փոխած այստեղ, ի՞նչը... Ան- հաւատարիմ եմ եղել ես իմ ամուսնուն, արատաւ- րել եմ ես նրա անունը, նրա պատիւը. ուրիշ էլ ի՞նչ մնաց... (Զայրացած:) Ո՞հ, Աստուած, Աստուած, ինչի ամօթից գետինը շեմ մանում այս սոպէիս:

ԱԲԷԼ

Մտածեցէք, տիկին, նա ձեր օրինաւոր ամուսինն

է... նա զայրացած է ձեր դէմ, նրա խօսքն ամեն տեղ անցնում է... նա շատ շարիք կարող է հասցնել ձեզ: (Խոստովանաբար:) Եւ ուղիղն առեմ ձեւ, տիկին... նա արդէն գիմել է նահանգական Դատարանին: Հե- տեամբը զուք ինքներդ զիտէք, տիկին... Ո՞վ կարող է օրէնքին ընդդիմանալ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Գիտեմ, զիտեմ, պարոն, և զբա համար էլ օգուտ էք քաղում ձեր իրաւունքներից... Գիտեմ... Այսակ օրէնքները ձեր օգախն են խօսում, ձեզ են պաշտպա- նում: Ի՞նչ կարող եմ անել... Բայց կայ և երկնային Դատաստան, որի առաջ զուք մէկ օր պատասխան էք տալու:

ԱԲԷԼ

Երկնային Դատաստանը վկայ, տիկին, որ այսօր է թէ վաղը՝ ձեզ զատարան կը հրաւիրեն, եթէ չէք ստորագրիլ այս թղթին, և ձեզ կը հարկագրեն ձեր ամուսնու մօտ ապրել... Օ՛, զուք երբէք չէք ազ- տուիլ նրա հալածանքներից:

ՄԱՐԳԱՐԻՏ

Թանէ, ինչ կամենայ... Եթէ ելք չկայ ինձ աղատաւելու, մահը կ'աղատէ ինձ նրանից: ԱԲԷԼ, փոքր լուռթիւնից յետոյ վերցնում է իր բերած Թուղթը:

Տիկին, լսեցէք զուք իմ բարեկամական խորհուր- դը... Կատարեցէք ձեր ամուսնու ուղածը և այն ժամանակ ամեն ինչ կարգին կ'երթայ... Նա կը վիր- ջացնէ զործը հաշտութեամբ... զուք հանգիստ կ'ապ- րէք ձեզ համար..., ձեզ ոչ ոք չի նեղացնիր...

**ՄԱՐԴԱՐԻԾ**, ընդմիջելով:  
Թողէք ինձ, թողէք...

**ԱԲԷԼ**

Իդուր էք բարկանում, տիկին, չէ որ այս մի դատարկ ձևականութիւն է, որով ձեր խիզճը չի արատաւուսիլ երբէք... Ի՞նչ կը պակասի ձեզ, եթէ սոսարագրէք այս թղթին:

**ՄԱՐԴԱՐԻԾ**, սաստիկ զայրացած:

Դուք կամենում էք խելագարութեան հասցնել ինձ... (Յուստիատուած կանչում է:) Անահիտ...

**ՏԵՍԻԼ ԺՈ.**

**ՆՐԱՆՔ, ԱՆԱՀԻՏ**

**ԱՆԱՀԻՏ**. ներս վաղելով:

Ի՞նչ կը կամենաք, տիկին:

**ՄԱՐԴԱՐԻԾ**, բռնելով Անահիտի ձեռքը:

Կաց այստեղ, Անահիտ, ես նուազում եմ... (Ցածր:)  
Այս մարդը...

Թողնելով Անահիտին, աշխատում է իշխել իրան:  
**ԱՆԱՀԻՏ**, Աբէլին:

Ի՞նչ էք ուզում մեզանից, պարոն. հանգիստ թողէք տիկինոչը, իսէք Աստուծոյ:

**ԱԲԷԼ**, Մարգարտին:

Ներողութիւն, տիկին... ես աշխատում էի որ  
գործը խաղաղութեամբ վերջանայ, բայց դուք ինձ  
չհասկացաք... Այժմ ես անպարտ եմ... Մնաք բարով... (Վերցնում է Թերթապահը:) Այն միայն Աստուծուն

է յայտնի, թէ ինչ վիշտ է պատճառում ինձ ձեր  
գլուխինը... իմ այսքան գալ-զնալս իզուր անցաւ...  
(Մեկուսի:) Փառք Քեզ, Աստուած, որ ինձ էս հան-  
գին կիրկ չես առել... (Գնում է, ճանապարհից յետ է;  
նայում Մարգարտի կողմը եւ օժիքը Թափ տալով, առան-  
ձին:) Օ՛հ, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛...

Գլուխը շարժելով, դուրս է գնում նախասենեալից:

**ՏԵՍԻԼ ԺՈ**

**ՄԱՐԴԱՐԻԾ, ԱՆԱՀԻՏ**

**ՄԱՐԴԱՐԻԾ**

Ա՛խ, սիրաս...

**ԱՆԱՀԻՏ**

Հանգստացէք, տիկին... Ա՛խ, ինչքան չարշարում  
են ձեզ այդ մարդիկը:

**ՄԱՐԴԱՐԻԾ**

Պէտք է տանջում այսպէս, քանի որ կինդանի  
եմ: (Որտասուը պահելով:) Գնա, տես, դոները բաց  
շման:

**ԱՆԱՀԻՏ**

Ճշմարիտ, ես կը հրամայիմ գոնապանին, որ այ-  
սուհետեւ բնաւ շընդունի այդ պարոններին:

**ՄԱՐԴԱՐԻԾ**

Ուժով ներս կը թափուեն, Անահիտ, ով է ինձ  
պաշտպանողը:

**ԱՆԱՀԻՏ**

Աստուած ողորմած է, տիկին:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Երանի Աստուած հոգիս առնէ ու պլծնեմ ես այս  
աշխարհից:

Աչքերը սրբում է:

## ԱՆԱՀԻԱ

Խնայեցէք ձեզ, ափկին, մեղք էք:  
Տիտոր դուրս է գնում նախասնեակից:

## ՏԵՍԻԼ ԺԴ

## ՄԱՐԳԱՐԻՏ

Խնայեցէք ձեզ... Ամրող կեանքս վշրած է, այլ  
և ի՞նչ մնաց խնայելու... (Երկար ժամանակ արտա-  
յայտում է վերին աստիճանի յուսահատութիւն:) Կրկին  
նրա մօտ ապրել... Օ՛, աւելի լաւ է ջուրն ընկնեմ,  
քան թէ կրկին նրա ձեռքի տակը լինիմ... (Նայելով  
ժամացոյցին:) Ի՞նչ եղան... (Մօտենում է լուսամուտին  
եւ անշարժ դուրս նայում: Յանկարծ հեռանալով լուսա-  
մուտից:) Ի՞նչ պատահեց արդեօք... Զլինի թէ գնաց  
նրա մօտ... Ա՞հ... (Շտապով ծածկում է զիսարկը եւ  
վերարկուն ու հոգանոցը վերցնում:) Օ՞հ, ի՞նչ թշուառն  
եմ, ի՞նչ թշուառը...

Գնում է դէպի նախասնեակը:

## ՏԵՍԻԼ ԺԴ

## ՄԱՐԳԱՐԻՏ, ԼԵՒՈՆ

Լեւոն, մոնելով նախասնեակից:  
Վերջապէս կարող եմ ձեզ շնորհաւորել, ափկին...

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչ, միթէ...

## ԼԵՒՈՆ

Այս, այն... Բայց ես ձեզ խանգարեցի. կարող եմ  
ուղեկցիլ ձեզ և ճանապարհին պատմել:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Ո՛չ, ոչ, ես դէպի ձեզ էի շապառում... Պատմի-  
ցէք, պատմեցէք...

Վերարկուն ու հոգանոցը վայր է գնում:

## ԼԵՒՈՆ

Ոստիկանապետը սիրով ընդունեց մեր խնդիրը  
և հրամայեց իսկան կարգադրել, որ անհանգիստ  
շանեն ձեզ, մինչև ձեր գործը օրինական ընթացք  
կստանայ... Նա այնքան բարի էք, որ լսասացաւ  
անձամբ միջնորդել նահանգապետի առաջ՝ ձեզ զըլ-  
խազիր տալու:

ՄԱՐԳԱՐԻՏ, սեղմելով լեւոնի ձեռքը:

Ճնորհակալ եմ, բարեկամ... Ճամ, շատ շնորհա-  
կալ եմ... Նստեցէք... Իսկ պարոն Արտաշէսն ի՞նչ  
եղաւ:

Նստում է:

## ԼԵՒՈՆ, ՆՍՏԵԼՈՎ:

Նա իսկան կը զայ, սպասում է այնահեղ հրամա-  
նագրին. Իս վագեցի որ մի քանի բոալ առաջ ուրա-  
խացնեմ ձեզ:

## ՄԱՐԳԱՐԻՏ

Դուք շատ բարի էք, պարոն լեան:

Հանում է զիսարկը:

## ԼԵՒՈՆ

Օ՞հ, ափկին, այս մի չնչին ծառայութիւն է:

## ՏԵՍԻԼ ԺԵ

ՆՐԱՆՔ, ԱՐՑԱՇԵՍ

ԼԵՒՈՆ, տեսնելով Արտաշէսին նախասենեակից մտնելիս:  
Ահա և Արտաշէսը:

ԱՐՑԱՇԵՍ, մի ծրար ձեռքին:

Ահա, ափկին. ոստիկանութեան պահանջներից  
զուք ազատ էք. իսկ գլխազիր կ'ստանաք նահանգա-  
պետից... Լեւոնը պատմած կը լինի:

ՄԱՐԳԱՐԻՏ, վեր կենալով:

Այն. չնորհակալ եմ նրանից էլ, (Ոռնելով Արտաշէ-  
սի ձեռքը:) ձեղանից էլ, պարոն Արտաշէս... նստե-  
ցէք, ինդիմ

Ինքը նստում է:

ԱՐՑԱՇԵՍ, ողջունելով Մարգարտին, դառնում է Լեւոնին:  
Դու կամենում էիր անձամբ յանձնել այս հրամա-  
նագիրը թաղապետին:

ԼԵՒՈՆ, առնելով ծրարը եւ դնելով սեղանի վրայ,  
Ընշուշտ... (Մարգարտին:) Ուղիղն ասած, ափկին,  
եթէ Արտաշէսի աջակցութիւնը չլինէք, ես մենակ  
ոչինչ չէի կարող անել:

ԱՐՑԱՇԵՍ

ԼԵՒՈՆ...

ՄԱՐԳԱՐԻՏ

Կրկին չնորհակալ եմ, բարեկամներս... Այդ հրա-  
մանագիրն էլ միծ ողորմութիւն է... Փառք Աստո-  
ծոյ, այժմ զոնէ մի փոքր ժամանակ հանդիստ կը

թողնեն ինձ, թէս այն բռնակալը, ասում են, դիմել  
է արդին նահանգական Դատարանին, (Դառն ժպիտով:)  
որ քաշ տալով տամեն ինձ նրա գուռը:  
ԼԵՒՈՆ

Օ՛, ափկին...

ԱՐՑԱՇԵՍ, որ մնում է ոտքի վրայ:

Զարմանալի ոչինչ չկայ, Լեւոն օրէնքը տալիս է  
նրան այդ իրաւոնքը... (Մարգարտին:) Այնուամենայնիւ  
դուք հանգիստ եղէք, ափկին, մենք ինքներս ճանա-  
պարհ կը գանենք զործելու...

ՄԱՐԳԱՐԻՏ

Ի՞նչքան վիշտ ու շարշարանք եմ պատճառում ես  
իմ բարեկամներիս:

ԱՐՑԱՇԵՍ

ԱՌԱ, ԲՇՆ Էք հրամայում...

ԼԵՒՈՆ

ՄԻՌԵ պարտաւոր չենք...

## ՏԵՍԻԼ ԺԶ

ՆՐԱՆՔ, ՀԵՊԻՆՔ

ՀԵՊԻՆՔ, նախասենեակի դռներից:

Ի՞նչ արիք, պարոններ, ինչ շինեցիք: (Հովանոցն ու  
վերարկուն տալիս է Անահիտին, որ հնտեւում էր նրան:)  
Կարողացաք մի ճար անել արդեօք:

ԼԵՒՈՆ, վեր կենալով:

Ուրախացիք, հրեշտակս, ուրախացիք. ահա Ռատի-  
կանապետի հրամանը, իսկոյն տամելու եմ թաղա-  
պետի մօտ: Տիկնոջը հանգիստ կը թողնեն:

## ՀԵՂԻՆԵՐ

ի՞նչպէս, միթէ... 0՞հ, այ ուրախութիւն... (Մարգարտին:) զնորհաւորում եմ, հոգիս... (Վ.բայ ընկնելով, համրուրում է նրան:) Սրտանց շնորհաւորում եմ...  
ՄԱՐԴԱՐԻՑ, համրուրելով Հեղինէին:

ԶՆՈՐՀԱԿԱԼ եմ, ՀԵՂԻՆԷՐ...

## ՀԵՂԻՆԵՐ

Չասացի՞ քեզ, որ Աստուած ողորմած է... Ահա  
Վերջապէս...

ՎԵՐԳՈՒՇ է զլսարկը:  
ՄԱՐԴԱՐԻՑ

Այս...

## ՀԵՂԻՆԵՐ

Իսկ զլսապի՞րը... 2է որ նորին վսեմութիւնը չէ  
համաձայնում:  
Գլխարկը տալիս է Անահիտին, որ վերցնելով եւ Մարգարտի վերարկուն, հովանոցն ու զլսարկը, բոլորը  
միասին դուրս է տանում ձախ գռնից:

## ԱՐԺԱՋԵՍ

Այդ մասին դուք երկիւղ մի կրէք, քոյրիկս, զրլիսկիրն էլ կը լինի:

## ԼԵՒՈՆ

0՝, այժմ մենք ապահով ենք... (Ծրարը ցոյց տալով,) Քանի որ այս կայ, զլսապիր պահանջող չի էլ լինիլ  
այսաեղ:

## ՀԵՂԻՆԵՐ

Տար, Լևոն, ատար այդ ծրարը, թնդ այսուհետեւ  
էլ ոստիկանի երես շտեսնենք մենք այսաեղ:

## ԼԵՒՈՆ

Միամիտ եղիր, էլ ոչ ոք չի նեղացնիլ մեզ:

## ՀԵՂԻՆԵՐ

Փանք Աստուծոյ, վերջապէս հանգստացանք: Այժմ  
ես զնամ և ճաշի պատրաստութիւն տեսնեմ:  
ԼԵՒՈՆ

Ինձ էլ կը թողնես, հոգիս, որ օգնեմ քեզ, այն-  
պէս չէ:

## ՀԵՂԻՆԵՐ

Կարող ես: (Ճպտալով:) 2է որ մեր նշանաբանն է՝  
միասին աշխատել:

Մարգարիտը հնարինութէ տիրում է:  
ԼԵՒՈՆ

Անշուշտ... (Արտաշէսին, որ այս միջոցին կանգնած  
է նկարի առաջ:) Դու այսօր մեր հիւրն ես իհարկէ:  
ՀԵՂԻՆԵՐ

Իհարկէ... Յոյս ունիմ որ մեր եղբայրը կը համա-  
ձայնի մասնակից լինել ընդհանուրիս ուրախութեանը:  
ԱՐԺԱՋԵՍ

Միծ յօժարութեամբ, բայց մի կէս ժամից յետոյ  
պարտական եմ զնալու... Կարևոր գործ կայ և խոս-  
տացել եմ:

## ՀԵՂԻՆԵՐ

Պնաս չունի, մենք ձեզ կը սպասենք թէկուղ մին-  
չե երեկոյ: (Արտաշէսը զլուի է տալիս նրան: Դիմելով  
Մարգարտին:) Իսկ զու, հոգիս, ինչի՞ այդպէս տիսրե-  
ցիր... Բաւական է, լինգրեմ, մի փոքր էլ ուրախա-  
նանք... Դեռ անս թէ ինչ օրեր ենք անցկացնելու  
գիւղում... (Արտաշէսին:) Գիտէք, եղբայր Արտաշէս,  
Լևոն այնքան բարի է, որ կամենում է յատկապէս  
ինձ համար ուսումնարան հիմնել մեր զիւղում:

## ԱՐՏԱՃԵՍ

Հրաշալի՛ գաղափար, հրաշալի՛ ասպարէղ գործունէութեան...

ԼԵԽՈՆ, Արտաշէսին:

Այդ մասին զեռ ևս շատ բան ունինք կարգադրելու...

ՀԵՂԻՆԵ, շարունակելով:

Կարող էք երեակայել, պարոն Արտաշէս, թէ որքան ուրախ եմ ես, ինչքան երջանիկ, որ ապրելով սիրած մարդու հետ՝ միևնույն ժամանակ պարագ չեմ մնալու և որ ես ևս մասնակից եմ լինելու ժողովրդի յառաջադիմութեան գործին:

## ԱՐՏԱՃԵՍ

Ես լիովին ըմբռնում եմ, բոյրիկս, ձեր զգացմունքը:  
Հեղինէն զլուխ է տալիս:

ԼԵԽՈՆ

Գիտէք ինչ, պարոններ... Եկէք՝ ուղղակի քշենք դնանք մեք գիւղը, հէնց իսկոյն: Համաձայն էք:

ՀԵՂԻՆԵ

Հիանալի՛ է:

ԼԵԽՈՆ, Մարգարտին:

Իդէպ, ամկին, ձեզ վրայ մի փոքրիկ պարտք էլ կայ. յիշում էք... Կը ճաշենք այնտեղ, կ'ուրախանանք և երեկոյեան գարձեալ կը վերագանանք միասին:

ՄԱՐԳԱՐԻՏ

Ես համաձայն եմ:

ՀԵՂԻՆԵ, հրմուած:

Հրաշալի՛ է, հրաշալի:

## ԼԵԽՈՆ, Արտաշէսին:

Իսկ զու ի՞նչ կ'ասես... Կարող ես զործդ վերջացնել և հասնել մեզ ուղղակի կայարան:

## ԱՐՏԱՃԵՍ

Կ'աշխատեմ:

ՀԵՂԻՆԵ

Աշխատեցէք, եղբայրս, ձեզ հիասին մենք աւելի ուրախ կը լինենք...

## ԱՐՏԱՃԵՍ

Ես ամենայն միջոց գործ կը դնեմ, որ շղրկեմ ինձ ձեր ընկերակցութիւնից:

ԼԵԽՈՆ, վերցնում է ծրարը:

Իսկոյն կը վերագանամ: (Կանանց:) Դուք էլ, տիկնայր, պատրամսա եղէք: (Արտաշէսին:) Տես, մենք կը սպասենք քեզ. շուտով արի, խնդրեմ... Քէփը թէֆ է...

ՀԵՂԻՆԵ

Այ թէ կ'ուրախանանք...

ԼԵԽՈՆ, Հեղինէին, որ նրան ճանապարհ է զցում:  
Հոգեակս... (Համբուրում է ձեռքը:) Ես իսկոյն կը զամ...

Գուրս է զնում:

ՀԵՂԻՆԵ

Իսկ ես կ'երթամ, կը պատրաստեմ ամեն բան և յիսոյ՝ բարի ճանապարհ. (Դիմելով Արտաշէսին:) Բայց անպատճառ ձեզ հետ միասին, պարոն Արտաշէս: (Գրեկելով Մարգարտին:) Ի՞նչքան ուրախ եմ, ի՞նչքան երջանիկ ես, իմ անդին Մարգարիտս...

Գուրս է վազում ձախ կողմից:

## ՏԵՍԻԼ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՑ, ԱՐՏԱՇԵՍ

ԱՐՏԱՋԵՍ, կարճ լոռւթիւնից յետոյ, նստելով,  
ԵՐՅԱՆԻՇԿ դոյգ:

ՄԱՐԳԱՐԻՑ

Այս, ես հաւատում եմ, որ ՀԵՂԻՆՔ երբէք զղջա-  
լու տեղիք չի ունենալ:

ԱՐՏԱՋԵՍ

ԱՆԿԱՍԼԱԾ... ԼԵԽՆԸ թեթևամիտ երիտասարդ չէ:  
ՄԱՐԳԱՐԻՑ

Այս, ճանաշում եմ: (Փոքր լոռւթիւնից յետոյ յովոց  
հանելով) Եթէ ամենայն ամուսնութիւն այդպէս կա-  
տարուէր, գուցէ այն ժամանակ ինձ նման թշուառ  
կանայք սակաւ լինէին... (Աչքերը սրբում է:) Ներե-  
ցէք, պարսն Արտաշէս, ներեցէք իմ արտասուքները:  
Ի՞նչ արտած բաղդս այնպէս բերեց, որ ես այս օրին  
հասայ... իրաւունքներից զնորդ, անունից զնորդ, ա-  
ղատութիւնից զնորդ...

ԱՐՏԱՋԵՍ

ՀԱՆՊԱՏԱՋԷՔ, տիկին, աղաչում եմ ձեզ, հանգըս-  
տացէք. ձեր դրութիւնն անհկարազելի ցաւ է պատ-  
ճառում ինձ, ձեր արտասուքներն այլում են սիրաս:

ՄԱՐԳԱՐԻՑ

Դիտեմ, պարսն Արտաշէս, դիտեմ՝ թէ նըշափ  
կարեկից էք ինձ:

ԱՐՏԱՋԵՍ, վեր կենալով.

Կարեկից եմ, և միմիայն կարեկից... Ո՛չ, տիկին,

նշ, աւելի խորին զգացմոնք է ալէկոծում իմ սիրաը:  
Հաւատայէք, տիկին, ես պատրաստ եմ յանձն առ-  
նել ամեն տեսակ զոհարերութիւն, ամեն տեսակ  
տանջանք, միայն թէ կարողանամ թեթեացնել ձեր  
դրութիւնը, բարեփոխել ձեր վիճակը:

ՄԱՐԳԱՐԻՑ

Բարեկամս... (Մեկնելով ձեռքը:) Իմ անգին, իմ  
հաւատարիմ բարեկամս...

ԱՐՏԱՋԵՍ, բռնելով ձեռքը:

Այս, Մարգարիտ, իմ մանկութեան Մարգա-  
րիտս...

Սիրով վառուած՝ ստէու-ստէու համբուրում է ձեռքը:

ՄԱՐԳԱՐԻՑ, մեղմութեամբ աղատելով ձեռքը:

Արտաշէս...

ԱՐՏԱՋԵՍ, շարունակելով, կրկին բռնում է ձեռքը:

Այսուհետեւ միայն մանը կարող է բաժանել ինձ  
քեզանից:

ՄԱՐԳԱՐԻՑ, քաղցրութեամբ:

Բարեկամս... Արտաշէս... Խնդրում եմ...

ԱՐՏԱՋԵՍ, բորբոքուած եւ սկզբում Մարգարիտ ձեռքը  
բռնած:

Լսիր, լսիր, Մարգարիտ, աղաչում եմ քեզ, լսիր  
ինձ... Թոնյլ տուր պապանձուած լեզուս բանալ, թոնյլ  
տուր ասել քեզ այն, ինչ որ այսքան տարի չեմ հա-  
մարձակուել արտասանելու... Թոնյլ տուր ինձ ասել,  
որ ես սիրում եմ քեզ, սիրում եմ այն օրերից, երբ  
դեռ երեխայ միասին խաղում էինք, միասին զուար-  
ձանում... Ո՞հ, Մարգարիտ, իմ անգին Մարգարիտ,  
ես քեզ սիրում եմ հոգոյս բոլոր զօրութիւնով, սի-

բում եմ այնքան, որքան բնութիւնը մարդուս ոյժ է է տուել սիրելու... Ասուուած քեզ ինձ համար էր ստեղծել, մարդիկ խլեցին ինձանից...

**ՄԱՐԳԱՐԻՏ,** սթափուելով:

Արտաշէս, Արտաշէս, զու ինձ տարար բոլորովին մի ուրիշ աշխարհ... Կարծես թէ այս ամենը ցնողը է, լուսազարդ մի ցնողը... Այն, զու ինձ սիրում ես... Վազուց է որ զգում եմ ես այդ սէրը, վազուց է որ հասկանում եմ ես զբան... Հաւատած ինձ, Արտաշէս, որ նոյն անսահման սիրով ես ես քեզ եմ սիրում և ամբողջ աշխարհում ես ամենաերջանիկ կինը կը լինի, եթէ կարողանայի քեզ պատկանել յաւիտեան...

**ԱՐՑԱՋԵՍ,** հրճուած:

Մարդարիտոս... Ուրեմն բոլորը կորած չեն ինձ համար. ուրեմն զեռ ես երջանկութեան յոյս կայ ինձ համար...

**ՄԱՐԳԱՐԻՏ,** մեկուսի:

Ո՞հ, որքան ապարազդ եմ ես... (Անցնելով մի քայլ:) որքան ապարազդ...

**ԱՐՑԱՋԵՍ,** մօտենալով:

Մարդարիտոս...

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Ա՞խ, Արտաշէս, խորին անդունդը բաժանում է մեղ միմևանցից... Մեր մէջ կանգնած է մի զարաւոր պարիսպ, որը քանդելու համար զուցէ մեր ամբողջ կեանքը բաւական չլինի:

**ԱՐՑԱՋԵՍ**

Ոչինչ, ոչինչ արգելք մեղ չի կարող բաժանել այսուհետեւ. մենք սիրում ենք միմեանց:

### ՄԱՐԳԱՐԻՏ

Դեռ երեխայ՝ ես քեզ սիրում էի, չհասկանալով այդ սէրը... Ծնողներս այնպէս արին, որ ես մի անարժանիներ կին գարձայ... Ղատ աշխատեցի, շատ աղատերազմեցի ինքս ինձ տանջանքներ կրեցի, շատ պատերազմեցի ինքս ինձ հետ, որ սիրեմ նրան, բայց չկարողացայ... Նա իր վարմունքով սիրսս յաւիտեան կտրեց իրանից... Ես համբերեցի, որքան հնարաւոր էր համբերել... Այժմ մենք բաժանուած ենք, ես նրանից աղատուել եմ, նա իրաւոնք չունի արգելք զնել իմ երջանկութեանը, որովհետեւ ինքն ապառում է; ինչպէս կամենում է... Բայց հասարակութիւնը իր պահանջներն ունի, է... Բայց հասարակութիւնը իր պահանջներն ունի, որի առաջ ես պարտաւոր եմ խոնարհուիլ... Ես երջանիկ կը լինէի միայն ըստ անունը կրելով, Արտաշէս, միայն արժանաւոր ամուսինդ լինելով...

### ԱՐՑԱՋԵՍ

Երկնային հրեշտակս, ես հասկանում քո զգացմոնքը, քո արդարացի պահանջը... Այդ մասին ես հէնց այսօրուանից կ'աշխատեմ, զու միամբ եղիր. Ես մի բոպէ անգամ չեմ հանգստանալ, մինչև աղատութիւնդ ձեռք ըբերեմ... Բայց մինչև այդ երջանիկ օրը, մինչև որ մեր ամուսնութեան իրաւոնքն ստանանք, մինչև որ կարողանանք մեր միութեան ծէսը կատարել մարդկանց առաջ, միթէ մենք արգէն ամուսիններ չենք Աստուծոյ առաջ... Մենք սիրում ենք միմեանց, մեր երջանկութիւնը միայն քեզանից է կախուած, իմ անման Մարդարիտ... Տնր ինձ այդ երջանկութիւնը, աղաչում եմ քեզ, Մարդարիտ. մենք

յաւիտեան երջանիկ կը լինիք... Դու զիտես, որ յաւիտեան կը սիրեմ քեզ, և այս սէրը միայն մահը կարող է դադարեցնել... (Լոռմիւն:) Մարզարետու...

## ՄԱՐԳԱՐԻՑ

Հաւատացիր, Արտաշէս, ես ես պակաս չեմ սիրում քեզ, որովհետեւ երբ կամենաս, երբ հարկաւոր լինի, կեանքս կը զոհեմ քեզ, քեզ համար, քն երջանիկութեան համար... Բայց որ քեզ պատկանեմ և միհնոյն ժամանակ ուրիշի ամուսինը համարուիմ, այդ ես չեմ կարող. մեր բալոր երջանկութիւնը թունառուած կը լինի...

## ԱՐՑԱՋԵՍ

Այդ մասին անհնդ եղիր, իմ թանկազին Մարզարիտ. մենք կը գիմենք չոգեսոր Ատենին և ամենը կը կարգադրուի, ինչպէս պէտքն է:

## ՄԱՐԳԱՐԻՑ

Ա'ս, Արտաշէս, չը որ այնտեղ էլ հարկաւոր կը լինի ապացուցանել, որ նա յանցաւոր է... Ի՞նչպէս կ'ապացուցանենք... Եւ ի՞նչ հարկաւոր են մեզ այդ ապացուցները... Ազատութիւնը ես որոնում եմ ո կը ունք ով... Երեակայիր, թէ նըրան անրադդ կանայք կան, որոնք ինձ նման իրանց ամբողջ կեանքը անց են կացնում ցաւով և արտասորով, որոնք անկարող լինելով տանել իրանց տառապանքները, անձնատուր են լինում կեանքի հոսանքին, կորցնում են իրանց անունը, իրանց պատիւը և նախատինք են կըում այն հասարակութիւնից, որը միակ պատասխանատու է նրանց վարք ու բարքի համար... Է՛լ բաւական է. պէտք է վերջ ունենայ այս ամենը...

Քո սիրուց դրդուած, իմս Արտաշէս, ինձ նման թլշուառ կանանց սիրուց և կարեկցութիւնից դրդուած, ես հէնց այսօրուանից, բազմաթիւ տրաունչներն ու խոշնղուաներն արհամարհելով, բարձրացնում եմ իմ ձախը իմ անձիս և ինձ նման տառապեալների պաշտպանութեան համար... Թաղ մեր տառապանքները ապացոյց լինին մեր զատի ճշմարտութեան... Դու ինձ սիրում ես, Արտաշէս, զու պիտի օդնես ինձ, որ կարողանամ ձեռք բերել մեր անկախութիւնը... Աղատութիւն, աղատութիւն նախ և առաջ և այնուհետեւ ես յաւիտեան քոնը կը լինիմ...

## ԱՐՑԱՋԵՍ

Ո՛բրան վեհ ես դու այս վայրկեանիս, նըրան պաշտելի...

## ՄԱՐԳԱՐԻՑ

Երկուսս էլ թշուառ ենք, Արտաշէս... Երկուսս էլ պիտի տանջուինք...

## ԱՐՑԱՋԵՍ

Ես ամեն բան կը տանեմ, միայն թէ դու երջանիկ լինիս...

ԱնԱՀԵՑ, բերում է Կահանպական Դատարանի երկու կոչուալիր, որոնցից մէկին կցած են եւ ուրիշ Թղթեր: Նահանդական Դատարանիցն է, տիկին:

Տայիս է Մարգարտին:

ՄԱՐԳԱՐԻՑ, ազքի անցնելով կոչնագրերը:

Ահա այս էք սպասնալիքը... (Կոչնագրերը ձգում է ձախ կողմի սեղանի վրայ:) Ինձ դատարան են կանչում... (Արտաշէսը վերցնում է կցած Թղթերով կոչնագրեր եւ ազքի անցնում:) Ի՞նձ կամենում են իմ ամուսնու

ոսների տակ ձգել... (Վերցնում է զրիզը:) Նորին վսեմութիւնը դրծեց և այս ստորութիւնը...

Ստորագրում է միւս կոչնագիրը:

### ԱՐՏԱՀԵՍ, զառնութեամբ:

Այն, նորին վսեմութիւնը դիմել է նահանգական Գատարանին, որ ստիպմամբ ենթարկեն ձեղ նրա իշխանութեանը...

ՄԱՐԴԱՐԻՑ, ստորագրած կոչնագիրը տալով Անահտին, որ իսկոյն գուրս է տանում:

Նա աւելի շուտ իմ դիակը կը տեսնի իր իշխանութեան ներքոյ, քան թէ ինձ կենդանի...

### ԱՐՏԱՀԵՍ

Հանգստացիր, հոգիս, չէ որ այդ ամենը դատարկ ձեականութիւններ են, չէ որ դու, երբ բռնի կերպով ամուսնուդ տունը տանին քեզ, իսկոյն կարող ես ձգել—հեռանալ այնտեղից:

### ՄԱՐԴԱՐԻՑ

Ես այդ դիտեմ... Գիտեմ, որ տասն անգամ էլ կարող են տանել ինձ ամուսնուս տունը և ամեն անգամ ես կարող եմ նորից հեռանալ այնտեղից, առանց նրա երեսն անգամ տեսնելու... Բայց ինչո՞ւ պէտք է այդպէս անեն, քանի որ ես չեմ կարող կամ չեմ կամենում ապրել նրա մօտ... Սահեն թէ նա չի էլ պահանջում իմ վիրապարձը, ենթադրենք, որ իրաւունք էլ չունի պահանջելու, չէ որ ես, այնուամենայնիւ, եմ և մնում եմ մի մարդ առանց իրաւունքների, մի ստրկուհի, որ կախուած է ուրիշի կամայականութիւնից... Ո՛չ և ո՛չ... Ես ուզում եմ աղատ լինել, աղատ և անկաշ, տէկ և զեկավարող իմ ահձիս...

ԱՐՏԱՀԵՍ, կոչնագիրը դնում է աջ կողմի սեղանի վրայ և մօտենում է Մարգարախն:

Մարգարիտ, մինչև օրս քո սիրով եմ ապրել, մինչ օրս գու ես եղել միշտ ինձ առաջնորդող փայլուն ասպրը... Այժմ երգվում եմ քեզ մեր սուրբ սիրով, երգվում եմ քո արևով, Մարգարիտ, որ կեանքիս միակ նպատակն այսուհետեւ քո աղատութիւնը պիտի լինի...

### ՄԱՐԴԱՐԻՑ

Այն, բարեկամս, մեր երջանկութեան միակ ճանապարհը դա է...

### ԱՐՏԱՀԵՍ

Օ՛, հաւատացած եղիր, հոգիս, ես ամենայն միջոց գործ կը գնիմ... Մնաս բարեաւ, ես գնում եմ... (Համբուրում է ձեռքը:) Ես գնում եմ, պահապան հրեշտակս, և, կը կնում եմ, մի բռպէ էլ չեմ հանգստանալ, մինչև որ քո աղատութիւնդ ձեռք չըերեմ... Մինեոյն ժամանակ մինչև հոգոյս խորքը տոգորուած լինելով քո զգացմունքներով ու զաղափարներով, խոստումն եմ անում քեզ, որ հինց այս վայրկեանից բոլոր ուժով պիտի ջանամ, զրեմ, խօսեմ, քարոզեմ ամենայն ժամ և ամենայն տեղ, մինչև որ քո ձգտումներդ, քո ցմնկութիւններդ կատարած տեսնեմ—մինչև որ քեզ նման տառապեալները աղատ ապրելու իրաւունք ստանան... Իսկ երբ կ'արժանանամ ամուսինդ լինելու, այն օրից, Մարգարիտս, մենք երկուսս միասին կ'աշխատենք ընդհանուրի բարօրութեան և երջանկութեան համար... Թանգ ուրեմն քո սէրը հիմք ու աղացոյց լինի այն սիրոյն, որ մենք պիտի տաձենք դէպի մեզ նմանները...

ՄԱՐԴԱՐԻԾ, յուզուած՝ մեկնում է ձեռքը:  
Պաշտելիդ իմ Արտաշէս...

ԱՐՑԱՋԷՄ, համբուրելով ձեռքը:

Դու իմ աստուածուհին ես, Մարգարիտ... Թոյլ  
տուր մի անգամ համբուրեմ անարատ ճակատպ, որ-  
պէս նշան միութեան, և թնդ այդ համբոյրը առաջինն  
ու վերջինը լինի մինչե մեր պատկապութեան օրը...  
(Մարգարիտը մօտեցնում է զուկոր, Արտաշէսը համբուրում  
է ճակատը:) Մեսս բարեաւ... (Գնում, վերցնում է կոչ-  
նանազիրը:) Այժմ՝ դէպի աղատութիւն...

Շտափով դուրս է զնում դիմացի դռնից:

ՄԱՐԴԱՐԻԾ, մենակ:

{ Այս, դէպի աղատութիւն... Աղատութիւն, աղա-  
տութիւն... և միմիայն աղատութիւն...  
Մնում է անշարժ:

Վ Ե Բ Զ



### ԺԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Բաց թողած տեսիլները, որոնք կատարուած են առաջին  
ներկայացման ժամանակ և հրատարակուած են նախըն-  
թաց տպագրութիւններում, հետեւայներն են:

[ Երես 17, ոռու 11 քէրեկց:]

### ԱՐԿԱԴԻ

Տիկին, տիկին... Աղաչում եմ, լսեցէք... (Առան-  
ձին, մինչդեռ Վարդուհին դուրս է զնում ասի կողմից.)  
Այս կինը խելագարութեան կը հասցնէ ինձ:  
Շտափով դուրս է զնում Վարդուհու յետեկց:

### ՏԵՍԻԼ Զ

Օրիորդներ՝ ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, գալիս  
են աշ կողմից:  
ԳԱՅԻԱՆԵ, ծիծաղելով:  
Ի՞նչպէս քաշ ընկաւ յետեկց:  
ԼՈՒՍԻԿ  
Տղամարդիկ ամենքն էլ այդպէս են:  
ԱՍՏՂԻԿ

Արի ու մարդ ուղիր:  
ԳԱՅԻԱՆԵ  
Խեղճ Մարգարիտ, յետոյ ինչ աղջիկ է:

## ԼՈՒՍԻԿ

Որ իմանայ, սաստիկ կը վշանայ:  
ԳԱՅԻԱՆԵ

Ոչինչ շասես, Լուսիկ, մեղք է:  
ԼՈՒՍԻԿ

Ո՛չ, ոչ, Գարօ ջան, հօ չեմ դժուել:  
ԱՍՏՂԻԿ

Ես անպատճառ կ'ասեմ. ինչու ծածկենիք... Օ՛,  
ևս տղամարդկանց վրայ շատ եմ բարկացած... Այս-  
տեղ՝ Աստուած, Երկինք, քեզ շատ եմ սիրում, իմ  
շունչս ու կենդանութիւնը գու ես, իսկ այնտեղ՝ մի  
ուրիշի յետեկց վլխապատառ վազում են... Ո՛հ, մէկ  
թնդ սպասեն:

## ԼՈՒՍԻԿ

Բոլորի վլէժը դու հօ չես կարող հանել:  
ԱՍՏՂԻԿ

Գոհ կը լինիմ, եթէ մէկից գոնէ վլէժս հանեմ:  
ԳԱՅԻԱՆԵ

Գրանից բան չի գուրս գալ, Աստղիկ, իդուր պէտք  
է լսեղն կնկայ սիրաը կոտրես:  
ԱՍՏՂԻԿ

Օ՛, անպիտաններ... Իմ օրումը ես մարդ չեմ ու-  
ղելու:

## ԼՈՒՍԻԿ

Ելի լաւ է մարդու գնալ, քան թէ անմարդ պա-  
ռաւել:

Այս միջոցին երեք զրումող երիտասարդներ խորքում  
կանգնում, խօսում են:

## ԳԱՅԻԱՆԵ

Ցետոյ ինչու չես գնում:

## ԼՈՒՍԻԿ

Մ'ս, Գարօ ջան, ես ուզում եմ մարդու գնալ,  
բայց ինձ ոչ ոք չէ ուզում:

## ԳԱՅԻԱՆԵ

Ինչու, ինչդ է պակաս:

ԼՈՒՍԻԿ, հեղնօրէն:

Փոշու...

Բոլորիքան բարձրաձայն ծիծադրում են: Երիտա-  
սարդները խօսելով դնում, անհետանում են:

## ՏԵՍԻԼ Է

## ՆՐԱՆՔ, ՀԵՊԻՆԵ

ՀԵՊԻՆԵ, զալով աջ կողմից:

Զեր ծիծադի ձայնից իմացայ, սր դուք էք:  
ԳԱՅԻԱՆԵ, զարմացած:

Աշու...

ԼՈՒՍԻԿ, նոյնպէս եւ միեւնոյն ժամանակ:  
Վաշ...

ԱՄՏՂԻԿ, նոյնպէս:  
Հեղինէ... (Ճարունակելով) Այդ գու ես, հոգիս:  
ՀԵՊԻՆԵ

Այն, ես ինքս, անգին իմ Աստղիկ... (Ամոնքին  
ծեռք տալով) Բարե, բարե ձեզ...

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՍԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին:  
Բարե, բարե...

ԳԱՅԻԱՆԵ, շարունակելով:  
Ջատ ուրախացայ, Հեղինէ ջան...

ԱՄՈՒՄԻՆՆԵՐ

ԼՈՒՄԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին:

ՄԻՆՔ ես:

ՀԵՂԻՆԵ

Նոյնպէս և ես, իմ թանկագին բարեկամուհիք...  
Ի՞նչպէս էք, ի՞նչպէս է ձեր առողջութիւնը:

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՄԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին:

Լաւ, լաւ. իսկ դու ինչպէս ես:

ՀԵՂԻՆԵ

Ինչպէս տեսնում էք, վառք Աստուծոյ:

ԼՈՒՄԻԿ

Այս ե՞րբ ես եկել, այսպէս յանկարծ մքանկից  
բուսար:

ՀԵՂԻՆԵ

Այսօր առաւառուայ զնացքով եկայ: Այցելութիւն-  
ների զլուխ չունիմ, ներեցէք, թաղ ոչ ոք շապասի:  
Մատածեցի՝ այս զիշեր ամենիքիդ միասին այստեղ կը  
տեսնեմ:

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՄԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին:

ՄԻՆՔ կը գանք քեզ մօտ...

ԱՍՏՂԻԿ, շարունակելով:

Քո այցելութիւնները դու քեզ համար պահիք:

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՄԻԿ, միասին:

Այս, այն...

Գարծեալ երաժշտութիւն, որ ցած ձայնով շարու-  
նակ լավում է մինչեւ այս տեսիլի վերջը:

ՀԵՂԻՆԵ

Զատ շնորհակալ եմ... չանգիստ եղէք, ձեզ մօտ  
դալու ժամանակ ես կը գտնեմ:

ԳԱՅԻԱՆԵ

Ուրեմն երկար ես մնալու այստեղ:

ՀԵՂԻՆԵ

Այն, այն, Գարօ չան, իմ հացն այժմ պիտի այս-  
տեղ ճարիմ:

ԳԱՅԻԱՆԵ, ԼՈՒՄԻԿ, ԱՍՏՂԻԿ, միասին:

Օ՛, այ ուրախութիւն:

ԳԱՅԻԱՆԵ

Այստեղ մենք քեզ համար լաւ պաշտօն կը գըտ-  
նենք, չեղինէ ջան:

ՀԵՂԻՆԵ

Անշափի շնորհակալ եմ... Մի վախենաք, քաղցած-  
շիմ մեռնիլ:

ԳԱՅԻԱՆԵ

Իհարկէ... Բայց մէկ ասա, տեսնենք, գնալի ինչ  
էք, զալի ինչ. ինչ պատահեց:

ՀԵՂԻՆԵ

Օ՛, պատմսւթիւնս երկար է. կ'ասեմ, կ'ասեմ,  
մէկ որ կ'ասեմ: Միայն ասացէք ինձ՝ Մարգարտին  
հօ չէք տեսել, այստեղ է, որ կողմը որոնեմ նրան:

ԳԱՅԻԱՆԵ

Արի, արի, չեղինէ ջան, հինց այս բոպէիս քեզ  
ցոյց տամ. ես զիտեմ, նա որտեղ է նստած:

ԼՈՒՄԻԿ

Ո՛րշափի կ'ուրախանայ, քեզ որ տեսնի:

ԱՍՏՂԻԿ

Ել ինչ ասել կ'ուզի:

ՀԵՂԻՆԵ

Այն, մենք իրար շատ ենք սիրում:

ԳԱՅԻԱՆԵ, չեղինէի թեւն առնելով:

Անդին մեր չեղինէ:

## ՀԵՂԻՆԵ

Սնդին քոյրերս...  
Ամենըն էլ ուրախ-ուրախ եւ թեւ թեւի տուած զուր  
են զնում աշ կողմից: Երածշառւթիւնը զադա-  
րում է:

## ՏԵՍԻԼ Ը

Օրիորդներ՝ ԱՆՈՒԾ, ՆՈՒԽՈՒԾ, ՀՈՒՖՈՅ, զալիս  
են ուսոնդից:

## ԱՆՈՒԾ

Օ՞հ, յոդիցայ:  
Նստում է եւ հովնարում:  
ՆՈՒԽՈՒԾ

Իմ օրումն այսքան չեմ պարել:  
ՀՈՒՖՈՅ  
Ես էլ... Ի՞նչ հիանալի է պարում:  
ՆՈՒԽՈՒԾ

Եւ որչափ գեղեցիկ է:  
ԱՆՈՒԾ, մօտենարփ:  
Ո՞վ է գեղեցիկ. ում մասին էք խօսում:  
ՆՈՒԽՈՒԾ

Պարսն լիսնի, որ մեզ հետ պարում էք այժմ:  
ԱՆՈՒԾ

Այն, նա բաւականին գեղեցիկ է, միևնույն ժա-  
մանակ լաւ երիտասարդ և շատ էլ գործունեայ:  
ՆՈՒԽՈՒԾ

Դու նրան ճանաչում ես, Անուշ:

## ԱՆՈՒԾ

Ի՞նչով չէ, նունուշ ջան, նա մեղ ազգական է:  
Միհիսները, միասին:

Միթէ:

## ԱՆՈՒԾ

Այն:

## ՀՈՒՖՈՅ

Ինչով է պարտպում նա:

## ԱՆՈՒԾ

Գիւղանտես է:

## ՀՈՒՖՈՅ

Ի՞նչ ես ասում... Ո՞վ կը կարծէր:

## ԱՆՈՒԾ

Այն, այն, Հուփիսօ ջան, դու պէտք է տեսնես  
նրան աշխատելիս, որ հիացած մնաս: Այստեղ, մէկ  
մօտիկ գիւղում... ախ, անունը մոռացայ... հողեր  
ունի վարձած: Ի՞նչ վար ու ցանք, արտեր, այդիներ.  
գիւղացիք բոլորն էլ նրա արկովն են երգվում: Միշտ  
նրանց մօտ է, նրանց սովորեցնում է իր գիւտովիւ-  
նը... Մէկ բռակէ հանդիսա չէ մնում. փորում է,  
կտրում է, յետոյ զալիս՝ կարգում, գրում. մէկ խօս-  
քով՝ հազար ու մէկ բան է շնուր, և երբ այստեղ  
է լինում, այդպէս գեղեցիկ էլ պարում է:

## ՆՈՒԽՈՒԾ

Իրաւ որ հիանալի երիտասարդ է եղել... իսկ այն  
միւսն ով է, Անուշ ջան, որ նրա հետ խօսում է,  
արդեօք չկիտեն:

## ԱՆՈՒԾ

Ո՞րը, այն զինուորականը:

## ՆՈՒՆՈՒՃ

Այն, ես առաջին անգամ եմ տեսնում՝ նրան այստեղ:  
ԱՆՈՒՃ

Միթէ զես չգիտես, նունուշ. նա մեր յայտնի  
վիպասան Արտաշէս Արամեանն է, որի զրուածքները  
մենք այնքան սիրով կարգում ենք:

## ՆՈՒՆՈՒՃ

Միթէ նա է, ի՞նչ ես ասում, Անուշ. երկի դու  
սխալվում ես, հոգիս:

## ԱՆՈՒՃ

Ո՛չ, ոչ, նունուշ, նա ինքն է, հաւատա. ինձ Լե-  
ռոնն ասաց. նրա սրտակից բարեկամն է:

## ՆՈՒՆՈՒՃ

Զարմանալի բան, զինուորական ու այդպէս զե-  
ղեցիկ զրող:

## ԱՆՈՒՃ

Ի՞նչ կայ զամանալու, սիրելիս, ում տուած է,  
տուած է:

## ՆՈՒՆՈՒՃ

Իհարկէ, լայց՝ այնուամենայնիւ ինձ համար ան-  
սպասելի էր:

## ՀՈՒԻՓՈ

Կացիր, Անուշ. չլինի թէ դա այն Արամեանն է,  
որի համար մի քանի տարի առաջ ասում էին, իր թէ պատերազմում սպանել են:

## ԱՆՈՒՃ

Այն, նա է, նա, չոփիսօ ջան. մի զիտնական յանձ-  
նաժողովի ղեկավար է նշանակուած այստեղ:

## ՀՈՒԻՓՈ

Միթէ:

## ԱՆՈՒՃ

Այն, Լեռնը պատմում էր, լաւ չհասկացայ... Աշ-  
խարհազրական թէ ազգազրական ինչ որ հետազօ-  
թիւններ, չգիտեմ:

Գնում, նստում է:

## ՀՈՒԻՓՈ

Ափսոս չէր, որ սպանէին... Ահա զեղեցիկ աղա-  
մարդը դա է, նունուշ ջան, թէ ուզում ես:

## ՆՈՒՆՈՒՃ

Ես պարոն Լեռնին աւելի եմ հաւանում:

## ՀՈՒԻՓՈ

Պարոն Լեռնը որտեղ, նա որտեղ:

## ՆՈՒՆՈՒՃ

Ո՛չ, ոչ, նրան միայն զինուորականի զգեստն է  
փայլ տալիս:

## ՀՈՒԻՓՈ

Աշխ, ի՞նչ ես ասում, նունուշ, զեղեցիկ մարդուն  
ինչ էլ հազցնես, նա զարձեալ զեղեցիկ կ'երևայ:

## ՆՈՒՆՈՒՃ

Դու ինչ ուզում ես, ասա, չոփիսօ, պարոն Լեռնը  
աւելի զեղեցիկ է:

## ՀՈՒԻՓՈ

Ո՛չ, զինուորականն է զեղեցիկ:

ԱՆՈՒՃ, մօտենալով:

Ի՞նչ էք կուռում. եկէք ես ձեզ հաշտեցնեմ:

## ՆՈՒՆՈՒՃ

Անուշ ջան, թէ արել կը սիրես, ուզիղն ասա. ով  
աւելի զեղեցիկ է պարոն Լեռնը թէ այն նոր եկած  
զինուորականը:

## ՀՌԻՓՍՕ

Տես, Անուշ, առանց կողմիապահութեան:

**ԱՆՈՒԾ**

Ասեմ՝ ով է աւելի գեղեցիկ:

**ՄԻՒՍՆԵՐԸ, միասին:**

Այս, այն:

**ԱՆՈՒԾ**

Ասեմ...

**ՄԻՒՍՆԵՐԸ, միասին:**

Խնդրում ենք:

**ԱՆՈՒԾ**

Ուղիղը...

**ՄԻՒՍՆԵՐԸ, միասին:**

Յասուկ խնդրում ենք:

**ԱՆՈՒԾ**

Այս երկուսից աւելի գեղեցիկը նո է, ով որ...

**ՆՈՒՆՈՒԾ**

Ով որ...

**ՀՌԻՓՍՕ**

Ով որ ի՞նչ...

**ԱՆՈՒԾ**

Ով որ... ով որ մէկն ու մէկիդ ուղէ...

**ՓԱՓԱՉՈՒՄ Է:**

**ՆՈՒՆՈՒԾ**, յարձակուելով:

Ա՛յս, փնտչ փշանալու:

**ՀՌԻՓՍՕ, նոյնպէս:**

Թոնդ քենդ ուղէ, անպիտան...

Բոլորիքիան ծիծաղելով վազում են. Անուշը մտնում է ոստոնը, իսկ Կունուշն ու Հոփիսօն, պա-

տահելով մի խումբ երիտասարդների, նրանց հետ խօսակցելով կամաց-կամաց զուրս են զնում աջ կողմից:

## ՏԵՍԻԼ Թ

**ՄԱՐԳԱՐԻՏ**, պարանոցին մարգատաշար մանեակ, ԱՐ-ԿԱՐԻ

ԱՐԿԱՐԻ, շասապով զալիս է ձախ կողմից, բայց տեսնելով Մարգարին ոստոնից զուրս զալիս եւ կանդ տանելով, առանձին:

Ա՛յս, կին...

**ՄԱՐԳԱՐԻՏ**, իշնելով ոստոնի աստմաններից:

Ա՛, զու այստեղ ես... Ի՞նչպէս է որ մենակ ես մնացել:

[ Երես, Երես 18 ]

[ Երես 22, բառ 7 գլուխից: ]

## ԱՐԿԱՐԻ

Ուղիղ:

**ՄԱՐԳԱՐԻՏ**

Ուրիշ ոչինչ... (Նկատելով թեմի խորքում է-րդ տեսիլի օրիորդներին, որոնցից Գայթանէն ասում է՝ Ահա Մարգարիտը:) Ես այն օրիորդների հետ կը լինիմ... (Առանձին եւ հեղնօրէն:) Ես քեզ սիրում եմ, ասում է... Գնում է դէպի օրիորդները, բայց տեսնելով Հեղի-

նէին, որ առաջ է վազում, զարմացած կանգ է  
առնում: Միւս օրիորդները, պատահելով մի քա-  
նի երիտասարդների, նրանց հետ խօսակցելով  
անհնտանում են:

**ԱՐԿԱԴԻ,** առանձին:

Ասուած այս կնոջը կատարեալ պատիժ է ստեղ-  
ծել ինձ համար:

Գուրս է գնում աջ կողմից:

### ՏԵՍԻԼ Ժ

#### ՄԱՐԳԱՐԻՏ

Այս ուժին եմ տեսնում:  
ՀԵՂԻՆԵ

Մարզարիտս...

#### ՄԱՐԳԱՐԻՏ

Իմս ՀԵՂԻՆԵ, դու հօ:

ՀԵՂԻՆԵ

ՀԱՂԻՆ...

Արբով համբուրում են միմևանց:

[ Ե- այս, էքս 23 ]

ՆԿԱՑՈՒԱԾ ՎՐԻԹԱԿԻՆԵՐ

ԵՐԻՆ: ՏՈՂ: ՏԱՐՈՒԱԺ Է: ՊԻՆՈ Է:

1	5	ՎԵՐՆԵՐ	Առժամանակ
		Առարում են:	Այ-
			գին լուսաւորած
			է լազմերներով,
			իսկ ոսոնզր—
			ջահերով:
38	14	«	ՀԱՄԱՐՈՒՄ
41	11	«	ՄԻԿԻՆ
70	2	«	ՃԵԿՔԸ
72	9	«	ՎՈՒԳԵ
111	9	ՎԵՐՆԵՐ	ՄԱՐԳԱՐԻՏ,
			ՀԵՂԻՆԵ
			զողնոցով, ՀԵ-
			ՂԻՆԵ
116	11	ՎԵՐՆԵՐ	ԿԱՐԵԼԻ Է,
155	5	«	Կ'ԱՇԽԱՏԻՄ
			Կ'ԱՇԽԱՏԻՄ

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

«ԱՄՈՒՍԻՆԵՐ» կատակերգութեան առաջին ներկայաց-  
ցումից զոյացած գումարը, 822 ռ. ևս յանձնել էի Կովկա-  
սեան Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդին ի  
պահպանութիւն, մինչեւ որ Հայ Դրամատիքական Ընկերու-  
թիւնը մի օրինական՝ իր յարատեռութիւնն ապահովացնող  
կազմակերպութիւն ունենայ: Երբ Կովկասեան Հայոց Բա-  
րեգործական Ընկերութիւնը կերպարանափոխուեց և այդ  
փողերը վերադարեց ինձ իր տոկոսներով, բոլոր գումա-  
րը ևս գրի Թիֆլիզի Առևտրական Բանկը աճեցնելու:

Հայոց Դրամատիքական Ընկերութիւնը օրինականապէս  
կազմակերպութիւնը յետոյ, վերոյիշեալ գումարը, որ հասել  
էր 1418 սուր. 96 կոտէկի, յանձնեցի այդ Ընկերութեանը  
այն պայմանով, որ դրամագումը անձեռնմխելի մնայ, իսկ  
նրա տոկոսները գործադրութին Ընկերութեան օգտին՝ Վար-  
չութեան բարեհաճ տնօրինութեան համաձայն: (Տես «Ար-  
ձագանք» շաբաթաթերթի 1890 թ. № 32 և «Մշակ» լրագրի  
1890 թ. № 125 և 1902 թ. №№ 128 և 130.)

Գ. Ա.

[ Երես 4, սուր 14 վերեւեց:]

Դու այդպէս ասա, բայց ես ինձ յանցաւոր եմ  
զգում նրա առաջ. երեսին ուղիղ նայել չեմ կարո-  
գանում... Եւ այս ամենը քնն համար, քո սիրոյ հա-

[ Եւ այն:]

ԴԱՐՁԵԱԼ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես: Տող: Տպուած հ: Պէտք հ:

5	2	ՎԵՐԵՒԵց	ոքի՛:	ոքի՛:
13	8	«	Շատ, շատ	Շատ և շատ
21	5	«	Ճիշդն	Ճիշդն
23	4	ՆԵՐՆԵՒԵց	հրեշտակ	հրեշտակ
36	2	ՎԵՐԵՒԵց	յիշատակ	յիշատակ
37	11	«	պատերտզմի	պատերազմի
40	7	«	բացվում	բացվում
44	12	ՆԵՐՆԵՒԵց	արդեօք,	արդեօք,
49	3	ՎԵՐԵՒԵց	շատերը	շատերը

Խ. Արև Ժ

Երես: Տող: Տպուած հ: Պէտք հ:

50	4	ՆԵՐՎԵԼԻՇ	ՀԵՐԱ	ՀԵՐԱ
51	10	ՔԵՐՆԵԼԻՇ	Մարզարախն	Մարզարախն
54	14	ՆԵՐՎԵԼԻՇ	ՃՊՈՒՄ	ՃՊՈՒՄ
62	2	ՔԵՐՆԵԼԻՇ	ՕՄԱՐԻՆԵՐ	ՕՄԱՐԻՆԵՐ
77	4	"	ՀԵՄ	ՀԵՄ
93	2	ՆԵՐՎԵԼԻՇ	ԹԵԿՆ ՉԱՄ	ԹԵԿՆ ԵԱ ՉԱՄ
96	12	"	ՀԱՍՏԱՏՈՒՄ	ՀԱՍՏԱՏՈՒՄ
106	10	ՔԵՐՆԵԼԻՇ	ՄԹԵՆԸ...	ՄԹԵՆԸ...
115	6	"	ԱԱՆԴՎՈՒՄ	ՄԱՆԴՎՈՒՄ
131	7	ՆԵՐՎԵԼԻՇ	ԵՂԲԱՋՐԱ-	ԵՂԲԱՋՐԱ-
147	5	ՔԵՐՆԵԼԻՇ	ՄԱՐԳՈՒԹԻ	ՄԱՐԳՈՒԹԻ
150	12	"	ԽՆԴՐԵՄ	ԽՆԴՐԵՄ:
155	6	ՆԵՐՎԵԼԻՇ	ՊԱՄՐԱՍՈՒԵՄ	ՊԱՄՐԱՍՈՒԵՄ
157	12	ՔԵՐՆԵԼԻՇ	ՀԱՄԲՈՒՐՈՄ	ՀԱՄԲՈՒՐՈՄ
159	"	ՆԵՐՎԵԼԻՇ	ՀԱՍԼԿԱՆՈՒՄ	ՀԱՍԼԿԱՆՈՒՄ ԵՄ
164	9	ՔԵՐՆԵԼԻՇ	ՄՆԱՍ	ՄՆԱՍ
172	14	ՆԵՐՎԵԼԻՇ	ՊԱՄԱՆԱԼՈՒ	ՊԱՐՄԱՆԱԼՈՒ
173	8	ՔԵՐՆԵԼԻՇ	ՆՈՒՆՈՒՀ ջան	ՆՈՒՆՈՒՀ ջան
175	5	"	ՄԱՐԳՈՒԹԱՉԱՐ	ՄԱՐԳՈՒԹԱՉԱՐ
"	"	ՆԵՐՎԵԼԻՇ	ՆԿԱՏԵԼՈՎ	ՆԿԱՏԵԼՈՎ

## ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒԽԴՈՒԿԵԱՆՑԻ

### ԹԱՏՐՈՆ ԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՆԵՐԸ

Ա. 4.

ԳԻՇԵՐՎԱՆ ՍՈՅԻԾ ԽԵՐ է, կատակեղութիւն մէկ արարուածով. Երկրորդ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 30
ԽԱԹԱԲԱԼԱ, կատակեղութիւն չորս արարուածով. Երկրորդ սպազրութիւն, ուղղած. . . . .	— 50
ՀԱԿԱՆ ՊԵՏՐՈՎ ԽՉՆ ԷՆ ԿԻՆՔՈՒՄԸ, կատակեղու- թիւն մէկ արարուածով . . . . .	— 30
ՔԵԼԻ ՄԵԿ ԶՈՀ, կօմեգիա (կատակեղութիւն) հինգ արարուածով. Երկրորդ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 1
ՊԵՊՈ, կատակեղութիւն երեք արարուածով. Երրայ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 50
ԳՈՆԴՈԾ ՕԶՈԱ, կատակեղութիւն երեք արարու- ածով. Երկրորդ սպազրութիւն, ուղղած . . . (Տպա- գրուում է). . . . .	— 50
Ո.ՄՈՒԽԵԿՆԵՐ, կատակեղութիւն չորս արարուածով. Երրորդ սպազրութիւն, ուղղած . . . . .	— 1

Պատառվում են Թիֆլիզում՝ ԿԵՆԴՐՈՂԱՆԱԿԻՆ, ԿՈՂԿԱՍԵԱՆ  
Եւ «ԳՈՒՅՏՏԵՆԲՂՐԴ» գրավաճառանոցներում, և Թաթում՝  
Տհկին Մ. Սունդուկեանցի գրավաճառանոցում:

«Ազգային գրադարան



NL0357869

56.257

